



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



891.99-92

---

G-93

WP

1

~~17th May 1754~~  
1  
Q. 17th May 1754

1	5	9
8	3	4
6	7	2

НОР

Ковне  
тесни

ЕРГАРАН



*[Faint handwritten signature]*

891.99-192


G-93

ՆՈՐ

# ԵՐԳԱՐԱՆ

ԿԱՄ

## ՔՆԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳՈՑ

ԵՒ

ԲԱՆԱՍՏԵՂԵԱԿԱՆ ՔԵՐԹՈՒՄԾՈՅ

ՍԿՍԵԱԼ ՑԱՌԱԶՆՈՅ ՏԱՐԵԴԱՐՁԷ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԻՆՉ ՑԱՅԺՄՍ

ԵՐԹՆԵՐՈՐԴ ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի ՂԱԼԱԹԻԱ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻԷԼԵՆՏԻՍԵԱՆ

— 1870 —

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

11781-222

и лойс онцайсац

891-42

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱՑ

ԳՐԱՎԱՃԱՌ

ԵՌՎՍԷՓ ԳԱՅԱՅԵԱՆ



25324-61

2001

## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ամեն Ազգ ամեն ժամանակ իւր բանաստեղծութիւնն և իւր երգիչները ունեցեր է, որք իրենց ապրած ժամանակին հանդամանաց համեմատ հասարակութեան զգացման թարգման կանգնելով՝ երգեր են կամ ողբացեր ժողովրդեան մը, ազգի մը բաղդը կամ թշուառութիւնը: Ուստի իմաստունք մեծ կարեւորութիւն կրնձայեն երգերու, և ազգի մը պատմական ճշգրիտ և կենդանի նկարագիրը կը համարին զանոնք:

Ի հարկէ մեր ազգն ալ ունեցեր է իւր ազգային կեանքը քնարներու վրայ երգող բանաստեղծներ, որոնց ամենէն ընտրելագոյն և հնագոյններէն հազիւ մէկ քանի պատառիկ աղատեր են ժամանակին պմենածախ ժանեաց ձեռքէն մեր Բորենացի քերթողահօր շնորհիւ. իսկ վերջին դարերու համար երգերու նշանաւոր հաւաքածոյ մը չէ հնար ընծայել ազգին. բայց ՚ի անոնցմէ որ ասդիս անդին զանազան զրոյց անկիւնները ցրիւ կը գտնուին:

Շատ տարի չկայ, որ Բեդրսպուրկի Տփլիսու մէջ ազգային երգոց հաւաքածոյներ հրատարակուեցան, որոնք բուրն ալ վերջին ժամանակի գործեր են, բայց և այնպէս գովելի եւ բազմօգուտ աշխատութիւն:

Երանի՛ թէ ուրիշներն ալ, աւելի նայաստան աշխարհին զանազան դաւառները երգում երգերն հաւաքէին և տպագրութեամբ ՚ի լոյս ընծաւէին ՚ի վայելք բանասիրաց:

Այսու մտօք ՚ի լոյս ընծայուեցաւ այս Երգարանը որ գլխաւորապէս մօտ տարիներս Տաճկաստանի և Ռուսաստանի մէջ յօրինուած բանաստեղծական երգոց հաւաքածոյ մ'է, ուրկից ազգայ բանասիրութիւնը մեծապէս լոյս պիտի առնէ մեր ժամանակները հատարակոց վրայ տիրող զգացմանց և գաղափարաց վրայ:

X	Յ՛խ Հայաստան , Հայաստան	4
X	Յ՛րի՛ք Հայկազունք , յառաջ ընթանանք	5
X	Յղատ Ստուռածն այն օրից	5
	Յհա յերկնից ժպտի Ստուռած քաղցր առ մեզ	8
	Յկռակին մեծ կարասին բոլորալէքն են բազմեր	40
	Յհա բաժակ ուրախութեան	41
X	Յհա հրեշտակ ոսկեփետուր թռուցեալ փարձուստ երգնա	45
X	Յնի քաղաք նստէր կ'ուլայ	45
	Յռ ընկալ 'ի գիրիզ մայրք Հայաստան	47
	Յրի՛ք Հայկայ քաջ սերունդք	48
X	Յրկածք Հայոց ժամանակին ընդ անիւ	21 X
	Յրթնցիր ո՛ւ Հայ , նոր արշալուստլ	22
	Յհա աղանին , նյեան տապալին	25
X	Բանգ . . . որսան բարձուստ բոմբիւնք յայրարտեան	28 X
	Գարուն Հայաստան գայ ծաղկապսակ	30
	Գարունն էր կենացս դեռ	52
	Գարանամուտ կամ վաղուց էս լռակի	54
	Գռ նոր Հայրենիք , դեռ նոր աղբութիւն	55
X	Գռք մեջէն էս քովէն , անցնիմք գիմաց փոխենք	57
	Ես դաւար ծառ մը տնկեալ 'ի Հայկայ	42 X
	Երբոր բացուին դռներն յուսոյ	43
	Եկաւ ժամանակ բարեկամ բազդին	44
	Եղբայր մինչեւ երբ այսպէս լուռ տխուր	46
	Է՛յ սերվէրի կերտուն մեզամ	51
	Նրգ սիրոյ երգ Հայրենի քեզ կազդուի Հայաստան	52
	Չերկնաբերձ գլխով սառնապատ լերին	55
	Էր դու այսպէս ո՛ սեաւ գիշեր	57
	Ընկերք յաղթութեան ժամն արգ հաս է	61
	Թէ իմն ալեօր Հերքս սննային	62
	Քէ իմն Հայրենեաց քնար սգաւօր	64

Թէպէտ ես մեծ Կանն նշան եմ	68
Թէ Հայկողանց սակի դարուն սակի քնարք ըւեցին	69
Ժամէ Հայեր, արիք ձեր բազդն ողջունել	71
Ի բլուր ձայնից բնութեան շքեղ	72
Ի դուր ամօքերն որոտացին	74
✕ Իմ Հայրենիքս զիս կը կանչէ	76
Իմ սիրելի զաւակունքս	78
Ի խումբ 'ի պար Հայրենասէր մանկուհիք Հայ	80
Իջէ զուարթունք և 'ի ձեր թեւս ապաստան	84
Ի քեզ անկայ Հայաստան	85
Լուս և տխուր դաշտեր գեղեցիկ	86
✕ Սրտունկ ուստի կուգաս ծաւայ եմ ձայնիդ	88
✕ Հայաստան երկիր դրախտավար	90
Հայաստանի բարձր ու շքեղ սարերէն	92
✕ Հայրենեաց սիրով վառուած վէճ որտեք	93
Հայաստանեաց սեւ տխրագին օրերը	93
Հրեշտակ մատեաց մրտենիներ 'ի ձեռին	97
Հայուն աշքէն ալ Հնուէ դառն արտուրք	100
✕ Հայկազունք պար բունենք	101
Հուր բարկութեան համայն Հայոց	102
✕ Հայաստան քաղցր իմ Հայաստան	103
Հովիտ ծածկեալ 'ի ծոց լեւանց	110
✕ Մայր արաքսի տերերով	111
✕ Մանկութեան օրեր երազն նման	116
Մեր Հայրենեաց փախուկ հողեր	119
✕ Մեր սիրուն հայրենեաց բեկուր շողջուղ	121
Մինչ գեռ գիշերոյ խաղաղ թագուհին	123
Մինչ Հայրենի զուարթ յափանց տարագիր	124
✕ Մնացեալ բարեաւ սէր իմ	125
Մուսայք մատեաց ելէք 'ի դաշտ	126
Մինչ ծովամած կան 'ի խշտիս արփուշն սլաք բաց զեն	129

Միզանն 'ի վեր 'ի մասին	453
Յառուր միում մէկ քարահաս	456
Նուաղեալ կենաց իբրեւ յոյս	440
Նատիր շիրին ասեմ քեզ մէկ օր մեր ասն թարթումը	442
Նուրու Ֆէրրի միհրու մահըն	448
Ողջոյն քեզ ո՛ր դաշտը և սիրուն ափունք	450
Ոչ զուարթ դարուն ոչ օր մի 'իրուն	451
Ո՞չ 'ի նչ անոյշ 'ինչ դեղեցիկ	455
Ո՛հ 'ինչ անուշ և 'ինչպէս զով	454
Ողջոյն ընդ քեզ Հայաստան	455
Ո՞վ քաջաղունք, ձեզ հրատէր	457
Ո՛ սգաստերեւ յեցեալ նոճւոյս 'ի ստորս	459
Ով մեծասքանջ դու լեզու	461
Որդիք Հայկայ որդիք փառաց	463
Չեն օրերս մեզ օր խնդուլթեան	466
Պիր թագըմ սասե՛ կիւրէք մահատուն փայրի սիւսեան	467
Սա տխուր վիճակ տարաբազդ ազգիս	468
Տէր կեցո դու դ՛այս	470
Տուք 'ինձ ճերմակ ճախրապսց երիվար	474
Տարի մ'ալ անցաւ . գնաց սահեցաւ	475
Տանն Օսմանեան արեւ պայծառ	474
Րարձրացս տէր 'ի յերկրի զփառս օսմանեան	476
Քու սուրբ շիրմիդ վրայ ուր վո՛հ կայ թողուած	478
Ստար երկիր թափառած	479
Մ'ն մեր նախնի դարուց կարգամք հրրուէր	480
Ողջոյն քեզ, ո՞վ երջանիկ օր	485
Մնցաւ տարին, Հայոցս էլ փառք ընցաւ հիւտ	489
Ստար ափունք ցրուած 'ի սփիււ	491
Լացէք պատանիր և կուսանք Հայոց	492
Երկիր քաջազանց, քանի՛ սուգ աչեր	498
Ոչ այնպէս հրճուի յորբանի մանկիկ	199





UNSMOOTHED

## ՀԱՅԱՍՏԱՆ

Ընդ ինչ Հայաստան, Հայաստան,  
 Ընդ էր կորուսեր տէրրդ,  
 Եղեր այլոց ապաստան,  
 Թառամեց վարդ պատկերրդ =

Ո՛չ քեզ պէս բարեպաշտ կար,  
 Ո՛չ վանքերիդ պէս վանքեր,  
 Ո՛չ դաշտերիդ պէս դաշտ կար,  
 Ո՛չ հանքերիդ պէս հանքեր =

Հողրդ պաղաբեր՝ աղնիւ,  
 Քարերրդ ողջ ահուհք են,  
 Գետերրդ լիքն անթիւ,  
 Կարմրախայտ ձկուհք են =

Լերինքրդ ծաղիկ հագած՝  
 Իբր հարսնացեալ օրիորդ,  
 Եղերուքրդ վաստակած,  
 Ի՞նչ շահ, որ չունիս որսորդ =

Այգեացի ամէն մէկն ,  
Էր դրախտ Եդեմական .  
Բայց անբաղդութեան տէգն ,  
Խղեաց լարըդ կենսական :

Թող՝ թշնամիք բերկրին ,  
Մեր աչաց արտասուքով .  
Յուսամ՝ երկար չի՛ մնան ,  
Նրանք էլ ուրախ հոգւով :

Ըտուած ամենագէտ է ,  
Անահման արդարադատ .  
Անաչառութեամբ դիտէ ,  
Լաւին լաւ տալ , վատին վատ :

Ես եմ Սէյաթի կինն ,  
Մադաթեան տոհմի Ոսկին .  
Հայրենեաց կաթողինն ,  
Հաւատացէք իմ խօսքին :  
1858 , մայիս 28 'ի Վայոց ձորն :

ՏԻԿԻՆ ՄՍԴԱԹԵԱՆԵ՛Ց(\*)

(\*) Ոսկի Յովնէփեան անուն : Է տա բարեպաշտուհի ա.  
մուսին աղգային քաջահամբաւ երգչի Տ. Պետրոսի տէր Յովն.  
սէփեան Մադաթեանց . Սէյեազ մականունները : Երանի՛ թէ  
Հայաստան շատ ունենար այսպիսի կաթողինք Հայրենեաց և  
ուսումնատենչ արկնայք :

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1861 ՄԱՅԻՍ 24

Արի՛ք Հայկազունք , յառաջ ընթանանք ,  
 Սահմանադրութեան նոր բարեւ մ'ալ տանք .  
 Որ Ազգն երբ զԱնի փրկարար գոչեց ,  
 Նոր հոգի , նոր կեանք Անոր պարգեւեց :  
 Եկայք բարեկամք , առ բարձրեալն Աստուած  
 Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղիսած .  
 Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ  
 Ազգն ու Սահմանադրութիւն :

Օրկանք , բռնութիւն վատթար վարչութեան  
 Բերին մահն 'ի դուռն Հայոց ազգութեան ,  
 Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց ,  
 Եւ կենաց ուղին մեր առջեւ հարթեց :  
 Յառաջգիմութեան բացաւ ասպարէզ  
 Ուր ամեն վայրկեան գոչել պարտ է մեզ .  
 Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ  
 Ազգն ու Սահմանադրութիւն :

Տնչեց ամենայն կարծիք անձնական ,  
Խեղդեց ամենայն ձայն անհատական ,  
Հրաւէր կարգաց Աստուծոյ ձայնին ,  
Աւաջնորդ լինել գործոց ազգային :

Այն որ Աստուծու ձայն տուաւ մեզի ,  
Մենէ թող առնու ձայնով մ'այնպիսի ,  
Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :

Հայերս անարգված գրկեց բարձրացուց ,  
Մարդկային կոչման մեզ արժանացուց ,  
Ընորհեց մեզի զոր ազատն Աստուած ,  
Մարդկու թեան երկրորդ նշանն է դրած :

Որուն շնորհիւ յարգ ստացանք մենք ,  
Անոր յարգ տալով ապրինք ու երգենք ,  
Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :

Դուն ալ Հայաստան , սիրուն Հայրենիք ,  
Ալ այսուհետեւ մի սրգար լռիկ .

Զի ալ քու որդիք նոր ոգւով բերկրեալ ,  
Զքեզ հարս կուզեն տեսնել զարդարեալ :

Ալ մի լար մայրիկ , լացդ 'ի պար փոխէ ,  
Եւ ձայնիւ քաղցրիկ որդւոցդ հետ երգէ ,

Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :

Հայեր , միանանք մեր մօրն հետ օրհնենք ;  
Ջանոնք որ մեզի տուին սուրբ օրէնք .

Սահմանադրութեան բարեաց փոխանակ ,  
Թող վարեն ուրախ կեանք մի փառունակ :

Թող և մեր որդիք հետ անոնց անուան ,  
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարգան .

Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :

Յ. Գ. ՍԵՎԱՅԱՆ

---

## Ե Ր Գ

### Ա Ձ Ա Տ Ո Ի Թ Ե Ա Ն

Ազատ Ատուածն այն օրից ,  
Երբ հաճեցաւ շունչ փչել .  
Իմ հողանիւթ շինուածքին ,  
Կենդանութիւն պարգեւել :

Ես անբարբառ մի մանուկ ,  
Երկու ձեռքս պարզեցի ,

Եւ իմ անդօր թեւերով ,  
Ազատութիւն գրկեցի :

Մինչ գիշերը անհանգիստ ,  
Օրօրոցում կապկասած .  
Լալիս էի անդադար ,  
Մօրս քունը խանգարած :

Խնդրում էի նորանից ,  
Բազուկներս արձակել .  
Ես այն օրից ուխտեցի ,  
Ազատութիւնը սիրել :

Թոթով լեզուիս մինչ կապերը ,  
Արձակուեցան , բացուեցան .  
Մինչ ծնողքս իմ ձայնից ,  
Խնդացին ու բերկրեցան :

Նախկին խօսքն որ ասացի ,  
Չէր հայր կամ մայր , կամ այլ ինչ .  
Ազատութիւն , դուրս թռաւ ,  
Իմ մանկական բերանից :

“ Ազատութիւն , ինձ կրկնեց ,  
Ճակատագիրը վերեւից .

“ Ազատութեան դու ղինուոր,  
Կամիս գրվիլ այս օրից ։

Ո՛հ , փշոտ է ճանապարհդ ,  
Քեզ շատ փորձանք կ'սպասէ .  
Ազատութիւն սիրողին ,  
Այս աշխարհս խիտ նեղ է ” ։

— Ազատութիւն , — գոչեցի , —  
Թող որստայ իմ գլխին .  
Փայլակ , կայծակ , հուր , երկաթ ,  
Թող դաւ դնէ թշնամին ։

Ես մինչ 'ի մահ , կախաղան ,  
Մինչեւ անարգ մահու սիւն .  
Պիտի գոռամ սիտ' կրկնեմ ,  
Անդադար , Ա.Ձ.Ա.ՏՈՒԹԻՒՆ (\*) ։



---

(\*) Տես Հիւ սխտախոյլ , 1859 . Թիւ 9 ։

# ՆՈՒԱԳ

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ա.

Ահա յերկնից ժպտի Աստուած՝ քաղցր առ մեզ,  
Մինչ ձիթենեաց ոստ ՚ի ձեռին դանք հանդէս  
Ուխտ ՚ի բազին սիրոյ՝ դնենք սհ սիրտք մեր,  
Իզճք մեր թռչին թող ՚ի լուսոյ կամարներ :

Ամպերուն մէջէն ,  
Կիսանուազ աստղեր .  
Պըսակ մեզ սփռեն ,  
Ու զուարթ նայուածքներ :

Սանճենք Արամեան ծն առէք ՚ի նուազ ,  
ԶՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆՆ՝ Հայուն յոյս ու փառք :

Բ.

Օրւարճացիք օրդիք սիրոյ Հայութեան ,  
Ահա՛ ձեր ձայնք հասին երկնից ՚ի խորան .

Փոխան փշոց՝ վարդք փխթեցան քո դաշտեր ,  
Եւ իրաւանցդ արդար՝ ՍԱՀՄԱՆ քեզ ետ Տէր :

Թո՛ղ աչքերդ դադրին ,  
Արցունք ցողելէն .  
Զի Հայկայ ճակտին ,  
Աստեղք շողշողեն :

Որդիք Արամեան , ծագի՛ Արշալոյս ,  
Դրօշմըն ՚ի ճակատ երկնաճաճանջ ՅՈ՛ՅՍ :

Գ.

Երբ յաւ երակս լուռ հսկես մայրդ Հայաստան ,  
Աչքերդ ուղղէ , արդ՝ ՚ի կամար Աստուածեան ,  
Տէս աստղն Հայուն ինչպէս խայտայ լուսաւառ ,  
Լիաբերան օրհնէ՛ զորդիսդ փրկարար :

Օ՛ն Մուսայք Մասեայ ,  
Ի մէջ դարերուն ,  
Հնչէ՛ք Հայկազանց ,  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ :

Որդիք դիւցազանց , օ՛ն գրկենք զիրար ,  
Օրհնենք մեր Սուլթանն՝ Ա.Զ.Ի.Զ վեհափառ :

Ա. Յ. ԱՅՎԱԶԱՆ



# ԵՐԳ.

## Բ Ա Գ Ո Ս Ի

Միտարիսն մեծ կարասին բոլորտիքն են բազմեր .  
Աւագ իշխանք , ծեր պարսնայք ժողովք են  
Հոն կազմեր ,  
Այս այս ժողովք են հոն կազմեր :

Սաստիկ է վէճն մեծ է խնդիրն զսր հոն տեղ  
կ'խորհին ,  
Թէ ի՞նչ կերպով դարման լինէր հիւանդ մեր  
աշխարհին ?

Այս այս հիւանդ մեր աշխարհին :

Մէկն այս կ'ըսէ մէկն այն կ'ըսէ կծագի լոյսն  
առտուն ,  
Ինձ լսեցէք տեսքք կը դուչէ աւանին պէտն  
արթուն .

Այս այս աւանին պէտն արթուն :

Թող թագն առնու կ'ըսէ Բաղոս և փառօր  
ապրի շատ ,  
Իսկ ցնծութիւնն լլլայ դշտայ և գահն ալ  
Մարտաշատ .

Այս այս և գահն ալ Մարտաշատ .

Այսպէս մեզի նոր ցնծութեան արեւներ կը  
ճագին ,

Առողջ կըլլայ մեր ժամանակ և նոր մեր աշ-  
խարհին :

Այն այն և նոր մեր աշխարհին :



## Ե Ր Գ

### ՈՒՐԱՅՈՒԹԵԱՆ

Ահա բաժակ ու բախու թեան ,  
Ի սէր յաւերժ միութեան ,

Զի՞ վայելու՛ճ՝ սրդիք Հայկեան  
Մէկտեղ հրճուին և ցնծան :

Կեցցէ՛ սէր և միութիւն  
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Վերցուր աչքըդ յերկնից կամար ,  
Փայլի հեռուն աստղ մի սրայծառ ,  
Եւ դու՛ն Հայ զարթիր սիրտ առ ,  
Հայոց բաղդըն ալ չէ խաւար :

Կեցցէ՛ սէր և միութիւն  
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Բաւ է այսչափ բաժանում ,  
Ըլլամք ուրախ և խնդում .  
Նախանձ , վրէժ , ձեզ թողում .  
Անդունդք և վիհք անհատնում :  
Կեցցէ՛ սէր և միութիւն  
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Փորձ մը ըրինք բաժանման ,  
Փորձ մ'ալ ընենք միութեան .  
Լեցուի փափուքդ Հայաստան ,  
Տես սրդիք քո միանան :  
Կեցցէ՛ սէր և միութիւն  
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Ինչ և ընեմք ինչ կերպ սունեմք ,  
Ո՞չք գիտեց թէ մեք Հայ եմք .  
Ո՞չք գիտեր թէ եզբայր եմք ,  
Արիք ծիծաղ դիմօք երգեմք :  
Կեցցէ՛ սէր և միութիւն  
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Ո՞ր բռնաւորն որ օրէնքներ ,  
Ար սպառուիրեն թէ մի՛ սիրեր .

Ազգիդ օգուան ու բարիքներ,  
Սիրոյ դահն է յերկինս 'ի վեր :  
Կեցցէ սէր և միութիւն  
Կրեմք մի սիրտ մի արիւն :



### Ի ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ

Ահա հրեշտակ ոսկեփետուր թռուցեալ բար  
ձուստ երկնաձեմ  
Հայոց բաղդին հեծեալ 'ի կառս բարձր գո  
չէ զուարթադէմ

Հղօր պատգամ,  
Ի վերսուստ դամ .  
Միութիւն հայք ,  
Եւ նոր ձեղ կեանք :

Տրտիեն ու ժգին և լանջք և սիրտ ,  
Խաղայ արիւն 'ի թինթ 'ի թինթ ,  
Մեզր կաթէ Սուրբ սէրն 'ի խինդ ,  
Մառաքինոյն 'ի Հայու սիրտ :

Սիրաբորբօք համբոյր բղխեն ,  
Արտասուաթօր աչկունք ցօղեն :

Արիք Հայկազունք ,  
Ի սէր փութասցուք .  
Եռանդուն մատիք ,  
Ի համբոյր հեղիկ :  
Տուք համբոյր մի եւս ,  
Բացէք զձեր թեւս .  
Տուք համբոյր մի եւս ,  
Սիրոյ է պարգեւս :

Կեցցեն յաւերժ վեհ Հայկազունք  
Անմահութեան սիրուն սերունդք  
Կեցցէ յաւերժ Հայկայ ոգին  
Մեզ են վկայ երկիր երկին :

Մեկաւ պարիսպ ժանտ նախանձուն ոչ 'ի շան-  
թից ահարկու ,  
Ս.ՍԼ յակնարկի և եթ սիրոյ վերաստացեալ  
կենսատու .

Երկին երկիր .  
Կան 'ի յակճիւ .  
Ընդ Հայ ազգիս ,  
Բիւր հրաշալիս :

Բացցին անդունդք սեաւ անյատակ ,  
Ճաճկել զբաղդին հին յիշատակ .

Ուխտենք ս'վ Հայեր ,  
Մի՛ո-լի-ն եւ Սէր :

Լիկէք եղբարք միաբան ,  
Մի՛ սիրտ ըլլանք անբաժան .  
Առաջնորդէ մեզ Օրէնք ,  
Քաջակիրթ ազգաց նման :  
Այս միութեան մեր վկայ ,  
Թող աշխարհի սրտայ .  
Դարուց 'ի դարս յիշատակ ,  
Տրե՛րար յիս այս ներկայ :  
Ուխտենք ս'վ Հայեր ,  
Մի՛ո-լի-ն եւ Սէր :

Չար նախանձու վատ կիրքեր ,  
Աւ ջը պղծեն մեր սիրտեր .  
Ի բաց 'ի բաց թշնամանք ,  
Առնունք սիրոյ համբոյրներ :  
Ընկեր զընկեր թող գրկէ ,  
Եւ իւր սրտին կցորդէ .  
Զերմ արտասուաց կաթիլներ ,  
Ուխտիցը վկայ գոչէ :  
Ուխտենք ս'վ Հայեր ,  
Մի՛ո-լի-ն եւ Սէր :

Մօր մեր թշուառ կաթողին ,  
Հայրենեաց տխուր ողին ,  
Տեսնէ զմեզ սուրբ սիրով ,  
Ու չ'հեծէ լալագին :  
Զուարթ դէմքով մեր վրայ ,  
Հաշտ ակնարկէ ու խնդայ .  
Մատուներն 'ի լար քաղցրալուր ,  
Ընդ մեզ երգէ ու ցնծայ :  
Ուխտենք ս'իլ Հայեր ,  
Միո-թիւն եւ Սէր :

Եւէ՛ , ողջոյն դիւցազանց ,  
Նուիրական դամբանաց .  
Աւետելով թող սփռէ ,  
Ճաղկանց փունջեր հետն առած :  
Ողջոյն ընդ ձեզ Դիւցազուներ ,  
Պաշտելի քաղցր աճիւնք .  
Աւետե՛մ Սէր Միո-թիւն ,  
Զոր ուխտեն արդ Հայկազուներ :  
Ուխտենք ս'իլ Հայեր ,  
Միո-թիւն եւ Սէր :



# ԽՄԲԵԱԿՆ

( Ի ՆԵՐՔՈՒՍ ՍԿՍԵԱԼ )

Արկածք Հայոց ժամանակին ընդ անիւ ,  
Փշրին տակաւ մինչդեռ սիրոյ համբուրիւ :  
Ուխտեմք 'ի Սէր եղբօր՝ զկեանս դնել գրաւ ,  
Օ՛ն անդր 'ի մէնջ այր ընկերին լարել դաւ :

Սրացաւ 'ի մէնջ բաղդն անհամբոյր ,  
Արդ նոր բաղդիս քաղցր է համբոյր .  
Եղբայր զեղբայր գգուէ Սիրով ,  
Ճոխն աղքատին մատչի Գթով :  
Էանց գիշեր՝ արդ առաւօտ ,  
Ի ցող ժպտին Մասեաց արօտ .  
Եւ վառ 'ի վառ շողշողելով ,  
Լոյսն արեգին ծրփայ 'ի ծով :

Հնագա մանկուներ ,  
Ղեհ քաջազուներ ,  
Ի գլուխ պրսակ ,  
Ի յաղթանակ :  
Առեալ նուագս ,  
յԱրուքս արագս .  
Օ՛ն փութապոյր ,  
Օ՛ն երգեսցուք :

Սէր և դու թ ,  
Մէր սլրսակ .  
Առ մեր բաղդ ,  
Հրաւիրակ :  
Ցնծասցեն ,  
Որք լըսեն .  
Թէ՛ « ուր Հայ ,  
Չիք՝ անդ վայ » :

ԵՂՍԱՋԱՐ ՄԵԼԻՐԵԱՆ

---

## Ի ՀԱՆԴԻՍ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

ԱՋԳԱՅԻՆ ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Արթնցի՛ր ո՛ Հայ , Նոր արշալուսով ,  
Տե՛ս ծագումն արփուոյն սլայծառ երեսով .  
Դարձած տարեւոր զուարթ շրջանէն ,  
Գայ պանծալ Հայոց վէհ բաղդին վրան .  
Պճնել զճակատ Սահմանադրութեան ,  
Ի փառս սիրատենջ Հայ ոգւոյն վսեմ .  
Կեցցէ՛ Միութեան Սիրոյ կենսատուն ,  
Կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն :

Ե՛կ Արեւելեան խրախճանաց Քնար ,  
Բաղխէ կնանտոցդ 'ի թել սիրահար ,  
Ճշմարիտ Հայուն շրթանց հետ երգել ,  
Օրս մեծ տարեդարձ օրէնդ բուժեան :  
Հասնի՛ արձագանքդ Հարցըդ դերեղման ,  
Ազգային ազատ Սահմանադրութեան .

Կեցցէ՛ Միութեան Սիրոյ կենսատուն ,  
Կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն :

Ո՛ր Հայ մոռնալով յիշատակդ արդար ,  
Կրնայ ուրանալ պարգեւներդ հազար ,  
Դու լոկ մխիթար Հայ սրտից ախուր ,  
Դու Ազատութեան սկիզբն և պաշտպան .  
Իրաւանց ծորան , Սիրոյ կերպարան ,  
Օրէնք Ազգութեան Սահման երկնատուր .

Կեցցէ՛ Միութեան Սիրոյ կենսատուն ,  
Կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն :

Բնութեան ամենէն դեղեցիկ ամիս ,  
Ճնաւ քեզ անձկով ծաղկապսակ Մայիս .  
Օրօրոցի մէջ ամբողջ մէկ տարի ,  
Լացի՛ր կզկզալով դառն հողմոց բերան ,  
Բայց գգուելով ձեռք Ազգասիրական ,  
Հասուցին փառանց առուրս տօնելի .

Կեցցէ՛ Միու թեան Սիրոյ կենսատուն ,  
Կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն :

Արդ 'ի բաց մեզմէ սեւ թշնամութիւն ,  
Մերձեկամք 'ի պերճ Սահմանադրութիւն .  
Տող սիրոյ համբոյր ճակտին Հայկազնեան ,  
Եւ 'ի փառս Ազգիս , Հայրենեաց միակ .  
Ուխտել միշտ մնալ ազատ թեւին տակ ,  
Մաղթել կալ հաստատ մինչ աւուրց փախճան .  
Կեցցէ՛ Միութեան Սիրոյ կենսատուն ,  
Կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն :

(Մ)ն հապա եղբարք Սահմանադրական ,  
Պարենք թեւ 'ի թեւ մէկ սիրտ մէկ բերան .  
Եւ դու զանի սիրոյ թելերդ ո՛րքնար ,  
Որ երբեմն տխուր հեծէիր ցաւօք .  
Օ՛ն ազատութիւն . ցնծութեան փառօք ,  
Երգէ՛ քաղցրանուագ մեզ հետ ծափահար .  
Կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն ,  
Ի Հնորհս ՕՍՄԱՆԵԱՆ պետութեան արթուն :

Ն. Ս. ՄԵՂՊՈՒՐԵԱՆ

ԱԻԵՏԱՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՌ

ՀԱՅ ՏՂԱՅ

Ընա աղաւնին ,

Նայեան տապանին :

Թուած Մասեաց մառախլապատ երկինքէն ,  
Հրաւէր կարգայ աղատութեան Հայրենեաց .  
Ասդիս անդին թափառական Հայերուն ,  
Չայն աւետեաց Հայաստանի բերանէն .  
Ողջն կուտայ Հայոց , ողջն նոր փառաց ,  
Հերիք կրօէ այսչափ հարիւր տարուան քուն :

Օն աչք ,

Մեր Հայրենեաց հրաւիրակին .

Ախանջ ,

Զի սրտգամ է այս երկնային :

Ըրթնութիւն արդ պանդուխտ Հայեր ,  
Հասաւ կանցնի Հայոց օրեր .  
Առէք ողջն աղատութեան ,  
Ողջն սիրոյ եղբայրութեան .  
Վերջ վիճակի գերութեան ձեր ,  
Յերկնից Հայոց այս է սրտուեր :

Գարեթէ ՚ի վեր արիւն արցունքով ,  
 Թռաւ հայրենեաց քաղցր աւերակներ .  
 Թռչող հրեշտակն ալ ահա՛ ինձ ընկեր ,  
 Վկայ է խօսքիս խնդում՝ երեսով :

( ՀՐԵՇՏԱԿՆ )

10 Ըյո՛ւ այո՛ւ Հայ սղաք ,  
 11 Վկայ ես ձեր հրեշտակ .  
 Հայաստանի նոր գարնան ,  
 12 Ծաղիլունքն ահա՛ ձեզ կուտամ :

13 Օ՛ն արդ քորք և եղբարք որդիք դիւցազանց ,  
 Զեա թռչներ գարնան գեղ դայլայլիկով .  
 Սուրանք փոյթ՝ դիրկ հայրենի փառաց :

Հոս թողունք հոս ,  
 Վատթար սրտեր .  
 Հեա առնունք սէր ,  
 Հոս թողունք հոս .  
 Ատելութիւն .  
 Ոտխն Հայուն ,  
 Հոս թողունք հոս :

Վզգերնիս մէկ , լեզուիս մէկ , հաւատքնիս  
 մէկ ,

Հայրենիք մէկ , հայրերնիս մէկ , փառքերնիս  
մէկ .

Ինչո՞ւ չըլլայ սրտերնիս մէկ :

17 Եւ ա՛րդ հոս ՚ի սեւ կրից զինաթափ ,

18 Ամենքս ալ հաւասար Հայ եղբայր .

19 Մեր զէնքը խաչն ՚ի կուրծս վառ ՚ի վառ ,

Օն զհետ հրեշտակիս ծափ ՚ի ծափ :

20 } Օջարնենք տաւիղ ոսկի քնար ,

Սրբենք դառն ցաւի աչեր .

21 Աւխոյժ ՚ի սիրտ , ձայն վար ու վեր ,

22 Ազրի Հայոցս Աւետաբեր :

23 Ուրախու թիւն այս Հայոց դար .

24 } Օն պար խաղ ,

Մէն մ'ի ձախ .

Մէն մ'ի յաջ ,

Եւ յառաջ ,

25 Ուրախու թիւն այս Հայոց դար :



ՎՐԷԺԻՔ

Բանք . . . որոտան բարձուստ բոմբիւնք ,  
 յԱ յրարատեան դաշտն 'ի վայր .  
 Արի արանց արիւնք յեռանդն առատանան  
 'ի հրազայր :  
 Հրաւերք հայրենեաց հռչակին 'նդհանուր ,  
 Հողիք Հայկազանց բորբոքին 'ի հուր .  
 Որք երկնաւորին սրտակին էք կարօտ ,  
 Որք երկնաւորին փառաց երկնայորդ :

Հայտ' օն արի արանց մանկուներ ,  
 Հայրենավրէժքդ Հայկազունք ,  
 Հայտ' օն 'ի զէն գունդագունդ .  
 Յեռեալ 'ի պար թունդ 'ի թունդ  
 Ի զէն 'ի վրէժ , օն անդր յառաջ .  
 Ի զէն 'ի վրէժ , մի' ձախ մի' յաջ :

Օն անդր յառաջ ,  
 Մի' ձախ մի' յաջ ,  
 Օն անդր յառաջ .  
 Յառանջ , յառանջ .  
 Հայտ' օն , յառաջ :

Հայկեան փանդոանց որտընդոսա դռնչին  
բարբառք մարտագոռ .  
Դառնագոռոչ անդրաձայնէ Պարսիկ կերկերն  
'ի շէփոր :

Շարժեն հրեշտակք թեւս լուսադողդոջս ,  
Ճիւղաղք 'ի ճիւք սուր կայտուն 'ի դըժոխս .  
Շաինդն շանթառաք զեթերօք փարի ,  
Սարսափեն սանդարք 'ի խօլ խաւարի :  
Հայ' ճն արի արանց մանկունք կայլն :

Սամիկոնեան սաւառնեցաւ դրօշուն յայերս  
գոգ ծալ ծալ ,  
Ի ճակատուց 'ի թշնամեաց՝ սա ոչ գիտաց  
յուրաստ կալ .  
Հեծեալ հրանըժոյգ վեհին Վահանայ ,  
Վըրէժ կանչէ արեան Կարմիր Վարդանայ .  
Փռնչեալ բոցաշունչ գամիր 'ի դարչապար ,  
Ռազմամուտ վարդի յանժոյժ երիվար :  
Հայ' ճն արի արանց մանկունք կայլն :

Ի դուպարել մարտայարդար գարչապարաց  
Արամայ ,  
Գոռան Կորդրիք , Մասիք սարսեն , հռնչեն  
սահանք Երասխայ :

Ի գռոհն ՚ի գռոհն տալ բիւրուցն ստնատրոփ ,  
Տատանին դաշտակէք , յառնէ շռինդն ապշոպ .  
Կռուփ առ կռուփ կոփեն կմբբեայք , տէգ  
առ տէգ ,  
Դշորդ առնուն տարերք կորովեացն ՚ի վէգ ,  
Հանո՛ ճն արի տրանց մանկունք և այլն :

---

## Ի Հ Ա Ն Դ Ի Ս Ի

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

### ԱԶԳՍՅԻՆ ՍԱՀՄԱՆՍԴՐՈՒԹԵԱՆ

Գարուն Հայաստան գայ ծաղկապսակ ,  
Զայն ողջունելու ելէք Հայ զաւակք .  
Անցան սեւ օրեր , օրեր մահահոտ ,  
Հայոց նոր բաղդի ծագի առաւօտ .  
Սահմանադրութիւնն ուղեցոյց կենաց ,  
Սիրոյ դրօշակով եկաւ զարդարուած :

Որ փայլի Արեւ սուրբ Հայաստանի ,  
Որ Հայ Ազգութիւնն փառօք վերածնի .  
Կեցցեն անձնուէր որդիք Հայկազունք ,  
Կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն :

Կաթիլ մ'արտասուք հեղունք աննախանձ ,  
Ի սուրբ յիշատակ մեր քաջ նախահարց .  
Կաթիլ մի քրտինք հեղունք անխնայ ,  
Ի նպատակ Ազգիս յուսոյն ապագայ .  
Եւ ոչ իսկ խնայե՛նք բոլոր մեր ճգունք ,  
Կրօնի Հայրենեաց և Ազգի սիրոյն :

Որ փայլի Արեւ . . . եւն :

Հայեր , միանա՛նք , կ'ընենք առաթուր ,  
Ամէն ուժ և նենգ , պարիսպներ ամուր .  
Երկինք զայս մեր սուրբ կ'օրհնէ Միութիւն ,  
Ի Աստուած Գրիգորի զօրավիգ արթուն .  
Հասցա իրախուսինք , կուրծք տանք անվէհեր ,  
Ընկճե՛նք կործանե՛նք , ամեն արգելքներ :

Որ փայլի Արեւ . . . եւն :

Ունիմք սիրտ արի , սգի եռանդուն ,  
Ժառանգ մնացած բազուկ աննըկուն .  
Դարերու յաղթող Ազգի զաւակ ե՛նք ,  
Ամէն նախատինք Օն փութով ջնջե՛նք .  
Անմահ Հայութեան կանգնե՛նք յաղթանակ ,  
Հայոց Մօր ճակտին հիւսե՛նք պերճ պտակ :

Որ փայլի Արեւ . . . եւն :

## ԱՐՏԱՒԱԶԴ

Ի Վ Ի Հ Ն Մ Ա Ս Ե Ա Յ

Գարունն էր կենացս դեռ ,  
 Երկինք ինձ նայէր հաշտ .  
 Ինձի համար ձորն լեռ ,  
 Կ'ծաղկէր և դալար դաշտ :

Թագն էր զարդն իմ վարսիս ,  
 Քաջաց մէջ էի պերճ .  
 Էռտ գիս դրկեց Մասիս ,  
 Փառքիս վաղ հասաւ վերջ . . . :

Հեծայ 'ի սեաւ իմ վեհ ,  
 Անցայ լուրջ մարդերէ .  
 Արսալ 'ի գինայ դեհ ,  
 Տիռ եւ պարարտ երէ :

Աղջուն լերինք ու ձոր ,  
 Աղջոյն առին ծառեր .  
 Անշունչ նիւթերն բողբ .  
 Լեզու էին առեր :

Բաբէ , յանկարծ կասեաց ,  
Ոտք իմ աշխոյժ սեւոյս .  
Կալան զիս քաջք Մասեաց ,  
Տարան 'ի վեհն անկոյս :

Փախաւ , թռաւ արեւս ,  
Ողբայ զիս , Սաթինիկ ,  
Առ իմ վերջին բարեւս .  
Ազնիւ իմ Հայրենի :

Ինչու բոլոր մարդիկ ,  
Ինծի դէմ են ելեր .  
Ինչու այնպէս սաստիկ ,  
Կ'գողան մրձեր , սալեր :

Ընդերձ եմ իմ կապէս ,  
Ի զուր Ազգս կ'խորհի .  
Կրնայ հեզ մ'ինծի պէս ,  
Վախճան տալ աշխարհի :

Անէճք կը կապեն զիս ,  
Շքնիկս , զուր կը մաշես .  
Ակուադ , զանուր վզիս ,  
Կապեց հայր Արտաշէս :

Խիտտ , խիտտ են հօր մ'անկէ ծք ,  
Դառն են և ահագին .  
Անով կըլլան ո՛ մեծք ,  
Ոչ ինչ փառք ձեր թագին :



## Մ Ա Ն Ո Ւ Կ

ԵՒ

### ԱՐՏՈՒՏԻԿ

1. Դարանամուտ կամ վաղուց ես լռիկ ,  
Եւ ոչ գիւրով քեզ բերի ձեռք հիմիկ .  
Պէտք է երգես իմ սիրուն Արտուտիկ ,  
Որ դու տաս սրբախ զուարթ քու դայլայլիկ :  
Մի գողար 'ի տես վանդակիս անել ,  
Ճաղկօք եմ պատած ես անոր թելեր .  
Դու քեզ մարգերու կրնաս մէջ կարծել ,  
Երգէ ինծի հետ թըռչնիկ սիրաւեր :

2. Երբ դայ նոր գարուն բընու թեան նոր սյժ ,  
Եւ մեզի պայծառ օրերու տայ յոյս .  
Գողտրիկ մարմանդին մէջէն ձայնդ անոյշ ,  
Զամբիժ քու սիրոյդ կը տօնէ զիմ ճոյս :

Այլ իմ քովս այժմիկ ընդէր կաս լըռած ,  
 Կամ Մինչ ես ձայնովս եմ քեզ աղերսարկու ,  
 Ա՛հ , գուցէ ես քու ձայնիկ չեմ լըսած ,  
 Թող ես փորձ փորձեմ , ճ՛ն երգէ՛ և դու .  
 Կամ Ո՛հ , գուցէ ես քու անունն չեմ ուսած ,  
 Թող ես փորձ փորձեմ , ճ՛ն երգէ՛ և դու :

3. Վախ , այսքան տղերս չը գըտին շնորհ ,  
 Եւ դու կաս մնաս միշտ խուլ ու պապանձ ,  
 Արդ թըռիր դնա՛ հաւիկդ ապաշնորհ ,  
 Չ'ուզեմ քեզ ընել գերի իմ կամոց :  
 Բայց խիստ հովանեաց տակ մէյմ'որ նետուխ ,  
 Ա՛ռ երգերդ խկոյն ու հեշտ զուարթիքդ ,  
 Չի անտառներո՛ւ տենեմ պէտք ունիա ,  
 Որ զազատութիւն երգես անդորրիկ :

Ն. ՌՌՄԻՆԵԱՆ

---

Խ Ր Ա Խ Ո Յ Ս

Ի ՄԻՌԻԹԻԻՆ

Դու նոր հայրենիք , դեռ նոր ազգութիւն ,  
 Դարուս շնորհիւ պարտք և իրաւունք ,  
 Սահման և կշիւ թոթովել որ գիտցանք ,

Ո՞վ Հայաստանի պանդուխտ զաւակուհիս :  
 Կրնանք արդ զօհել կրնանք ամէն բան ,  
 Անձնական կըրից մասնել անխընայ .  
 Եւ Օտարին շահն Ազգին մնասող ,  
 Ո՞վ կրնայ խնդրել , որ այն եղեւն Հայ :  
 Զգոյշ , նվ Հայեր , զգոյշ կենանք միշտ ,  
 Քանզի ազգադու սլանան նեւեր .  
 Մեր խոցուած սրտերն կրկին խոցելու ,  
 Պահենք զայն ամուր սիրոյ վահանաւ :  
 Միութիւնն ըլլայ զբրահ անվտանգ ,  
 Եւ անհամաձայն թէ գտնուինք մեր մէջ .  
 Այլոց միջամուտ ներենք նչ երբէք ,  
 Ազատ ու հաւասար , ամենքս ալ եղբայր :  
 Հեռատեո , զգոյշ և գործն անդուլ ,  
 Ազգային կամեց հրպատակ անխօս .  
 Այսպէս կըթուի Հայ մանկութիւնը ,  
 Այսպէս պատրաստուի պատանեկութիւնն :  
 Ու երիտասարդութիւնն ըլլայ աննըկուն ,  
 Անտէր ախոյեան Ազգին իրաւանց .  
 Ու թող ձերութիւնն հսկէ լրջամիտ ,  
 Հայոց բաղդն ու Արև յուսով ողջունել :

# Ք Ա Տ Ր Ի Լ

Ա. 2ԵԻ

Ձեռնիք Ձեռնիքի

Դուք մէջէն ես քովէն ,  
Անցնինք գիմաց փոխենք տեղ .  
Նոյն ձեռք տեղերնիս ,  
Դառնանք միատեղ :

Լ՛ընծածան մէկ մ'առաջ ,  
Մէկ մ'ալ ետև քայլ փոխենք .  
Ապա տանք աջ 'ի յաջ ,  
Կլոր մը ճեմենք :

Օ՛ն ձեռք ձեռքի բարեկամք ,  
Ընկեր թև տուր շուրջ դառնանք .  
Արդ կրկին մեր նախնի ,  
Ընկերին երթանք :

Հապա ոտոտտանք գերկ գրկի ,  
Երթանք անդին պարելով .  
Ետ դառնանք նոյն ոտքով ,  
Կայնինք քովէ քով :

Բ. ՁԵԻ

Մէկ մը առաջ երկուքնիս ,  
Մէկ մ'ալ դառնանք տեղերնիս ,  
Իսկ այս անգամ դուն ասդին ,  
Ես դիմաց անցնիմ :

Մէկ մը աջ երթանք հիմակ ,  
Մէկ մ'ալ ետքը դէս 'ի ճախ :  
Ասկէ մեր տեղն ընթանանք ,  
Զուարթ կայթեմք և ուրախ :

Ալեծածան մէկ մ'առաջ ,  
Մէկ մ'ալ ետև քայլ փոխենք .  
Հիմաց 'ալ տանք աջ 'ի յաջ ,  
Կտր մը ճեմենք :

Չորսս ալ արդ առաջ խաղանք ,  
Կրկին տեղերնիս դառնանք .  
Յետոյ փոխն 'ի փոխ անցնինք ,  
Դիմացը կայնինք :

Գ. ՁԵԻ

Քալենք հիմաց դէմ դէմի ,  
Հասրա բռնենք թև թևի .

Յետոյ մէկ մ'աստղին դառնանք ,  
Մէկ մըն ալ անդին :

Մէկ մը յառաջ դէմ դէմի ,  
Պարենք երկուքս ու դառնանք .  
Մէկ մ'ալ սլարենք նոյն ձևով ,  
Երթանք ընկերնուս քով :

Կամենք շղթայ չորսերնիս ,  
Մէկ հոս մէկ հոն ծածանինք .  
Ապա ամենայն ընկեր ,  
Դիմացի կողմն անցնինք :

Չորսս ալ արդ առաջ խաղանք ,  
Կրկին տեղերնիս դառնանք .  
Յետոյ փոխն 'ի փոխ անցնինք ,  
Դիմացը կայնինք :

Դ. ՁԵԻ

Դէպ 'ի առաջ քով քովի ,  
Հիմակ երթանք դառնանք մերովի .  
Յետոյ մէկ մ'ալ հոն անցնինք ,  
Դուն հոն ես հոս զատուինք :

Արդ ես մինակ վազեմ ճեմեմ,  
Մէկ ոտք մը հոս մէկ հոն նեւեմ:  
Կայթեմ ոտանուամ զերթ մ'ուրախ,  
Ըլլայ հանդէս ուրախ :

Արդ նոյն քայլով յիս եկէք,  
Երեքդ մէյ մ'ետե գոցէք.  
Կրկին ամէնդ դէպ ինձի,  
Յետոյ նոյնպէս դէպ ետի :

Չորսս կէս կլոր արդ դառնանք,  
Յետոյ քիչ մը հեռանանք.  
Ետքն ալ ասկէ հոն անցնինք,  
Մեր բուն տեղիկը կայնինք :

Ե. ՁԵԻ

Հիմակ ալ առաջ քով քովի,  
Երթանք դառնանք մերովի.  
Յետոյ մէկ մ'ալ հոն անցնինք,  
Հոն հոս բաժնուինք :

Մեծածան մէկ մ'առաջ,  
Մէկ մ'ալ ետե քայլ փոխենք.  
Հիմայ ալ տանք աջ 'ի յաջ,  
Կլոր մը ճեմենք :

Ընկերք իրար քալեցէք ,  
Հոս եկէք մեկ մը դարձէք ,  
Մենք ալ ընկեր ընդ ընկեր ,  
Յետոյ օտարն երթայ ետ :

Չորսս ալ արդ առաջ խաղանք ,  
Կրկին տեղերնիս դառնանք .  
Յետոյ փոխն 'ի փոխ անցնինք ,  
Դիմացը կայնինք :

Զ. ՁԵԻ

Անցնինք երթանք շիտակ առաջ ամենքնիս ,  
Դառնանք դիմենք այր և ընկեր տեղերնիս .  
Թև թև դէմ դէմ երկանաքար դարձնենք ,  
Փոխենք ձեռքեր այս կողմ ալ շրջենք :

Ձեռք ձեռք տանք ընկեր թև տուր շուրջ  
դառնանք ,  
Հապա ոտոտտենք գիրկ գրկի հոն անցնինք .  
Անկէ դարձեալ մեր ընկերին քովն երթանք ,  
Յետոյ նոյն ոտքով պարելով ետ քաշուինք :

## ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ես դալար ծառ մի անկեալ 'ի Հայկայ ,  
 Պաղարերու թեամբ ինձ նրման չկայ .  
 Չեմ ես սնափառ՝ իբրև սարդենի ,  
 Հսղմն ատելու թեան փչեաց՝ ես անկայ :

## ՅՈՐԴՈՐԱԿ

Ո՞ր է սէր սէր սէր է սէր զի նորոգեցայց :

Քաղցրահամ պտուղ իմ էր անքանակ ,  
 Զաշխարհ լիացոյց երկար ժամանակ .  
 Ոստք իմ և արմատք 'ի բնէ խղեցան ,  
 Դառն ատելու թեամբ՝ անսուր՝ անդանակ :

Տերեւք իմ կանաչք վաղ թառամեցան ,  
 Երակք անդամոյս 'ի ջրոյ քամեցան .  
 Կեզ'էն իմ քնքուշ որդնակեր եղև ,  
 Գուցէ այգեպանք այսպէս կամեցան :

Ի գալ ամարան ազգ իւրաքանչիւր ,  
 Յնձալով՝ փութա քաղէլ զայգին իւր .  
 Իսկ ազգն Հայկայ ձեռն ի ծնօտի ,  
 Աւաղէ , հոսէ արտասուեաց աղբ :

Մշեազն ազշատէր յազգէն բամբասէր ,  
Գիշեր ցորեկ ողբալով ասէր .  
Հայք զիսորդ կարեն ճաշակել զգս ուղ ,  
Զի չունին հաստատ հաւատ , յոյս և սէր :  
ՍԷՅՍԱՅ

## Կ Ի Լ Ի Կ Ի Ա

Երբոր բացուին դռներն յուսոյ ,  
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ ,  
Զքնաղ երկինս մերս Արմենիոյ ,  
Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր :  
Երբոր ծիծառն 'ի բոյն դառնայ ,  
Երբոր ծառերն հագնին տերեւ .  
Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա ,  
Աշխարհ որ ինձ ետուր արեւ :

Տեսի դաշտերն Ռնուրիոյ ,  
Լեռն լիբանան և իւր մայրեր ,  
Տեսի զերկինս Իգալիոյ ,  
Վենետիկ և իւր Կոնստանդներ :  
Կզգի նման չիք մեր Կիպրեայ ,  
Եւ ոչ մէկ վայր է արգարեւ .

Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա ,  
Աշխարհ որ ինձ ետուր արև :

Հասակ մը կայ մեր կենաց մեջ ,  
Ուր ամենայն իղձ կ'աւարտի .  
Հասակ մը ուր հեգին 'ի տեսչ ,  
Յիշատակաց իւր կարօտի :  
Յորժամ քնարս իմ ցրտանայ ,  
Սիրոյն տալով վերջին բարևս ,  
Երթամ ննջել յիմ Կիլիկիա ,  
Աշխարհ որ ինձ ետուր արև :

---

## Ե Ր Գ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱԶԳՍՅԻՆ ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Եկաւ ժամանակ բարեկամ բաղդին ,  
Նոր դարուն բերաւ Հայաստան երկրին .  
Իջաւ Պարարտ՝ հասաւ 'ի Տիգրիս ,  
Դարձաւ գաղբեցաւ կեցաւ 'ի Մասիս :

*D*

Եւ ձայն տուաւ անկէ Հայոց ;  
Չայն մի Թորգոմայ որդւոց :  
Որ մերկանան զյուրս ցմռան վարազոյր :

Ժամ է արդ Հայեր , Վով  
Ընկեր առ ընկեր .

*Ժամ է այ  
դ*

Տամբ Սիրոյ համբոյր :  
Համբոյր մեր ըլլայ վկայ միութեան ,  
Սահմանադրութեան :

Եւ շիջեւափառ Հայրենեաց խորան ,  
Բացաւ տխրագին զիւր քող ճգնութեան .  
Հասին հան Մուսայք , և Յուսոյ հրեշտակք ;  
Ախորթ երգեցին խնդութեան նուազ :

Եւ սիրտ տուին անկէ Հայոց ,  
Սիրտ մի Թորգոմայ որդւոց :  
Որ մերկանան հեռ նախանձու վարազոյր :

Ժամ է արդ Հայեր ,  
Ընկեր առ ընկեր .


Տամբ Սիրոյ համբոյր :  
Համբոյր մեր ըլլայ մեր ուխտ միութեան ,  
Սահմանադրութեան :

Եւաւ Հայաստան նոր դարնան ՚ի աես ,  
Դարձա ՚ի շքեղ իւր փառաց հանդէս ,  
Դարձիր բաղդակոճ Քնարդ իմ հոգւոյն ,  
Դարձէք աւուրք կենաց , դարձէք յայդ  
յուսոյն :

Եւ լոյս տուէք անկէ Հայոց ,  
Լոյս մի Թորդոմայ որդւոց :  
Որ մերկանան մաւթ գիշերին վարագոյր .

Ժամ է արդ Հայեր ,  
Ընկեր առ ընկեր .  
Տամբ Սիրոյ համբոյր :  
Համբոյր մեր ըլլայ կնիք միութեան ,  
Սահմանազրու թեան :

Ս. Է. ՅԵԼԵԿԻՄՆ



ԵՐԳ

Մ Ի Ո Ի Թ Ե Ս Ն

Եղբայր , մինչև երբ այսպէս լուռ արխուր ,  
Զերթ թշուառ պանդուխտ հեծեծեո վիշա ,  
վիշա ,

Մէրն ու դո՛ւ թ Ազգիդ խանձէ սիրտըդ միշտ .  
Գիտեմ . . . արդ ցրուէ ցաւդ . դու արթ ճն  
ձեռքդ ինձ տուր ,

Ա՛ռ քեզ նոր ողջոյն Սահմանադրու թիւն ,  
Զոր շնորհեց Հայուն թուական վաթսուն .  
Սիրենք Ազգու թեան կեանքն ու միութիւն ,  
Սիրենք , որ ապրի Սահմանադրութիւն :  
Այն անմահ օրն երբ , մեր սրտերուն մէջ ,  
Սահմանադրու թեան ոգին արծարծեց .  
Եւ մինչև դաշտերն անոր փառքն երգեց ,  
Ճեր , երխտասարդ , մանկաին յել և էջ :  
Այլ ո՞ր չազդի ձեռք դիմէ դայն ջնջել ,  
Հայուն աւերմանն անգութ , անտարբեր :  
Սիրենք Ազգու թեան . . .

Հերիք չէ՞ լուսոյ դէմ ապրիլ զերթ կոյր ,  
Անտես Վարչութեան Ազգի մը թշուառ .  
Համազգի անուամբ պառակտել իրար ,  
Իրաւանց ձայնին դէմ մընալ միշտ խուլ :  
Տեսնել սա դարուն փոյթն , ընթացքն  
յառաջ ,  
Դեռ բիրտ կամաց հետ յամել անամաչ :  
Սիրենք Ազգութեան . . .

Մոռնանք երեկուան սին ատելութիւն ,

Մերժեալ վրէժն պաշտենք Ազգի Մէր ,  
Մարին Հայ սրտէն սև կրրից բոցեր ,  
Գիրկրնդխառն , համբոյր , և ուխտ  
հաշտութեան

Ի փառս մեր յուսոյն Սահմանադրութեան ,  
Որ պաշտպանէ՛ մեր հաւատքն , Ազգութիւն :  
Սիրենք Ազգութեան . . .

Հերիք չէ՞ , որ ծաղր ըլլանք օտարին ,  
Ուշ չէ , որ կ'զգանք Ազգութեան պարտքեր .  
Երկինք ձայն կուտայ , մենք դեռ չենք լսեր ,  
Այլ վրէժ ձայնենք եղբօր ականջին :  
Մէկ արեան կաթիլ , ծնունդ մէկ հայրենե-  
կաց ,

Չ'ուզենք հնազանդիլ Ազգիս Օրինաց :  
Սիրենք ազգութեան . . .

Ղկայեն մեզի մօտ օրերն անցեալ ,  
Թէ քանի անգամ ազգի բաժանում .  
Հայ երակներու մէջ լեցուց գանն արիւն ,  
Փորձուածը կրկին փորձողն է յիմար :  
Օ՛ն , սրբենք այն խորթ աւուրց արասներ ,  
Որ մեր ազգութեան տունն ու տեղըն աւ-  
րեր :

Միրենք ազգութեան . . .

Աստուած Հայութիւն աշխարհին վերան ,  
Որոշ ժողովուրդ մ'ազգի անունով .  
Ընտրեց , որ կ'ապրէր ազատ օրէնքով ,  
Իրեն ազգութեանն յարմար և պատկան :  
Եւ զոր բազմ գողցուց դրժխեմ ձեռքերուն ,  
Պէտք չէ՞ արդ անոր տալ կենդանութիւն :  
Միրենք ազգութեան . . .

Միլիոնաւոր Հայ ձեռքն 'ի ծնօտ մինչ ցարդ ,  
Կապասուէր միակ Սահմանադրութեան .  
Ողջոյն տալ գարձեալ և երրորդ անգամ ,  
Միրելով անոր սկզբունքն հաստատ .  
Արդ ուրախութիւն , անցաւ փոթորիկ ,  
Որ սպառնացաւ անձրևել սաստիկ :  
Միրենք ազգութեան . . .

Մինչև երկնից տակ ապրի ազգութիւն ,  
Ճշմարիտ Հայերն օրհնեն յաւիտեան ,  
Հազար ութն հարիւր փոթառն թուական ,  
Ուր սովրեցաւ մեր ազգին Վարչութիւն .  
Օրինօք գործել և հաստատ հիման  
Վըրայ ղետեղել Հայ պարտուց սպայման :  
Միրենք ազգութեան . . .

Օ՛ն արդ , 'ն՛վ Հայ Աշէր , աւուրն ականջ  
 տուր ,  
 Հաւատոյ դրօշակ ձեռքդ և սուրբ Խաչն յոյս ,  
 Սիրոյ խոստումներ քանդակոծի կուրծքս ,  
 Քարողէ ժողովուրդդ որ գընայ յառաջ ,  
 Ձեռք տուր ազգային բարեկարգութեան ,  
 Գիտցի՛ր , որ պաշտօնդ է սարտք սրբազան :  
 Սիրէ՛ ազգութեան . . .

Ազնուական Հայ լսէ՛ ժողովուրդին ,  
 Որ պատրաստ յարգել քեզ միշտ իբրև հայր .  
 Եկու՛ր ազգութեան մէջ ըլլանք եղբայր ,  
 Չայնակցէ՛ , 'ն՛վ մեծդ , փոքրերուն ձայնին ,  
 Հոն է քու պատիւդ , հոն քոյդ ճոխութիւն ,  
 Որ պատմութեանց մէջ տան անհաճութիւն ,  
 Սիրէ՛ ազգութիւն . . .

Հայ երիտասարդք ցրուենք այն խորհուրդ ,  
 Զոր մեր դաշտին մէջ սերմանեցին շուտ .  
 Ազգան այնպէս բարօրենք 'ի փոյթ ,  
 Ուր չար դրացիներ չըգտնեն յագուրդ .  
 Ասկից ալ յարմար օր կըլլայ Հայուն ,  
 Ճանչնալ Իրաւունք , Օրէնք , Ազգութիւն :  
 Սիրենք ազգութեան . . .

Մարդկութեան պարտքը հաս կուզէ օրհնել :  
ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԻԼ ԱԶԻԶ ԽԱՆ  
Արքայն Օսմանեան հըզօր Տէրութեան ,  
Որ է փառք Ազգին և ինքնագօր Տէր .  
Գովենք , որ շնորհեց Սահմանադրութիւն ,  
Իր հաւատարիմ հպատակ Հայուն :

Սիրենք աղքութեան . . .

ՆԵՐՄԷՍ. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

Լ՛յ սերվերի կէրտուն մեզամ ,  
Վէյ տավերի տարա գիւլամ .  
Սայէի ատլինտէ ճիւմլէ ,  
Միւք ու միլլէթ պուլտի նիզամ :

Ապտ Իւլ-Ազիզ Շահի ճիհան ,  
Օլտուն ճիհանտէ քեամիրան ,  
Շէվքէթիլէ հէմ պէր տեվամ ,  
Ելէ Էարապսը միւսթեան :

Շան ու շէվքէթիլէ հէր ան ,  
Թապ'ը Շահի օլա ֆէրհան ,  
Պէջլէ ըխրաս իլէ հէր կիւն ,  
Օլուր Էվլատը պէնտէկեան :

Ապտ-Իւլ-Ազիզ . . .

Մէքտէմինլէ սէնին Շահա ,  
 ճիհանի խլէտին իհեա .  
 Իշթէ միլլէթճէ եէկզէպան ,  
 Իթմէքտէյիզ շիւքրին խֆա :  
 Ապտ-Իւլ-Ազիզ . . .

Գըլուսլ օլ տավէրի սէյ յիտ ,  
 Նիզամը միլլէթի թէճաիտ .  
 Հէման օլ Շահը զիյշանըն ,  
 Օլա հէր բուզի եէվմի խտ :  
 Ապտ-Իւլ-Ազիզ . . .

Օ. Թ. ՇԱՀԱՆՅԱՆ



## Ե Ր Գ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍՍՀՄԱՆՍԴՐՈՒԹԵԱՆ

Երբ սիրոյ , երբ Հայրենի , քեզ կու շուի  
 Հայաստան ,  
 Հոն , ո՞ւր Հայք ամ էն դիէ մի հագուէր կը  
 խայտան

Այն երկնից դատավրճիւ դառնն անէծք  
հընգդարեան ,  
Դադրեցաւ ըսէնք արդեօք՝ թէ մէր մեղաց  
չափ լըցան :

Չայն տուր ըսէ Հայաստան ,  
Նախնեաց մեր սուրբ օթևան .  
Մարդկու թեան կրկին օրրան ,  
Վկայդ երկնից հաշտութեան :

Օեր , տղայ , երիտասարդ , հարուստ , աղ-  
քատ , անխտիր ,  
Օրիորդ մատաղերամ , ամենքն անկեղծ անպա-  
տիր ,  
Վմենուն մի է արիւն ամենքն ունին մէկ եր-  
կիր ,  
Երասխայ ձորն հաւդուած կարծես թէ չեն  
տարագիր :

Չայն տուր ըսէ . . .

Ի՛յց՝ սիրո՞ ըսենք արդեօք , թէ աշնանն  
հողմոց պէս ,  
Մէկ մ'ասկէ մէկ մ'ալ անկէ փջող կոյտ մ'է  
աս հանդէս :

Ո՛հ . . . չէ՛ , չէ՛ , Հայրենի սէրն է շարժառիթ  
պարզասէս ,  
Որ եղբայր եղբօր դիմած սուրբ սրբոտով կու  
դան 'ի տես :

Մ'իսիթարուէ Հայաստան ,  
Նախնեաց մեր սուրբ օթեւան .  
Մարդկութեան կրկին օրրան ,  
Ղկայդ երկնից հաշտութեան :

Նախնի վեհք , գըլուխ բարձէք ձեր փոշելից  
տասրանէն ,  
Ու տեսէք Հայերն ինչպէս զիրար եղբայր  
կ'ողջունեն .  
Դիւցազուն իրենց նախնեաց յիշատակաւ  
սիրտ ամէն ,  
Լըցեալ , 'ի Մէր անբաժին և միութիւն սերտ  
կ'ուխտեն :

Հապա հըրճուէ Հայաստան ,  
Նախնեաց մեր սուրբ օթեւան .  
Մարդկութեան կրկին օրրան ,  
Ղկայդ երկնից հաշտութեան :

Բարձրացան յերկինս 'ի վեր ձայն կռկռանայ  
Հայորդւոյն ,  
Բարձունքէն դիտեց տեսաւ աննիրհ աչաց  
Տէրն արթուն ,  
Ժպտեցան դէպ 'ի երկիրն որ նախ օրրանն էր  
մարդուն ,  
Այցելուն անմիջապէս խըրկեց Սէրն իր զու-  
արթուն :

Խայտա խնտա Հայաստան ,  
Նախնեաց մեր սուրբ օթեւան ,  
Մարդկութեան կրկին օրրան ,  
Վկայդ երկնից հաշտութեան :

Ա. ձե. Վ. Ա. Կ. Ի. Տ. Յ. Ն.



Օ երկնաբերձ գլխով սառնադատ լերին ,  
Ուր դադար առնու նախնակերտ տապան ,  
Էր զի՞ սաւառներ հայադրոշ արծուին ,  
Չգեւ շուք ստուար ցճորայ Կապան :

Այլ ուր արփին լուսատու , ուր պողպատին  
փայլատու ,  
Յոր թագ կապեր Այրարատ , 'ի թագադիր  
Բագարատ :

Ով թորդոմաճեա աղարծի մանկունք  
Հարկ 'ի վերայ կայ փոխելոյ ընդ փոյթ  
Ջգօն լուրջ յոգի սուր յակն յուչև յունկն  
Առ 'ի ժամանել 'ի կատար անքոյթ

Օ ի լեառն ահա արփածին  
Որոյ բարձունք փայլ հատին  
Յորդեալ դիւրն բիւր վտակ  
Նոր աւետէ եղանակ :

Ի գողտրիկ ծայր մատին  
Թմբեկահար սլանծասցին  
Ընդ նմին անդադար  
Քերեւով զկիթառ :

Բազկացի 'ի շաղկապ  
Բերկրեսցուք ծափ 'ի ծափ  
Ձբաժակ թաթաղուն  
Քամելով մեք հողոյն :

Համարիւն կեցցեն Հայք  
Միշտ Մասեաց գուռոզ կայք ,  
Եւ 'ի նոր բազարատ  
Ցնծասցէ այրարատ :

# ՆԱԽ ԵՐԳ

ՅԵՐԿՐՈՐԳ ԾՐՋԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹՄՏՐՈՆԻ

ԺԱՄԱՆԱԿՆ

Լէր դու այսպէս . ո՛ սեալ Գիշեր ,  
Զուարթ բնութեանն ազնիւ պատկեր ,  
Տըխրանըկար գուճով ներկես ,  
Սըգատեսիլդ ի՞նչ այս հանդէս :

Ո՛վ անարեւ տըխուր Ողի ,  
Դու էիր ինձ միակ համատի .  
Երբ բեղմնաւոր բնութեան արգանդ ,  
Շըքեղ ծննդովք չէր արգաւանդ :

Թէ իմ շրջանս մերթ տեղի տայ՝  
Որ քու խաւարդ երկար մնայ ,  
Ունիմ անկէ և ես բաժին՝  
Իմ անցելոյս՝ յիշատակին :

Լըրբ ժամն հասաւ՝ եկան ՚ի տես ,  
Հին անցքերուս ինչ ինչ հանդէս .

Էր սևորակ քոյին ըստուեր ,  
Արդ վառվումն քողէ աչեր :

ԽՄԲԵԱԿՆ

Ի՛նչ այս դողդոջուն վրսեմական ձայն ,  
Ինչ քաղցրիկ մրմունջ . . . և օտար չէ այն .  
Վե՛հ ալևորն է , սլատկառելին ծեր ,  
Որ հոն միայնակ կ'երգէ իւր գիշեր :

— Յոյսդ եղածը պիտ, դիմենք անոր արդ ,  
Ի՞նչ որ սլծնեցիր մեզ երբեմն 'ի վարդ .  
Չայն տուր այժմ աղէ . խրախոյս կարդա  
նոր ,  
Զի հասաւ ահա այն երջանիկն օր :

ՅՈՅՍՆ

Օն՝ յառաջ , մանկունք , նոյն ինքն է՝  
տեսէք ,  
Անհամբեր ոգւով որուն կըսպասէք :

— Տէ՛ս և դու , հինաւուրց ծերունի ,  
Մանկրտին՝ որ դիմօք սիրանիչ :  
Կարօտով քու՞ տեսոյդ Հայրենի ,  
Գալտտեանդ կը մնային ակնապիշ :

Սոյն խմբիս պարտաւոր կանգնած աստ՝  
Գեղազուարճ դամ՝ ահա խոտամնալիր .  
Մինչ ակումբս հանդիսիդ քու պատրաստ,  
Անցելոյդ են եկած 'ի խնդիր :

ԺԱՄԱՆԱԿՆ

Քաջ խի արժան , մինչ իմ անցեալս յոր  
դառատ ,  
Է փորձառու ծեր իմաստնոյ բիւր խըրատ .  
Մէն մի թերթ են ճակտիս կնճիւք բարդ 'ի  
բարդ  
Ուր խառըն զուարթ տըխուր անցքեր տես  
նէ մարդ :

Օ ի խիստ օտար են մանկու թեան ինձ օ  
րեր ,  
Յաւիտենից եմ ճնունդ , և ծեր անծեր .  
Այլ ապագայս անվերջ՝ թէ իբր անփուշ  
վարդ ,  
Այն քու շնորհիւդ է , Օրիորդ գեղազու  
արթ :

— Ապա և դուք , Յարկիս մանկունք սիրական ,  
Որ հընացեալ անցից տաք նոր կերպարան .

Լըսուին դարձեալ հաճոյական ձեր ձայներ ,  
Սալբին լըսողք փորձառութեան միշտ դա  
սեր :

ՅՈՅՍՆ ԵԻՍ ԶՈՒԳԱՆՈՒԱԳ

Սուսապանձ նոր հանդէս ,  
Աւ գիշերըն անտես .  
Վիսալոյս արշալոյս ,  
Ամսոց մէջ տայ իւր խոյս :

Ողջունիւ Արեւուն ,  
Մինչ ժպտի բնութիւն ,  
Ժամ է ձեզ . մի՛ դըլաք ,  
Առէք զայն ձեր նուազ :

ԽՄԲԵԱԿՆ

Ոքաղցր Արփի , մինչ կը բերես առաւօտ ,  
Ո՛հ նախարձակ շառաւիղօքդ անաղօտ .  
Ոսկենկար ցոլան լերինք նախալոյս ,  
Միմեանց համբոյր տան ցողալիր բոյսն ու  
լոյս :

Այլքաղցրագոյն ես դու այսօր Աչք անբուն ,  
Որ ջերմ լուսովդ ակնարկելով Անցելոյն՝

Կը վերածնես յիշատակաց ածիւններ ,  
Հանդիսադիր ըլլալ՝ կուտաս մեզ հրաւեր :

— Ապաքէն մեք աշխոյժ սրտով ,  
Քեզ ընդ առաջ արշաւելով՝  
Զուարթ դիմօք 'ի դլուխ նարօտ ,  
Շքեղ տեսոյդ անձկակարօտ :

Փութամք աստէն միահողոյն ,  
Անհրրաժեշտ մեր նախողջոյն .  
Վեհ ծերունւոյդ տալ 'ի նուէր ,  
Զի դու տուիր մեզ քաջալեր :

---

## ԵՐԳ

### ՄՈՆԹՈՆԻ

Ընկերք յաղթութեան ժամն արդ հաս է ,  
Մեզ կ'սպասեն փառք առնունք քաջալեր ,  
Արեան ծարաւի մեր հատու սուսեր ,  
Կենաց թշնամւոյն թող կտրին թելեր :

Ո՛հ մեր ախոյեան թողին 'ի տաղնասլ ,  
Զըլլանք ահափեկ մենք 'ի զէն , շտասլ .

Փութամբ արշաւել այր մի՛ վեհերոտ ,  
Մին օն անդր ՚ի բաց սիրտք վատ և երկչոտ :

Ի զէն ՚ի զէն , օն անդր ՚ի բաց ,  
Սիրտք վատ և երկչոտ :

Թէ իմ ալևոր հերքս սենային ,  
Ոյժս ինձ յետ դար , կտրիճ դառնայի .  
Նժոյգ ձի նստած , բեխրս ոլորած ,  
Ձեռքս թուր առած ես դաշտ կերթայի :

Ես դաշտ կերթայի դաշտ Աւարայրի ,  
Ողողած ցողած Հայոց արիւնով .  
Ազգ իմ սիրահան , դու ազգ թորդոմեան ,  
Քու կորցրած թագը քեզ յետ կուտայի :

Կ'ասէի Հայոց օրիորդներին ,  
“Ճախեցէք հազի ձեր թանգ շորերը .  
Թողէք պաճուճանք , զարդ , մարգարիտներ ,  
Ժանգոտած ու դուլ են մեր թըրերը :

Տուէք բեհեզեայ մեզ ձեր շապիկը ,  
Որ մեհք փաթաթեհք մեր մարմնու վերքը .

Վիրակապ հիւօէք դուք ձեր մազերից ,  
Այսպէս յայանեցէք դուք մեզ ձեր սէրը :

Թէ ես լինէի հարուստ մեծատուն՝  
Սընտուկներս լի ոսկւով արծաթով ,  
Շատերու նման ես չէի լինիլ ,  
Երբէք ազգասէր ունայն խօսքերով :

Շամպանեա գինու Աննա Խաչի սեղ ,  
Կառնուի առատ գնտակ ու վառօդ .  
Արձակ համարձակ կերթայի հանդէպ ,  
Հայատեաց ազգին անթիւ զօրքերով :

Թէ ես լինէի միւրեկրի իշխան ,  
Կուտայի զօրքիս սաստիկ հրաման .  
Շուտաքայլ երթալ դէպ ՚ի Հայաստան ,  
Խղձուկ Հայ ազգին լինել օգնական :

Եւրոպ՝ Ասիա արեան գետերը ,  
Կը վազցնէի հեղեղի նման .  
Մինչև որ թագ , դահ ու ազատ կրօն ,  
Ինձնից չստանար թշուառ Հայաստան :

Իայց՝ եթէ մի օր , մի ժամ , մի րոպէ ,  
Աստուած լինէի մեր հողագնդին ,

Ի՞նչ սուր սլաքներ պիտի շաղ տայի ,  
Մեր արե՛նարբու թշնամեաց գնդին :

Նենգ . . . . մոլի , Պարսիկ ռխերիմ ,  
Դարևոր ոսոխ դու Յոյն կրօնամուլ ,  
Գիտցի՛ք որ՝ իմ սուր երկսայրի սրից ,  
Անվնաս չէր մնալ ոչ մի ձեր որդին :

ԲԱՄԱՐ ԲԱԹԻՊԱՅ

---

## ՀԱՅՐԵՆԻՔ

Թէ իմն Հայրենեաց քնար սգաւոր ,  
Հեծէ տիրազին՝ իմ հոգիս է այն .  
Թէ նորա բեկբեկ թեւեր վշտաւոր ,  
Խօսի ողբաձայն՝ իմ սրտիկս է այն :

— Թէ Հայ մուսային սրտառու չ՛նուագ ,  
Դեռ կ'եղերբրդէ՝ հառաչանքս է այն .  
Թէ Հայաստանիս սեւ բախդին հազագ ,  
Լայ ազեկաուր՝ հեծե՛ծանքս է այն :

— Թէ իմն Հայրենեաց կիսամեռիկ շու՛նչ ,  
Դեռ ըսի տխուր՝ իմ ողբերս է այն .  
Թէ լռիկ մնջիկ հեծէ անշրջու՛նջ .  
Ո՛հ անկարեկիր իմ լալիքս է այն :

—Եւ Հայկայ փառաց յօժար ողբերգուն ,  
Հարազատ լացողն իմ ձայնիկս է այն ,  
Չորս հազար տարուան պարճանաց դարուն ,  
Արձագանգ տուողն աղաղակս է այն :

—Իմ Հայաստանիս ցաւերուն հատոր ,  
Ահա այս մաշած իմ կուրծքս է այն .  
Սեւ սեւ թերթերուն էջ սրտակոտոր ,  
Արտասուօք դրաւած՝ իմ աղիքս է այն :

—Թէ բանաս կարգաս արիւնոտ դաշտեր ,  
Վարդագոյն ներկուած՝ իմ կողերս է այն .  
Թ՛աչքէ անցրնես շամփրած նիզակներ ,  
Մահահոտ ցցուած՝ իմ թիկունքս է այն :

—Թէ Հայկ և Արամ , Վարդան Վահաններ ,  
Ինկած տեսանեսս՝ իմ ուժքս է այն .  
Թէ ղէնք թէ զրահ թէ սուր թէ սուսեր ,  
Փշրած կոտորած՝ սսկորներս է այն :

—Թէ արեամբ ներկեն ակունք Եդեմին ,  
Նշխար քաջերուն՝ իմ բիբերս է այն .  
Թէ քաղցր ու անբիժ ալիք Եփրատին ,  
Լեղի են դարձեր՝ արտասուքս է այն :

—Թէ վճիտ գետերն աղբերքն արծաթի ,  
Լաւիք առուակեն՝ երակներս է այն .  
Թէ Տիգրիս Գեհովն Փիսան մունչեն ,  
Թէ սղտոր գնան՝ իմ արիւնս է այն :

—Թէ սառնամանիք ձմռան բքաբեր ,  
Լեռներն է սպտեր , իմ գազաթս է այն .  
Եւ քաղցրիկ զեփիւռն անուշակ հովեր ,  
Ցրտագին փչեն , իմ շնչիկս է այն :

—Թէ վտակ վտակ ցողէ զյիշատակ ,  
Զայս տրամալատակ , աչքերքս է այն .  
Թէ սրտաձայնիկ երգէ զՀայաստան ,  
Կանչէ զՀայաստան՝ անկեղծ սէրս է այն :

—Թէ մթին խորշերն ու ձորեր լռին ,  
Սեւերով ծածկին , մենաստանս է այն .  
Թէ ողբ կը կարդան վայրերն Եդեմին ,  
Ճնշած լերդերուս արծազանգն է այն :

—Եւ հայաստանիս հողերը ուխտիւ ,  
Պինդ սիրով գրկողն՝ իմ ձեռքերս է այն .  
Թէ կը համբուրեն կաթողին խմբիւ ,  
Ո՛հ մայրակարօտ շրթունքներս է այն :

—Եւ Հայոց լերանց ցուրտ շուքերուն տակ ,  
Ընկած ապարաղդ՝ իմ ճակատս է այն .  
Մասեաց սուրբ քարերն իւր քարձն ու պսակ ,  
Դրած սգաւոր գլուխիկս է այն :

—Եւ կիսակործան տաճարն Հայրենի ,  
Սե սուգ է պատեր՝ տաղաւարս է այն .  
Ուր շիջեւալառ կանթեղ դեռ հիւժէ ,  
Նուաղ առ նուաղ՝ իմ յոյսս է այն :

—Ուր տխուր նասեր մազերն են ծածկեր ,  
Իւր սեռի աչքեր՝ սիրականս է այն .  
Ձեռքերն ՚ի ճակատ կռնակն ՚ի հողեր ,  
Յուսով կռթըներ՝ Հայաստանս է այն :  
—Գերեզմանս է այն :

—Ուր երբ տեսանեմ զիմ հեգն Հայաստան ,  
Ի գահ իւր փառաց՝ իմ քաղձանքս է այն .  
Յայնժամ թող մեռնիմ յիւր ծոց մայրական ,  
Զիմ վերջին շնչոյս միակ ուխտս է այն :

ՄՄՄՆՆ ԿԱԹՈՒՄ . ՅԵՂԵՆԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Թէպէտ ես մեծ տան նշան եմ,  
 Ամենից ազնիւ իշխան եմ,  
 Ոչ մեռած եմ, ոչ կենդան եմ,  
 Օգնական չունիմ, ի՛նչ անեմ:

Ով անցաւոր, ինձի նայիր,  
 Անբախտութեանըս խնայիր,  
 Ի՞նչ կուլէր՝ փոքր մնայիր,  
 Իմանայիր, թէ ի՞նչ բան եմ:

Թշնամիք մարդըս մեռուցին,  
 Մէջքըս ծանրութեամբ կեռուցին,  
 Որդիքըս ինձնեց հեռուցին,  
 Այժմ այլոց ազատան եմ:

Չեռումս կտորվեց սուրբս,  
 Վնասուեցաւ առուտուրբս,  
 Լեզի դարձաւ քաղցր ջուրբս,  
 Բաս ես ո՞նց չի հոգւոց հանեմ:

Մտաջ կէի անձամբ անձին ,  
 Այժըմ կարօտ այլոց դանձին .  
 Սէյեադ , քեզ ասեմ առանձին ,  
 Այրիացեալ Հայաստան եմ :

ՍԷՅՆԵՂ

---

## Ն ՈՒ Է Ր

ԱՌ ՔՆԱՐ ՀՍՅԿՍԿԱՆ

ՈՂՋ ԼԵՐ ՔՆԱՐ

Թէ Հայկազանց ոսկի դարուն ոսկի քնարք  
 լուեցին ,  
 Եւ թէ Հայուն անմխիթար հեծել պէտք էր ,  
 դարերով .  
 Ալ թող դադրին արցունք հերիք լսենք այս  
 նոր քնարին ,  
 Ջոր նոր երկինք կը զարդարեն ուրախու թեան  
 թելերով :


Ողջ լեր քրնար ձայն տուր թըշուառ Հայաստանի  
 դաւակաց :

Որոնց քաղցր է և սրբազան մեր հայրենեաց  
յիշատակ .  
Հնչէ քնար և թող խայտան ոսկերք Հայոց  
դիւցազանց ,  
Էւր տար մեզմէ թէ հոս հոս ըսէ ողջ են  
դեռ Հայք :

Հայկայ սանդուխտ զաւկըներուս կանչէ եր-  
գերդ հայրենի ,  
Թող յաւիտեան ձայնդ անուշիկ հնչէ Հայե-  
րուն .  
Եւ թէ լսեն ամեն ազգեր եթէ աշխարհքն ալ  
անցնի ,  
Ալ Հայաստան սուրբ հայրենիք երգէ դուն :

Մենք այն երկրին  
Զաւկըներն ենք .  
Որուն նմանն ,  
Ալ Հայ :

Երկրին որուն ,  
Գլխուն եկածն .  
Ուրիշին չէ ,  
Պատահած :



# Խ Ր Ա, Խ Ո Յ Ս

## Ի ԼՈՒՍՍԱԻՈՐՈՒԹԻՒՆ՝

յամէ, Հայեր, արիք ձեր բաղդըն ողջու-  
նել,

Լուսոյ դարուն վերածնութեան դրօշու տակ,  
Հայրենիք ձեր հրաւէր կարգայ գալ խմբել,  
Ուր ապագան ձեր գրուած կայ փառունակ :

Բայց են ասպարէզք ազատ քայլերու,  
Եւ երկինք լըցող ըզգաստ ուխտերու .  
Մի ապա ճարակ մատնէք կոյր մըրցմանց ,  
Քիրտն , արտասուք և տենջ ձեր Հայ դիւ-  
ցազանց :

Յառանջ, յառաջ,  
Մեծ է ձեր կոչում,  
Քաջի ծնունդ քաջեր,  
Մասեաց սարերէն :

Ալևոր դարեր,  
Լուռ ձեզ կը դիտեն ,  
Քայլերու շարժում,  
Յառանջ, յառաջ :

Մայր ձեր սիրուն , մայր դարերու Հայաս-  
տան ,

Ձեր է կարօտ , ձեր ժիր ու ազատ ջանքերու .  
Անոր լուսոյն խամբած դարաստ միաբան ,  
Ելէք պըճնել , Հայեր ժամ է քրտնելու :

Ձեր ճակտին ցողով ջինջ պիտի ցղան ,  
Միւն , կոթող փոշոտ լուսոյ Հայութեան ,  
Բաւ է ձեր զօհեր , բաւ ալ միացէք ,  
Դար նոր ձեզ բանան Աստուած և օրէնք :

Յառաջ , յառաջ ,  
Մեծ է ձեր կոչում .  
Քաջի ծնունդ քաջեր ,  
Մասեաց սարերէն :

Ալևոր դարեր ,  
Լուռ ձեզ կը դիտեն .  
Քայլերու շարժում ,  
Յառաջ , յառաջ :

---

## ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ ,  
Թէ երգք թռչին սիրողաբար ,

Մատուներ կուօին ամենագեղ ,  
Թէ որ զարներն փափուկ քրնար :

Չունին ձայն մի այնքան սիրուն ,  
Քան զանձկալի եղբայր անուն :

Տուր ինձ քու ձեռքդ եղբայր եմք մեք ,  
Որ մըրրկաւ էինք զատուած .  
Բաղդին ամեն ոխ չարանենդ ,  
Ի մի համբոյր ցրուին 'ի բաց :

Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն ,  
Քան զանձկալի եղբայր անուն :

Երբ ալեւոր Մայր Հայաստան ,  
Տեսնէ զորդիս իւր քովէ քով .  
Սրտին խորունկ վէրքըն դաժան ,  
Քաղցր արտասուաց բուժին ցօղով :

Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն ,  
Քան զանձկալի եղբայր անուն :

Մէկտեղ լացինք մենք 'ի հընում ,  
Եկէք դարձեալ յար անբաժան .  
Խառներնք զարտօսը եւ ըլխնտում ,  
Որ բազմաճնուող ըլլայ մեր ջան :

Բնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն ,  
Քան զանձկալի Եղբայր անուն :

Մէկտեղ հոգնինք մէկտեղ ցանենք ,  
Մէկտեղ թափին մեր քրտինքներ ,  
Ըզ հունձք բարեաց յերկինս հանենք .  
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր :

Բնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն ,  
Քան զանձկալի Եղբայր անուն

Մ. ՊԷՇԻՐԹԱՇԷԼԵԱՆ

---

Ի ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՍՍՀՄՍՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ի զուր ամպերն որոտացին ,  
Ու ամենուն սիրտ դող առաւ ,  
Ի զուր Հրեշտակ Մատեաց սարին ,  
Հայոց բաղդին վրայ լացաւ .  
Սեւ փոթորկաց մէջէն սրավար ,  
Տեօէք ի՞նչպէս կ'եղէ պայծառ :

Կուգայ ցնծալով ,  
Ընծայ բերելով .  
Բիւր երջանկու թիւն ,  
Սահմանադրու թիւն ,  
Սահմանադրու թիւն :

Ողջն աւուրն այն գերասպանծ ,  
Ուր բարձրացաւ 'ի լոյս յաղթող .  
Արդարութեան եւ իրաւանց ,  
Եւ ազգութեան յաւէրժ կոթող .  
Արկողն հիմունս անդնդալիր ,  
Եւ մեծ գործոյն հանդիսադիր : 2

Կուգայ ցնծալով ևն :

'Նա բարձրացաւ , ու սեւադէմ ,  
Ատելութեան խրոխտ ամբարտակ .  
Ինկաւ կործան , ու լուսաճեմ ,  
Թըռաւ առ մեզ սէր անուշակ .  
Որ զամբարտակն այն խորտակեց ,  
Ու զսէրն անուշ մեզի խրկեց :

Կուգայ ցնծալով ևն :

Ո՛հ , բնագաւառ մեր Հայաստան ,  
Գերեզմանաց դու Հայրենիք .

Նոցա վերայ փրչոց փոխան ,  
Բուսնին զըւարթ հոյլ վարդենիք .  
Ահա ցաւած ճակատէդ թառամ ,  
Կապել պըսակն մի անթառամ :

Կուգայ ցնծալով ևն :

Սիթէ տեսնէք դուք հեռըւանց ,  
Հայոց սրաթեւ մեծ ապագայ .  
Որոյ վերայ յերկնից բարձանց ,  
Փայլէ հրաշէկ աստղըն Հայկայ .  
Յայն ասպարէզ մեզ տալ հրաւէր ,  
Եւ առաջնորդ աւետաբեր :

Կուգայ ցնծալով ևն :

Մ. ՊԵՏԻՔԹԱՇԷԼԵԱՆ



## ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ Հայրենիքս զիս կը կանչէ ,  
Հեռու եմ Հայաստանէն .  
Հայու որդւոյն կը վայլէ ,  
Հեռանալ Հայաստանէն :

Միթէ արծաթ ոսկի գոհար ,  
Կ'սփոփէ՞ Հայաստանը ,  
Այն որ կ'ողբայ որդւոց համար ,  
Խղճալի Հայաստանը :

Խոր տխրութեան մէջ է թաղուեր ,  
Թագուհի Հայաստանը ,  
Բոպիկ ոտքով աղատ մաղով ,  
Կ'արտասուէ Հայաստանը :

Ընդուծ երկինք ալ չքիշեր ,  
Մոռցեր է Հայաստանը ,  
Անսիրտ Հայերն ալ չեն սիրեր ,  
Անուշիկ Հայաստանը :

Ո՛հ թողէք զիս խօսիմ աղատ ,  
Երգեմ միշտ Հայաստանը ,  
Անուշ երկիր կոյս անարատ ,  
Աննրման Հայաստանը :

Արեւ ծածկեր է իւր գէմքը ,  
Խաւար է Հայաստանը ,  
Հայոց արևը ալ մարեր է ,  
Սև հագեր Հայաստանը :

Թշուառ սրտիս ձայն կը կտրէ ,  
Ողբալով Հայաստանը ,  
Ո՛հ չիկայ Հայ , որ ըստփոփէ ,  
Նուաղեալ Հայաստանը :

Թէ և կըտրի իմ վերջին շունչս .  
Պիտի տուամ Հայաստան .  
Պլլու իմ մէյմ՝ իմ Հայրենեացս ,  
Հասցա մտնեմ գերեզման :

Անդորրու թիւն ես կը խնդրեմ ,  
Սիրելի Հայաստանին .  
Կտրել այս ձայնս չէ՛ չէ՛ կարող ,  
Սոսկումըն գերեզմանին :

Ա. ՀԱՅԿ.

---

## Ե Ր Գ

### ՅԱԽԱԳԻՆ

Իմ սիրելի զաւակուներս ,  
Կը թափառին օտար աշխարհ .  
Ես ո՛ւր գիմեմ , ո՛ւր փնտրուեմ ,  
Կը ծառայեն այլոց խոնարհ :

Եկայք որդեակք իմ,  
Ձեր մօրն այցելութեան :

Դարեր անցաւ լուր մը չառի,  
Իմ քաջերըս մեռան կորան .  
Կ'ուլամ արիւնըս կը սառի . . .  
Մեկը չ'ունիմ տայ ինձ դարման :

Եկայք որդեակք ևն :

Երիւնս ցամքած, սիրարս մաշած,  
Դեմքս է տխուր մինչ յաւիտեան .  
Եւ կարօտոյն իմ որդեկաց,  
Պիտի ինջնեմ սե դերեզման :

Եկայք որդեակք ևն :

Եւ դու հովիւ թափառական,  
Կերգես տխուր 'ի մէջ հովտաց .  
Ե'կ արտասուենք թանկ կորստեան,  
Տխուր մահուան մեր որդեկաց :

Եկայք որդեակք ևն :

Իսկ դու կուռնկ իմ Հայրենեաց,  
Գնա՛ հեռու աչքէս 'ի բաց . . .

Յետին ողջոյնս տար զաւակացս ,  
Զի կեանքիս մէջ յոյսս է մեռած ։

Եկայք որդեակք ևն ։

---

## ՊԱՐԵՐԳ

### ՎՍԼՅ

Ի խումբ 'ի պար ,  
Հայրենասէր պանդուխտ Հայք ,  
Ի թինդ մեր ոտից թող Մասեաց բարձունքն ։

### Մհեր զազոյ

Առ Հայս հանուր տան գանգիւն ,  
Հրաւեր կարդալ Հայ գիւցաղներուն ։

### Ի խումբ 'ի պար

Ո՛վ Հայրենեաց քաջ որդիք ,  
Մեր ոտից տրոփիւն բաբէ թնտացուց ։

### Մկնկալու

Հայ սրտերն բոցակէզ ,  
Յաղթական փառաց խմբէլ զհանդէս ։

Ս. Պ. Պ. ՓԱՓԱՋՆԱՆ



# ԲԱԺԱԿ ՈՂՋՈՒՆԻ :

ԱՌ

ՍԱՀԾԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչք զուարթունք՝ և ՚ի Ձեր թևս ապաստան ,  
Յայց ելլուք այսօր յանձկալին Հայաստան .

Բզճաղկապօսակդ ածէք այսր դքնար ,  
Որ երգէր երբեմն ՚ի դրախտս Ադենայ .  
Հանգուցեալ այժմիկ ՚ի շիրմաց սնար ,  
Չայն տուք զարթուցէք զորդիս Արամայ :

Ատի դիւցազունք ,

Գողեալ զդամբան .

Եւ անտի զուարթունք ,

Ողջն քեզ ողջն ,

Սահմանադրու թիւն :

Ո՛վ որ յեցեալ ՚ի տխուր սափոր դիւցազանց ,  
Գլծով յերկինս ածես նամէտ բիբս աչաց .

Ո՛վ հայաստանեաց ոգի սրբանուէր ,  
Ահա հաշտ ակամբ ժպտի քեզ Աստուած ,  
Պարզի երգներանգ լար կապոյտ յեթեր ,  
Դառնալ Աղաւնեակն ոստով ձիթենեաց :

Եփրատ առ Տիգրիս ,  
Որմեայն առ Սևան .  
Տալով աւետես ,  
Հնչեցեն միաբան .  
Ողջն քեզ ողջն ,  
Սահմանադրութիւն :

Այլ 'ի յաջ՝ սիրտ 'ի սիրտ՝ ոգի խառն յողի ,  
Մատիք օն անդր յասպարէզ՝ սիրտք հայեցի :

Օ, 'ի չքնաղ տեսիլ սարդի արդ յաչս  
իմ . . .

Ահա յոյս և սէր՝ որպէս զոյգ հրեշ-  
տակք .

Առաջնորդեն մեզ . . . ով Տէր . . .  
խաբիցիմ . . .

Ո՛չ , զայդ վկայեն սիրոյ այդ բաժակք . . .

Հայկեանք առ Հայկեանս ,  
Դարք դարուց՝ որ դան .  
Տալով արձագանս ,  
Կրկնեցեն միաբան .  
Ողջն քեզ ողջն ,  
Սահմանադրութիւն :

# Ի ՔԵՂ ԱՆԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ՝

Ի քեզ անկայ Հայաստան ,  
Ի քեզ մընամ Հայաստան .  
Ապրիմ մեռնիմ քեզ համար ,  
Անձս ու հոգիս տամ յօժար :

Աչքս բացի չբացի , զքեզ Հայաստան ես  
տեսայ ,  
Դեռ իմ երես ծաղր չեկած , ես ողբացի քո  
վերայ .  
Կայ և ցաւեր , վիշտ սաստիկ , զիս պատեցին  
չորս դիէն ,  
Եւ Հայաստան գոչեցի , աւերակաց առի ձէն :

Մայրս ծընաւ զիս 'ի ցաւ ,  
Աչս յաւերակոյ լացաւ .  
Բերկրանք և մի ոչ տեսի ,  
Երբ Հայաստան զքեզ տեսի :

Ախ Հայաստան , Հայաստան , անուանոյ մեռն  
նիմ Հայաստան .  
Երբեմն բերկրանք ցնծութիւն . այժմիկ ան  
կեալ կաս զընդան :

Սրտիւ սիրով կարօտիմ, մատաղ լինիմ քո  
հոգւոյդ,  
Որ զիս ծնար սնուցեր, և հաներ քաղցրիկ  
ծոցոյդ :

Այլ ես զքեզ միշտ լացի,  
Եւ յաւիտեան սլիտի լամ,  
Հոգիս հոգւոյդ փոխարէն,  
Տամ նազելի Հայաստան :

Իմ հայրենի Հայաստան, ինձ ոչ երբէք դու  
զուարթ,  
Երեւեցար միշտ անփառք՝ գետնին եղած  
հաւսար հարթ .  
Ինչ աչք տեսաւ չարտասուեց, քո հին աւուրց  
աւերակ,  
Ինչ սիրտ չղգաց քո շէն անշէն ապարանք :

Աչքքս թարթեմ, արցունք թափեմ,  
Ազի ջրով հողը թացեմ,  
Մինչեւ մեռնիմ տապան մրտնամ,  
Ոսկերտեօքս ողբամ ու լամ :

Ի քեզ անկայ ես յարգանդէ մօր իմոյ,  
Սէր քո սաստիկ զիս տաղնապէ՛ ՚ի ցաւ քո :

Օտար երկիր եմ տեսած , 'ի յաւերակս քո  
ճնայ ,  
Նուիրական արիւնոտ հողոյդ վերայ զարդա-  
ցայ :

Տուն Աստուծոյ Հայաստան ,  
Ա՛խ քո անուն հոգիս եհան .  
Հայոց պարծանք քաջաց մայր ,  
Ա յժմիկ ունայն և զրկեալ :

Երդնում 'ի Հայկ 'ի Մասիս թէ դու փուշ  
թով նորոգիս ,  
Շարժէ ուրեմն և շարժիր , արի վեր կաց զօ-  
րացիր .  
Սիրեմ ըզքեզ Հայ անուն , ազանց քաջաց  
պանծալի ,  
Դու Աստուծոյ սիրելի , ազգի մարդկան ցան-  
կալի :

Եհաս ահա դար խաղաղ ,  
Աւերակներդ կանգնին վաղ ,  
Որդեքդ լինին լուսաւոր ,  
Եւ զքեզ առնեն փառաւոր :



# ԳԵՐԵԶՄԱՆՔ

## ՀՅՅՈՑ

Սուրբ և տխուր դաշտեր գեղեցիկ,  
Քաջ որերոյն աճիւններով դեռահեղ,  
Ուր սուրբ շիրմաց ծածկէ տեսիլ խաղաղիկ,  
Զարմենազան հազար ծաղիկ գունազեղ :

Աւաղ Հայոց արևուն',  
Աւաղ Հայոց քաջերուն .  
Որոց կրբեմք մեք արիւն ,  
Օրհնեալ է Հայք , Ձեր անուն :

Ո՛վ մեհ նախնեաց , կտրիճ եղբարց սուրբ շի-  
րիմ ,  
Զայն մը տուէք , որ մեր արտասուքը ցամքի .  
Վանկ մը հերիք ցաւած սրտիցս որ բերկրիմք ,  
Մեզ ժրպտեցէք շիջեալ աստ Հայրենի :

Աւաղ Հայոց և այլն :


Բացէք , բացէք մամուտ սափորք սրբակիրք ,  
Յուցէք քաջացն ոսկերոտիքն համբուրեմք .  
Եւ համբուրէ մեր և սգաւոր Հայրենիք ,  
Մեք հարազատ որդիքս ողբամք ու երգենք :

Աւանդ Հայոց և այլն :

Գետք Հայրենիք քանի 'ի Ձեզ կան ալիք ,  
Եւ դուն , լուսին , քանի կանդեղդ վառ մնայ ,  
Դուն ալ սոխակ քանի ունիս դայլայլիկ ,  
Երգեցէք զՀայն , լսեն սերունդք ապագայ :

Աւանդ Հայոց և այլն :

ՆՇԱՆ ՁՈՂԱԳԵԱՆ



Կար ժամանակ , որ և Հայերն ,  
Աբբայ իշխող ունէին .  
Եւ զինավառ անթիւ զօրքեր ,  
Իւրեանց երկրում սրահէին :

Կար ժամանակ որ և նոքա ,  
Նման ծագկած ազգերի .  
Ջարդարելով աշխարհ Հայկայ ,  
Փայլում էին անուանի :

Իայց այժմ անտէր , անթագաւոր ,  
Գերի , ծառայ ցաւագին .  
Այս տեղ այն տեղ խիստ չքաւոր ,  
Չարչարվում են գլխովին :

Այժմ նորա անմխիթար ,  
Հայրենիքից զրկուելով .  
Չայ ե՛ն կանչում թշուառաբար ,  
Հալածանքներ կրելով :

---

ԵՐԳ

ՌԱՄԿԱՍՆ

Կրուունկ ուստի՞ կուգաս ծանայ եմ ձայնիդ ,  
Կրուունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս .  
Մի վաղեր երամիդ շուտով կու հասնիս ,  
Կրուունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս :

Թողերեմ ւ՛եկեր եմ մըլքերս ու այգիս ,  
Քանի որ ախ կանեմ կու քաղվի հոգիս .  
Կրուունք պահ մի կացիր՝ ձայնիկդ ՚ի հոգիս ,  
Կրուունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս :

Քեզ խապար հարցնողին չես տանիր տալապ ,  
Չայնիկդ անուշ կուգայ քան ըզջրի տօլապ .  
Կրուունկ պաղտատ իջնուս՝ կամ թէ ՚ի հալապ ,  
Կրուունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս :

Սրտերնիս կամեցաւ ելանք գընացանք ,  
Այս սուտ աս տընվորիս տէրտերն իմացանք .  
Ազու հացկեր մարդկանց կարօտ մընացանք ,  
Կըռուենկ մեր աշխարհէն խապրիկ մի չուենիս :

Աս տընվորիս բաներն կամաց կամաց է ,  
Եթէ Աստուած լըտէ դունակն բացցէ .  
Ղարիպին սիրտն է սուգ՝ աչերն ՚ի լաց է ,  
Կըռուենկ մեր աշխարհէն խապրիկ մի չուենիս :

Աստուած՝ քեզնէ խնդրեմ մուրվէթ ու քերէմ,  
Ղարիպին սիրտն է խոց , ճիկերն է վէրէմ .  
Կերած հացն է լեղի՝ ու ջուրն է հարամ ,  
Կըռուենկ մեր աշխարհէն խապրիկ մի չուենիս :

Ո՛չ զուր օրըն գիտեմ ո՛չ ըզկիրակին ,  
Զարկած է զիս շամիուրն բունած կրակին .  
Այրիլս չեմ հոգար՝ ձեզնէ կարօտ եմ ,  
Կըռուենկ մեր աշխարհէն խապրիկ մի չուենիս :

Հաւատով պառկեր եմ , ներքեւ է ֆըշխի ,  
Հոտոյն այլ չեմ գարշիր կը թըվի մուշկի .  
Շատ հասրէթ մընացանք անկողնու տօշկի ,  
Կըռուենկ մեր աշխարհէն խապրիկ մի չուենիս :

Պաղտատու կուգաս՝ կերթաս 'ի սէհրատ ,  
Թղթիկ մի գրեր եմ տամքեղ ամանաթ .  
Աստուած թող վկայ լինի քո վերադ ,  
Տարեալ հասուսցես զայդ իմ սիրելեաց ,  
Կրուունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս :

Վրեր եմ մէջ թղթիս՝ թէ հոս մնացի ,  
Օրիկ մի օրերուն զաչերս չի բացի .  
Սիրելիք ձեզանէ կարօտ մընացի ,  
Կրուունկ մեր աշխարհէն խարպիկ մի չունիս :

Աչունն է մօտեցեր գնալու ես թէստիր ,  
Երամ ես ժողովեր հազար և բիւր .  
Ինձ պատասխան չի տ'ւիր ելար գընացիր ,  
Կրուունկ մեր աշխարհէն գընա՛ հեռացիր :

Այսօր զարիպուծիւնն միակ միաւոր ,  
Հոգւով և մարմնով ես եմ մեղաւոր .  
Սուրբ Սարգիս օգնական ճերմակ ձիաւոր ,  
Կրուունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս :

---

### ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան երկիր դրախտավայր ,  
Դու մարդկայնոյ ցեղիս որբան .

Դու և բնիկ իմ հայրենիք ,  
Հայաստան , Հայաստան , Հայաստան :

Ի վեհ անունդ սիրտ իմ ո՛հ յոյժ ,  
Ոգեւորի 'ի նոր խրախոյս .  
Եւ անձկայրեաց 'ի քեզ յուսամ .  
Ի քեզ , 'ի քեզ յոյս իմ միայն ,  
Հայաստան , Հայաստան , Հայաստան :

Հայաստան անուն փարելի ,  
Ի քեզ հանգիստ Նոյեան տապան .  
Եգիտ և քեւ ապրեցաւ Նոյ ,  
Հայաստան , Հայաստան , Հայաստան :

Գեաք քաջառաջք ադենաբու զիս ,  
Զհողդ բարի առնեն յուռթի .  
Քեւ ապրիմ ես , քեւ միշտ ցնծամ ,  
Քեւ , քեւ պանծամ փառք իմ միայն ,  
Հայաստան , Հայաստան , Հայաստան :

Հայաստան ծնող դիւցազանց ,  
Եւ հրաշալեաց հանգիսարան .  
Քո զեփիւռին քաղցր է շքնչիւն ,  
Հայաստան , Հայաստան , Հայաստան :

Հայկ , Արմենակ , Արամ , Տիգրան ,  
 Տրդատ , Սմբատ , Վարդան , Վահան .  
 Զոր շնչեցին և զօրացան ,  
 Զքեզ յիշեմ զքեզ սիրեմ .  
 Զքեզ , զքեզ , սէր իմ միայն ,  
 Հայաստան , Հայաստան , Հայաստան :

Յ. ՄԻՐԶԱ ՎԱՆԱՆԴԵՅԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

## ՏԱՃԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հայաստանի բարձր ու շքեղ սարերէն ,  
 Սաւառնաթեւ կը սրանայ սիրտ 'ի խինդ .  
 Սուրբ հրեշտակն աւետաբեր արդ ճեղով ,  
 Ողջունել զօրս այս միութեան Հայերուն .  
 Ձեզ աւետիս բերէ զուարթ բերկրութեան ,  
 Հայեր , ուրախ , ալ չէ տրտում Հայաստան :

Ելէք Տաճատեան ,  
 Որդիք սիրարծարծ .  
 Տօնել քաղցր 'ի ձայն ,  
 Զօրը ցնծազգեաց :

Ահա սպայծառ կը շողշողի սուրբ աստղըն ,  
 Ի ջինջ բեւեռ մեր ցանկալի Հայրենեաց .  
 Հրճուի Մասիս , ցնձան Եփրատ և Տիգրիս ,  
 Ազնիւ Նախնեաց խայտան ոսկերքն 'ի շիրիմս .  
 Խրախոյս տալով Հայոց չքնաղ միութեան ,  
 Հայեր՝ ուրախ , ալ չէ տրտում Հայաստան :

Ելէք Տաճատ . . . եւն :

'Իրօշակն ահա՛ Սուրբ Վարդանայ կը բացուի ,  
 Օն 'ի հանդէս ելէք , գոչէ ձեզ Տաճատ .

Օն 'ի հրճուանս , արդ մերժեցաւ սուգ և  
 կոծ ,  
 Եւ Հայրենիք նոթ ցնձութեան առաւ ձորձ .  
 Ձեզ աւետիս կուտայ յաւէտ բերկրութեան ,  
 Հայեր՝ ուրախ . ալ չէ տրտում Հայաստան :

Ելէք Տաճատ . . . եւն :

Կ. Վ. ՊԱՂՃԵԱՆ



ՅԱԻՈՒՐ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ

Ս.ՁԳՍՅԻՆ ՍՍ.ՀՄՍ.ՆԱԴՐՈՒԹԵԱՆ

20 ՕԳՈՍՏՈՍ 1860

Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր ,  
 Ի՞նչ կը յապաղէք ելնել 'ի հանդէս .

Ի՞նչ կը յապաղէք . — սիրտ կը դիմանայ ,  
Սիրտ որ ազգասէր ըլլալ կը ցանկայ :  
Տեսնել հայրենեաց այսքան բիւր աղէտ ,  
Եւ դու անտարբեր ցարդ մնալ յաւէտ .  
Խեռ ատելութեան և չար նախանձու ,  
Սերմերն ու ոգին հեռո՛ւ մղենք հեռու :  
Սիրտ սրտի կասուած , թեւ թեւի տուած ,  
Հայրենեաց սիրոյ ասպարէզն բացուած .  
Օն վաղենք յառաջ 'ի սուրբ խաչն վստահ .  
Օն երթանք յառաջ , և անձնանուէր ,  
Հայրենեաց օգտին ըլլանք ուխտանուէր :  
Հայ մի վհատիր , սիրտ ա՛ռ և սիրտ տուր ,  
Տկարք զօրանան , քաջք խրախուսին .  
Վատերը բացուին , վատերը զատուին ,  
Ճշմարիտ Հայերն յառաջ թող անցնին :  
Խաչ , սէրն են նշան ճշմարիտ Հայուն ,  
Խաչ , սէրն են սլարծանք ճշմարիտ Հայուն :

Սիրոյ դըրօշներ ,  
Թող արդ սլարդուին .  
Հաշտութեան ձայներ ,  
Թող արդ հնչուին :

Հայն մէկ սիրտ եղաւ ,

Սիրով միացաւ .

Սուտ են որ ըսեն ,

“ Հայք զիրար կատեն ” :

Սուրբ Արարատեան մայր աթոռոյն գիրիւր ,  
Եկէք , հայկազունք եկէք միանանք .

Եւ սփոփենք մեր վշտացած մօր սիրաւ ,  
Օրհնելով Տէրը , որ մեզ պարգեւեց :

Մեր Ազգին կապն ու հոգին ,

Ազգային Սահմանադրութիւն .

— Յաւերժացի արդիւնաւէտ :

Ս. Պ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆՅՅ

---

## ԱՐՇԱԼՈՅՍ ՀԱՅԱՍՏԱՆ

Ի ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայաստանեայց սեւ տիրազին օրերը ,  
Փարատեցան , նոր հօրիզոն բացուեցաւ .

Մեզի համար չեն այն մթին ամպերը ,

Զի արշարլոյս սրայծառ դարձեալ փայլեցաւ :

Յուրախութիւնն , ո՛հ Հայեր ,  
Որդիք Հայկայ և՛ Արամայ .  
Ձեզ փառաւոր սողոտայ ,  
Հորդեն երկինք լուսաբեր :

Դուք դիւցազանց ձեռ էք , Հայեր , քաջ եղիք ,  
Յառաջ գացէք , յառաջ , ահա՛ ասպարէզ .  
Մայր Հայաստան ձեզ կը նայի աւասիկ ,  
Մեղմացուցէք իր արտասուքն աղեկէզ .

Թշուառութեան քաժակը ,  
Մինչեւ տակը քամեցինք .  
Արդ ուղարկեց մեզ երկինք ,  
Աւետաբեր հրեշտակը :

Այն հրեշտակը որ Վարդանայ վեհ ոգին ,  
Ի՛նչապարի նահատակաց սուրբ գունդը  
Ներկայացոյց Ամենակալ Արքային ,  
Մինչ կրակապաշտ Պարսիկն երթայր անդունդը :

Արդ՝ ձեզ կուգայ , հայկազունք ,  
Նոր աւետիս բերելով .  
“ Ձէ՛ այլ ձեզ բաղդըն խուով .  
Դուք քաջարեաց , ո՛հ մանկունք ” :

Օ՛ն խայտաջէք , Գողթան երգեր թո՛ղ հըն-  
 չեն ,  
 Թո՛ղ արձագանք տան և հովիտք , բլուրներ .  
 Մեր սիրտերը , որ սուրբ սիրով կը արտփեն ,  
 Թո՛ղ միանան ու կորնչի անսուրբ հեռ :

Ի՛ամեն տարի ցնծութեամբ ,  
 Մէք այս շքեղ հովտին մէջ .  
 Հեշտին պարուց ելեւեջ ,  
 Ընեմք դարձեալ միութեամբ :

ՍԵՄՈՆ ԼԱՅԿ Մ. ՅԵՂԵՆՍԵ



## Ի ՀԱՆԴԷՍ

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հրեշտակ Մասեաց մրտենիներ ՚ի ձեռին ,  
 Արդ մեզ ձօնէ համբոյր սիրոյ կաթոգին ,  
 Մեզրը հոսին իր գեղեցիկ շրթունքէն ,  
 Վարդեր ծըլին իր զուարթագին ժրպիտէն :

Իւր մասունք կը հիւսեն ,  
Դիւցազանց պերճ պսակներ .  
Հայ բաղդին վրայ սփռեն ,  
Յուսաշող նշոյլներ :

Յաւերակաց Հայաստանի երգ հնչենք ,  
Տան արձագանք այն սրտերուն որք քաջ են .  
Աւիք՝ զալիս հեղահամբոյր ողջունեն ,  
Ծաղիկք՝ ծաղկանց թեթեւ թեւօք կը գդուեն :

Այն քնքոյշ վարդենիք ,  
Զոր երկինք մեզ աըւին .  
Ո՛հ եղան հովանիք ,  
Անմեղաց սև բաղդին :

Հայուն սրտին խորին վերքերն թաղուեցան ,  
Ժամանակին հզօր ձեռօք ՚ի դամբան .  
Հայուն աչքին ալ քաղցրանան դառն արցունք ,  
Սէր կը հնչեն մինչդեռ իրեն պարզ շրթունք :

Վարդանայ վեհ դափնիք ,  
Թո՛ղ նորէն ալ ծըլին .  
Մինչ Հայկաց քաջ որդեք ,  
Զուարթ երգեն Հայրերնին :

Մեր արտասուաց մէջ մարեցան ո՛վ Հայեր ,  
Աստուածային այն ահաւոր կայծակներ ,  
Երբ հաշտութեան ձայնք կրկնեցին ամեն  
սիրտ ,  
Երբ քաղցր աչօք մեզ ժպտեցաւ ո՛հ Երկինք ,

Ընդ դարձաւ Աղաւնեակն ,  
Տալով մեծ աւետիս .

Զուարթ բերաւ յաղթանակն՝  
Հաշտութեան վեհ Աղբին :

Օ, արթնուն քաջերն ՚ի բնագաւառն ՚ի հանը  
դէս ,  
Ո՛ւր պերճ փառաց եղեւ որրան և՛ ասպա  
րէզ .  
Հրճուի երկիր , ցնծան երկինք զուարթագէմ ,  
Մինչ գայ յուսոյն չքնաղ հրեշտակ երկնա  
ճեմ :

Երկնային զուարթունք ,  
Ո՛հ սիրոյ երգերով .

Կը նետեն մեզ ծաղկունք ,  
Անուշիկ նայուածքով :

Ընհուն վշտացդ մէջ տեն Ռգիդ կուսական ,  
Որդիքդ կնչպէս արցունքդ սրբել խոստանան .

Լանջք Հայկազանց քաղցրիկ երգերդ կը կըրկ  
նեն .

Հայոց կուսանք քայլերուդ տակ վարդք սըվ  
ուեն :

Բրաբիոն մանուշակ ,  
Ո՛վ սիրուն Հայրենիք .  
Պիտ՝ հիւսուին քեզ պսակ ,  
Մինչ հաշտ են մեզ երկինք :

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ



Ի ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայուն աչքէն ալ չը հոսէ դառն արցունք ,  
Հերիք լացաւ , հերիք հեծեց իւր բաղդին .  
Հայն իւր վշտերըն մուցած տայ ընկերին ,  
Սիրոյ համբոյր , սիրոյ ժըպիտ եւ ծաղկունք :

Նոյեան աղաւնին ,  
Ձիթենեաց ճիւղեր :  
Սփռելով գետին ,  
ՀԱՇՏՈՒԹԻՒՆ քերէր :

Ահա եւ այսօր ՍԱՏԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ,  
Իբրև աղաւնին բերաւ Հաշտութիւն .

Ոսկի թելերն թող հնչէ հայ քնար ,  
Որոց ննջեն ընդ հովանեաւ սուրբ շիրմաց :  
Համբոյր սիրոյ դրօշմեն յերեսս իրերաց ,  
Խաղաղութեան ձայնիւ թնդայ թող աշխարհ :

Չայն տուք դիւցազանց ,  
Որ Արտազ ննջեն . . .  
Աստեղք Հայկազանց ,  
Նորալոյս փայլեն :

Ազ օիրտ սրտի խառնէ միութիւն ,  
Զի յաւերժացի ՍԱՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

---

## Պ Ա Ր Ե Ր Գ

Հայկազունք պար բռնենք  
Թև 'ի թև օն ելնենք  
Յնծու թեան ձայներով  
Եւ զուարթ սրտերով

Զի ահա 'ի նոր բաղդ  
Չայն կուտայ երկինք արդ

Ի սուրբ կոչում ուխտեմք Հաստատ  
Անձնուհրդ զոչ պատրաստ :

Ս. Գ. Գ. ՓԱՔԱԶԵԱՆՅ

ԵՐԳ

Մ Ե Ծ Ի Ն Վ Ա Ր Դ Ա Ն Ա Յ

Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

որ

ԿԱՏԱՐԵՑԱԻ Ի ԴԱՇՏՆ ԱԻԱՐԱՅՐԻ

Հուր բարկութեան համայն հայոց .  
Բորբորեալ զերդ բոց բարկաճաթ .  
Ու կայծականցրս բիւր բիւրոց ,  
Զարթոյց ՚ի մարտ սարս սառնապատ :

Օ ի վարանիմք արդ աստ եղբարք ,  
Դատարկ ձեռամբ , դատարկ ձեռամբ .  
Ձեռամբ յարտաղ տղմուտ զն դրոյդ ՚ի դրոյդ ,  
Ի դրոյդ թռչիմք սրանամբ , սրանամբ , սրա  
նամբ :

Հուր զէն 'ի ձեռին  
Ու վրէժ ահագին  
Սղասեն և կան  
Քաջք Արշակունեան

Եւ յոր երկինք հանդիսատես  
Զաշխոյժ նախնեաց հեղու 'ի մեզ

Հապ օն քաջք քաջաց  
Ընդ սասան հուրծս  
Մխեցուք միունս  
Ու ժգին 'ի հարուած

Ռ. ՄԷՅԷՅԷՅԱՆ

---

ՄԻՍԿՆԱԿԱՆ ԿՈՒՆ



# ԱՆՁՈՒԿՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

## Ա.

Հայաստան քաղցր իմ Հայաստան ,  
Ողիքս յանունդ հալեցան .  
Մինչև ցերբ ես 'ի քէն պանդուխտ ,  
Ողւայս իմ երբ լըցի ուխտ :

Արդեօք աչքս անցկալից ,  
Երբեմն ըղքեղ տեսե՛ն :  
Աչքս այս արտասուալից ,  
Երբեք դադարեօցե՛ն :

Շուրթն իմ 'ի հողդ կենսաւոր ,  
Տացե՞ զհամբոյրն ուխտաւոր ,  
Արդեօք զլուխս վըշտակած ,  
Հանգիցե՞ քոյդ 'ի ծոց :

Հայաստան սէր իմ Հայաստան ,  
Ողիքս 'ի տենչդ հալեցան .  
Մինչև ցերբ 'ի քէն պանդուխտ ,  
Սրտիս իմ երբ լըցի ուխտ :

## Բ.

Հայաստան , պերճ իմ Հայաստան ,  
Ո՛վ երկիր նուիրական ,

Հընոյ կենաց և որորան ,  
Հէշտարար երկնից խորան :

Ի .քո սուրբ հովանիս ,  
Ո՛ զնրժդէհ տանէր զիս .  
Ո՛ ՚ի ստուերսդ Երազմոյն ,  
Ըզնախնեացս հեղցէ քուն :

Ընմահու թեանց վեհարուն ,  
Ծըծել անդ զօգ և զաւիւն .  
Եւ զաստեացըս վըշտաց ,  
Գըտանել կատարած :

Հայաստան՝ իմ քաղցր Հայաստան ,  
Ոգիքս յանունդ հալեցան .  
Մինչև ցերբ ես ՚ի քէն պանդուխտ ,  
Սրտիս իմ երբ լըցցի ուխտ :

Գ .

Հայաստան , սիրուն Հայաստան ,  
Յուսոյ խարխախ մարդկութեան .  
Դու ու իմ լոկ ակրնկալեաց վայր ,  
Յոր աչք իմ ձըգին յամայր .

Ո՛ր զմին դէժ տայր լինուլ ,  
Զիմս ըզձից 'ի.բեզ հայլ .  
Ո՛ր զփափաքս յարտե ,  
Իբր ըզսիւդ մի թեթե .

Հասուցանէր մինչ առ .բեզ ,  
Եւ զայս ողջոյնս սրտակէզ .  
Եւ զհառաչս ողւոյս բիւր ,  
Տո՛ր ընդ բլուր տայր 'ի սփիւռ :

Հայաստան , քաղցր իմ Հայաստան ,  
Ողիքս 'ի տենչդ հալեցան .  
Մինչև ցե՛րբ ես 'ի.բէն պանդ ուխտ ,  
Սրտիս իմ երբ լըցցի ուխտ :

Գ .

Հայաստան , իմ վեհ Հայաստան ,  
Երանութեան օթարան .  
Ո՛ր տայր զաւուրս իմ ցաւալիս ,  
Փոխել ս'հ երանելիս .

Ոչ փառօք փայլելով ,  
Ղաղանցուկ ոչ ոսկւով .  
Այլ 'ի զ.բեզ տեսանել ,  
Սուրբ ըզսարսդ ողջունել .

Ջաւերակօք քո փարել ,  
Եւ զհարցս անդուստ ձայն լըսել ,  
Եւ զնոցին հետս անանց ,  
Համբուրել գեանամած :

Հայաստանն քաղցր իմ Հայաստան ,  
Ողբս յանունդ հալեցան .  
Մինչև ցերթ ես 'ի քէն սանդուխտ ,  
Սրտիս իմ երբ լըցի ուխտ :

Ե .

Հայաստանն անոյշ Հայաստան ,  
Դու զոգիս լընուս համայն .  
Դու խրատոյս , փառք իմ և վիշտ ,  
Յոր սիրտ իմ թըռանի միշտ :

Ես պատիւ , զինչ և զերկ ,  
Խանդ , ըղշունչ և սին զերդ .  
Ի բաղինդ արգագիր ,  
Կախեցից լիածիր :

Մի լոկ խնդրեալ փոխարէն ,  
Ձի ըզքեզ աչք իմ տեսցեն ,  
Ձի մի ցմահ անձկալից ,  
Ձերդ սերկեան գոչեցից :

Հայաստանն իմ քաղցր Հայաստան ,  
 Ոգիքս յանունդ հալեցան .  
 Յինչև ցերբ ես ՚ի քէն պանդուխտ ,  
 Սրտիս իմ երբ լըցցի ուխտ :

ԽՈՐԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Համո ու սէնա օլ Խիւտայի դատիրէ ,  
 Քի սէմատէն լուծֆ իլէտի ալէմէ .  
 Զ իատարի էնտէր ճիհան քերէմրիզ ,  
 Թաճտարի սուլթան ԱՊՏԻԼ ԱԶԻԶ ԽՍՆ :

Շէհրի իգպայլ իլէ ատալթքեարի ,  
 Օլսուն սէրիր սալթանաթտէ էյեամի ,  
 Քի իտուպ պէնտի շէֆաաթլէ գուլլէրի ,  
 Բայեթ իտէր մէշազգաթտէն հէր պիրի :  
 Էյ շակիրտան քեաֆֆէմիզտէն եէք տիհան ,  
 Հազգ ազիզէ շիւքր իտէլիմ պի փայան .  
 Գըլսըն հիւսնի նազար իլէ ֆիրավան ,  
 Պէջլէ եէվմի ֆիւրուզայի սայէպան :

ՆԱԳԱՐԱԹ

Իմրանիլէթ պախշէնտէյի հազգ ճէլիլ ,  
 Շահըմըզն իթսիւն հօմրիւնիւ թավիլ :

ՅՈՐԴՆԱՅ 4. Փ.

ԵՐԳՆԵՑ Ա. Թ.

# Ե Ր Գ Ք

Գ . ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

Ա.ԶԳ.ԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԺԱՄ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Հովիտ ծածկեալ 'ի ծոց լերանց ,  
Գողարիկ պատկեր իմ Հայրենեաց .  
Երբորդ անգամ սիրոյ նուազ ,  
Քեզ գայ ձօնել Հայ պատանեակ :  
Օ՛ն երգեցէք Հայկեան զուարթունք ,  
Սիրոյ է ժամս , գաղբին արցունք :

Հրեշտակն Հայոց յերկնից սլանայ ,  
Նայուածքներէն ժբսիտ շողայ .  
Եւ շանդ ժպտեն վերականգնին ,  
Համբ աւերակք Հայաստանին :  
Հայկեան կուսանք յ՛ն փութացէք ,  
Նորածին վարդըս սփռեցէք ,

Փայլուն աստղեր ահա շողան ,  
Երբ հաշտութեան երկնից նըջան .  
Հայկեանն փառաց՝ նոր զարդարել ,

Հայկեանքնար՝ նոր երգք տաւ զել :  
Հայ սրատանիք Օ՛ն ձայնեցէք ,  
Գողարիկ ձայնով ՕԲՍ օրհնեցէք :

Ո՛հ Հայրենիք ալ թնոյ չի լան ,  
Մատեաց սարեր արձագանիք տան .  
Աւ Եփրատէս , Տիգրիս գետեր ,  
Ո՛ւր կան թաղուած քաջաց սոկերք .  
Հայ ծերունիք վիշտ ձեր մտցէք ,  
Մանկանցդ ճակտէն ըզոյս տեսէք :

ԱՐՐԱԶԱՄ Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

---

## ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒԹԸ

Մայր-Արարթի ամերով ,  
Քայլամուրդ գնում եմ .  
Հին հին դարուց յիշատակ ,  
Ալեաց մէջը սլլտորում եմ :

Բայց նորա միշտ յեղյեղուկ ,  
Պշտոր ջրով եղերբին .  
Դարիւ դարիւ խփելով ,  
Փախչում էին լալագին :

Արաքս՝ ինչո՞ւ ձկանց հետ ,  
Պար չես բռնում մանկական .  
Դու դեռ ծովը չը հասած ,  
Սգաւոր ես ինձ նման :

Ինչո՞ւ արցուք ցայտում են ,  
Քու սէգ հպարտ աչերից .  
Ինչո՞ւ արագ փախչում ես ,  
Այդ հարազատ ափերից :

Մի պղտորիչ յատակդ ,  
Հանդարտ հոսէ խայտալով .  
Մանկութիւնը քու կարճ է ,  
Ըստ կը հասնիս դէսդ 'ի ծով :

Վարդի թփեր թնփ բուսնին ,  
Քու հիւրընկալ ափի մօտ .  
Սոխակները նոցա մէջ ,  
Երգեն մինչև առաւօտ :

Մշտադալար ուռիներ ,  
Սառ ծոցի մէջ քու ջրին .  
Ճկուն սատրն ու տերև ,  
Թնփ թաց անեն տապ օրին :

Ափերիդ մօտ երգելու ,  
Հովիւք թող գան համարձակ .  
Գառն ու ուրբ ու վճիա ,  
Զուրը մտնեն միշտ արձակ :

Սէջքը ուռցուց Արաքսը ,  
Փրփուր հանեց իւր տակից .  
Ամպի նման գոռալով ,  
Էսպէս խօսեց յատակից :

« Խիզ՛նիս , անմիտ պատանի ,  
Ներհըս ինչո՞ւ դարեւօր .  
Վրդովում ես , նորոգում ,  
Իմ ցաւերը բիւրաւօր :

Սերելի մահից յետ ,  
Ե՛րբ ես տեսել , որ այրին  
Ոտից ց՛գլուխ պճնուի ,  
Իւր զարդերով թանկագին :

Որի՞ համար զարդարուիմ ,  
Որի՞ աչքը հրապուրեմ .  
Շատերին՝ ինձ ես ատելի .  
Շատերին՝ ես օտար եմ :

Իմ ազգակիր գիժ Քուռը ,  
Թէ և այրի ինձ նրման .  
Ըստրկօրէն տանում է .  
Գայթակղիչի կուռ շղթան :

Բայց նա ինձ չէ օրինակ ,  
Ես Հայ հայիս կը ճանչնամ ,  
Օտար փեսայ չուզելով ,  
Ես միշտ այրի կը մընամ :

Կար ժամանակ , որ ես էլ ,  
Շքեղազարդ հարսի պէս :  
Հաղար ու բիւր պչրանքով ,  
Փախչում էի ամերէս :

Յատակս պարզ ու վճիտ ,  
Կոհակներս ոլորուն .  
Ըուսաբերը մինչև ցայգ ,  
Զրիս միջին էր լողում :

Ի՞նչս մնաց այն օրից ,  
Ո՞ր ջրամօտ գեղերս .  
Ո՞րը իմ շէն քաղաքից ,  
Ո՞ր բերկրալի տեղերս :

Տուրբբ ջրի ամեն օր ,  
Իր սուրբ ծոցէն Արարատ .  
Մայրախրնամ ինձ սնունդ ,  
Պարգեւում է լիառատ :

Բայց ես այն սուրբ ջրերով ,  
Սուրբ Ակոբի աղբիւրին .  
Պիտի ցօղեմ արտօրայ քն ,  
Իմ ատելի օտարին :

Կամ կենսատու իմ ջրով ,  
Ափերիս մօտ կըկզած .  
Իր աղօթքը կատարէ ,  
. . . Կամ . . . հոտած :

Մինչ իմ որդիք (ո՞վ գիտէ) ,  
Ծարաւ , նօթի , անտէրունչ . ,  
Օտար աշխարհ յածում են ,  
Թոյլ ոտքերով կիսաշունչ . . . :

Հեռու հեռու քչեցին ,  
Բնիկ ազգը իմ Հայկեան .  
Նոցա տեղը ինձ տուին ,  
Անգութ խուժանքն Պարսկական :

Դոցան համար զարդարեմ,  
Իմ հիւրընկալ ամերը .  
Եւ կամ դոցան հրապուրեմ,  
Ճպուտ, պլշած աչերը :

Քանի որ իմ զուակուներ ,  
Էսպէս կու մընան պանդուխտ .  
Զիս միշտ սգաւոր<sup>ը</sup>կը տեսնէք ,  
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ . . :

Լչսջխօսեց Արարքսը ,  
Յորձանք տուեց տհազին :  
Օղակ օղակ օձի պէս ,  
Երաջ սողաց մոլեգին :

ԲԱՄԱՐ ԲԱԲԻՊԱՏ

---

## ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութեան օրեր , երազի նման (1) ,  
Անցաք գնացիք , այլ չէք դառնալու :  
Ո՛հ դուք երջանիկ , ո՛հ անհող օրեր ,  
Ընդունակ միայն ուրախացնելու :

---

(1) Տես Հիւսիսայնայն . 1839 թիւ 9 :

Թող նա թարգմանէ զրպարտութիւնը ;  
 Թող մխիթարուի ծովի ամերում ,  
 Մենք ազատութեան ենք միայն թարգման ,  
 Միայն այս խօսքըս ունիմք բերանումք :

Ո՛վ Հայր , ո՛վ դու Հայր , որ երկնքում ես ,  
 Խընայիր թշուառ մեր անտէր ազգին ,  
 Մի տար զո՛հ գնալ թշնամիների ,  
 Նա այլ չէ լրսում Դելֆեան հարցուկին :  
 Կո՛ն Էմմանուէլ ՄԻՔԱՅԷԼ ՆԱԹԱՆՈԾԱՆՑ



## ՀՐԱԺԵՇՏ

ՔԱԶԱՄԻՐՏ ԶԻՆՈՒՈՐԻՆՆ

Մեր Հայրենեաց փափուկ հողեր ,  
 Արեան գետակ են դարձուցեր ,  
 Եւ այն դաշտերն Ազատութեան ,  
 Թշնամեաց սուրբ կը շողշողան :

Բռնաւորին սեւ թեւոց տակ ,  
 Քանի դարեր հեծենք թշուառք .  
 Արիւն արցունք գիշերն ամեն ,  
 Հերիք ինջան մեր աչքերէն :

Քաշած աղէտքըս ալ կը բաւեն ,  
Վրէժխտնրու թեան հրաւէրք հնչեն .  
Աւ չեմ կրնար շղթայից տակ ,  
Գերի տեսնալ իմ քորքն ու եղբարք :

Այսօր ինձի թնղ օր մ'ըլլայ ,  
Յաղթանակի և կամ մահուան .  
Գերի մնալէն քաղցր է ինձ սհ ,  
Հանգչիլ փառօք նախնեացս 'ի հող :

Օ ի սրն արդեօք իմ հայրերէն ,  
Հանգիստ մահուամբ լուռ ննջած են . . .  
Այլ պատերազմ և յաղթանակ ,  
Միշտ թողուցին մեզ յիշատակ :

Օն խաչանիշ դրօշովս փութամ ,  
Հայրենաւորէ՛ժ 'ի պատերազմ .  
Վատ ազգերուն գահն կործանեմ ,  
Եւ յաղթական նըւագս երգեմ :

Օ ի խրախուսեն իմ Հարց ստուերք ,  
Ազգիս շղթայք ալ խորտակել .  
Իմ Հայրենեաց քաղցր ապագան ,  
Սրտիս կուտայ ոյժ քաջութեան :

Այո, հոն տեղ մահն ինձ քաղցր է,  
Ազատութեան երբ փողն հնչէ .  
Հոն զոհուեցան շատ մեծ քաջեր,  
Պարզէլ յեթերս ազատ դրոշներ :

Հոն թշնամոյն արիւններով,  
Դիականց վրայ անջինջ գրբով .  
Իմ հայրենի փառքըն դրոշմեմ,  
Եւ իմ ճակատս անոնց ցուցնեմ :

Իայց Աստուծմէ այս կը խնդրեմ,  
Որ օր մ'ուրախ սրտով տեսնեմ .  
Ազատութեան յաղթանակով,  
Վերադարձն իմ սուրբ հարցըս քով :



ԱՌ

## ԱՍՏՂԸՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Մեր սիրուն հայրենեաց,  
Բեւեռը շողշողող .  
Մեր սիրուն քաջազանց,  
Աճիւններն ցարդ հսկող :

Պայծան աատղ որ այժմիկ ,  
Լոյսդ կ'ընես թափանցիկ .  
Մինչև Հայ սրանդխտոց ,  
Սրտերուն կուտաս բոց .  
Ո՛վ քաղցր Յոյս , դու մխիթար ,  
Տարագիր Հայոցս թշուառ .  
Ի՛նչ աշխոյժ նոր 'ի նոր ,  
Ի՛նչ աշխոյժ ոգևոր .  
Կարծարձես սրտերնուս ,  
Ո՛վ Հայոցս միակ Յոյս :

Չէ՛ , ալ չվհատիք բնաւ ո՛վ Հայեր ,  
Մեզ քաջալեր են Յոյս և Ժամանակ .  
Չէ՛ ալ չվհատիք բնաւ ո՛վ Հայեր ,  
Ժամանակին հետ յառանջ ընթանանք ,  
Յառանջ ընթանանք , հոն ուր հրաւեր ,  
Հրաւեր կարդան մեզ նախահարց աստղեր :

Թէ Հայկայ որդիք եմք ,  
Թէ Հայկայ արիւն կրեմք ,  
Ամենքս ալ 'ի սուրբ սէր ,  
Հայրենեաց 'ի նուէր .  
Քաջ որդիք սրանձալի ,  
Ըլլամք միշտ արժանի :

---

# Յ Ա Ղ Թ Ա Ն Ա Կ

## ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Մինչդեռ գիշերոյ խաղաղ թագուհին ,  
Յարժաթեայ կառացն ժպտէր զուարթագին ,  
Ի բարձանց երկնից սիրոյ հրեշտակներ ,  
Մեզ կը սփռէին դամնեայ պսակներ :

Բանդուռներն երգէին զվեհն Ազատութիւն ,  
Որ մեզի բերէր փրկութեան ողջոյն .  
Պճնէին ծաղկամբք դամբանքն լռին ,  
Ո՛ւր Հայ դիւցազանց ոսկերքըն հանդէին :

Երկնքէն ժպտին պաղպաջուն ասաղեր ,  
Երբ կը ծածանին Հայոց գրոշակներ .  
Ազատ Մասիսի լերանց ծայրերէն ,  
Հայրենահրաւէր ձայներ կը հնչէն :

Դժոխոց դռներըն խորտակելով ,  
Ղարդան և Մեսրոպը 'ի վեր վազելով .  
Կանգնեն յաղթանակ պերճ Ազատութեան ,  
Ղերանորոգեն փառքեր Հայութեան :

Ո՛հ ինչպէս հրձուին Հայոց զաւակներ ,  
Մինչդեռ կը տեսնեն նախնեաց հին փառքեր ,

Լուս կրնայ մնալ մեր սիրուն քրնար ,  
 Մինչդեռ Ասողըն Հայկայ շողայ լուսավառ :  
 ԱՐՐԱՀԱՄ ԱՅՂԱԶԵԱՆ

Պ Ա Ն Դ Ո Ւ Խ Տ

ԵՒ

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Մինչ հայրենի զուարթ յափանց տարադիր ,  
 Պանդուխտն թշուառ հեծէ յաղէտս տրրա-  
 մալիր ,  
 Միայնութիւն սուգ և հառաչք անդադար  
 Նա յուսաբեկ դիտէ օտար 'ի յաշխարհ ,  
 Բիւր սիտփանս ազդեն 'ի սիրտ թշուառին ,  
 Արմենուհւոյն աչերն 'ի գութ երբ ժպտին :  
 Ո՛հ , մինչ նախնեաց թշուառութեան յիշա-  
 տակ ,  
 Բերէ 'ի տես ըղթնամուտն յաղթանակ ,  
 Աւերակաց անեղ բեկորք տխրական ,  
 Եւ մահաբոյր ցուրտ դամբանաց տեսարան :  
 Նկուն վիճակ եղբարց , սուսերն անխնայ ,  
 Թէ Պանդխտին չըթողուն յոյս դուզնաբեայ :

Բիւր սփոփանս ազդեն յայնժամ եւ այլն :  
 Թէ չարաշուք բաղդին 'ի ձեռս խաղալիկ ,  
 Վճիռ անդարձ են միշտ նմա ողբ լալիք .  
 Ճնշիլ ընդ ցաւօք , ծիւրիլ յանձուկ հայրենեւ  
 եաց ,

Մինչ սգաւոր յաւարտ աւուրց իւր կենաց .  
 Բիւր սփոփանս ազդեն 'ի սիրտ եւ այլն :  
 Գարուն զուարթ հէք մահացուաց այցելու ,  
 Ոչ Պանդխտին թուի այնքան կենսատու .  
 Արմենու հւոյն քան զմրմունջ դողդոջուն ,  
 Որ 'ի կիթառ երգէ զՍէր զուարթուն ,  
 Առոյգ 'նդ հուպ յարուցեալ յողբոց տխրաւ  
 նուէր ,

Գոչէ Պանդուխտն՝ «Երկնազդեցիկ է քոյդ Սէր» :  
 Բիւր սփոփանս ազդես 'ի սիրտ թշուառիս ,  
 Արմենու հիւր , մինչդեռ 'ի Սէր դու ժպտիս :

Ո. Կ. ԹՆԼԵՆ

Մ Ա Ր Շ

Մնացես բարեաւ սէր իմ սէր ,  
 Հրաւէր մարտին որոտաց :

Թէ չեմ քաջաց ես ընկեր ,  
Չըկայ բաժին ինձ փառաց :

Մի՛ լար հողւոյս իմ հատոր ,  
Գուցէ դառնամ ոհ մի՛ լար .  
Թ'անկայց մարտին ես 'ի դու ,  
Տեղուք յերկինս մեք զիրեար :

Եղբայրադաւ չէ նախանձ ,  
Որ բորբոքեալ յիս վառի .  
Ի սուրբ հողոյ Հայկազանց ,  
Բառնամ զլուծ օտարի :

---

## Ա Ս Տ Ղ Ի Կ Ն

### Հ Ա Յ Ո Ց

Մուսայք մասեաց ելէք 'ի դաշտ ,  
Հայել Հայոց Աստղիկըն հաշտ .  
Ի դաշտ , յորում սիրով Հայեր ,  
Կարդան փառաց հըրաւէր :

Տեսէք Հայոց տանն հորիզոն ,  
Կոյս մի շքքեղ և ըզգօն .  
Աչք վառվառն , դէմք գեղանի ,  
Հայուն սիրով նա ժրպտի :

Կեցցէ միշտ յաւերժ  
Կոյսն զուարթուն ,  
Վատին 'ի վրէժ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ :

Տեսէք յաջմէ բոց սիրալոյս ,  
Վառենք պատրոյկ սրտերնուս .  
Եւ 'ի ձախմէ սիրոյ դրօշակ ,  
Հայէր մտնանք անոր տակ :

Սամանակին խորէն անբաւ ,  
Կուսին մատն էր երեւեցաւ .  
Յրուէց մտաց ամպեր մթին ,  
Բացաւ սիրոյ մեղ ուղին :

Կեցցէ միշտ յաւերժ  
Կոյսն զուարթուն ,  
Վատին 'ի վրէժ ,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ :

Հայեր յառաջ , նենգ ոխ 'ի բաց ,  
Կուսին ելնենք արդ 'ի յայց .  
Եղբայր եղբօր ձեռք սիրտ տուած ,  
Համբոյր մի տանք սիրազգաց :

Կ'աց Հայ Աստղիկդ , կ'աց անսասան ,  
Շնորհիւ վեհին Օսմանեան .  
Եւ քեւ կեցցեն մանկուէք Հայոց ,  
Ի սիրարժարձ քոյին ծոց :

Կեցցէ միշտ յաւէրժ ,  
Կոյսն զուարթուն ,  
Վատին 'ի վրէժ ,

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ :

Մ. Մ. ԹԻՍՒՆԵՆՔՆ

---

# Հ Ր Ա Ժ Ե Շ Տ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԱՏՐՈՆԻ

ՅԱԽԱՐՏ ԱՌԱՋԻՆ ԵՂԱՆԱԿԻՆ

ԽՄԲԵԱԿՆ

Մինչ ծովամաց կան 'ի խշտիս արիւոյն սլաք  
բոցեղէն ,  
Եւ սեանկար ամպոց ծածկոյթ զաչկունս երկ  
նից սքողէն .

Արդ գիշերայն ,  
Մինչ լուեկայն .  
Նիրհէ բնութիւն ,  
Օ'ն մեր համբուն :

Բզմանկական մեր շրթնեկաց ,  
Պարզեալ ըզծիրս յերգ նուագաց :

Ի սոյն ատեան , ուր բիւր մատեան ,  
Ժամանակին գան յերևան ,

Եւ ուր անցեալն 'ի հայելւոջ ,  
Ի ներկային խուսափի ո'չ .

Օ՛ն մեք զերկնից սքանչելիս ,  
Գեղգեղելով 'ի գրուասիս ,

Չայնքս հնչեցեն յայս Վայր յօրհն  
ներգ ,

Չգանգ արձանաց տացեն այերբ .

Եւ ժպտեսցի Երկինք 'ի վեր ,

Որ զտիւն արար և ըղգիչեր :

Որ զյաւ իտեանցն զԺամանակ ,

Չափեալ տարւոյն 'ի յեղանակ .

Պճնէ գարնամբ զուարթագեղ ,

Պարուց հաւուց 'ի բիւր գեղգեղ :

ԺԱՄԱՆԱԿՆ

Ը- ԽճԵՒՆ

Եւ զի՛ զուարթ ձայն մանկական ըղճերունւոյս  
խըռովէ նինջ ,

Չոր քնէած զեփիւռ գարնան յիմ թարթեանս  
սրփուէր այն ինչ . . .

Մի՛ , մանկունք , մի՛ երգովք անժամ ըզժամս  
նակս առնէք գնատ ,

Թէ՛ ձեզ գարուն , ձըմեռն յաւերժ պատէ  
զանշուքն իմ ցուրտ ճակատ :

Թողէք յայս վայր ինձ միայնոյ նուիրական ,  
Փակել զաչիունս . աւուրք անցցեն և  
աշնան .  
Այլ ձմերայնոյն հողմունք ուժգին թէ  
անդէն ;  
Ի խոր քնոյս ըզճերունիս զարթուսցեն .

Ի յեւս Արփուոյն լերինք սպիտակ խառն ընդ  
կարմիր մինչ շողան ,  
Յայն երբ աչիունքս ողջունեսցեն զԱրևելեան  
տեսարան .

Իցիւ յայնժամ և դուք 'ի նուագ գե-  
ղաւոր ,  
Ողջունէիք ըզճամանակս ալևոր :

ՅՈՅՍՆ

Ը- Ժամանակն

Խուն ինչ այլ ևս մնասջիր արթուն . . .  
Ես աջակից յաւերժ անքուն պսակեմ 'ի  
գլուխս .  
Ի փունջ վարդից քաղցրաբոյր ,

Թմբիր յաչացդ այն ինչ անհետ, զՅոյս ընդ-  
սոցին 'ի համբոյր .  
Գեղածիծաղ տեսցես հաշտ ,  
Քընարանիդ քո 'ի դաշտ :

ԱՌ ԽՄԲԵԱԿՆ

( )ն երգեցէք ճայնիւ հեշտ ,  
Զալւորին հրաժեշտ :

ԽՄԲԵԱԿՆ

'Աինջ մահաստուեր որոյ թևովք սեա,  
Թոյր ,  
Ժամանակին աչկունք ծածկի 'նդ վարա-  
գոյր .

Երբեմն զուարթ ,  
Ղեհ ակնարկինք՝ ողջ 'ի սեալ .  
Յայանեն մեզ արդ ,  
Ըզտխրալին “ մնայք բարեալ ” :

ԱՌ ՅՈՅՍՆ

Օրհնեալ ես Յոյս ջահեալ՝ յերկնից ,  
Որ բաժովես զիրա տրամալից .  
Եւ զտխրանաց խաւար անլոյս ,  
Փոխես խնդից 'ի յարշալոյս :

Գու հրաժեշտիս 'ի տխուր ժամէն ,  
Մեզ խոստանաս ըզդարձ անդրէն .  
Զուարթ աւուրց յորս քե ցնձան ,  
Դըրունք Յարկիս ասպնջական :

Ի Յոյսդ անվրթար ,  
Ժպտեսցուք մեք յար ,  
Զի ուխտեմք մընալ ,  
Ի գիւրկդ հիւրընկալ :

Քե առցուք խրախոյս ,  
Քե մեք ջահալոյս .  
Քե առցուք խրախոյս ,  
Ո՛վքաղջրիկ մեր Յոյս :

Ե. Մ. ՄԷԼԻՔԵԱՆ

Ի ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻԻՆ

ՏՐԴԱՏԱՅ

ՅԵՏ ԲՈՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՍԱՍԱՆԵԱՆ

Յաղասն 'ի վեր 'ի Մասիս ,  
Արիք որդիք հայկեան .

Տրուեալք 'ի մի խումբ պարու ,  
Բառից հողմոց փող ազգու՝  
Յաստուածախրախոյս ձայն :

Նախնի կամար բազմերփեան ,  
Ահա պատի զնովաւ՝  
Ամպրոտայոյզ մբրբրկաց ,  
Հաշտարան պատերազմաց •  
Տարփալին ցոլացաւ :

Չայն որոտաց ձայն ահեղ ,  
խորանաձև յարկէն •  
Արիազունդ տուն Հայկայ •  
Զտապալեալ դահիդ արբայ •  
Վերականգնեմ անդրէն :

Երդուեալ յաղեղն երկնածիր •  
Բարձի զբաղդ ձեր 'ի միտս •  
Թաթ ձեր յԵթեր սրլացաւ •  
Հակառակորդքն սուղաւ •  
Վայր սանդարամետս :

Պիւցազանց պար Թորգոմեան •  
Տըխրազգեաց յե'ղիսեանս •  
Ըզըրթագոյն գիմաց մէզ ,

Յաստեղաց բոց վառին շէկ •  
Յաւետեաց հրաւիրանս :

Արդ իմ արի սպառազէնք ,  
Տուք կայթս հսկայաքայլ •  
Դաշտք 'ի պըլինձ բոցացին ,  
Աերինք 'ի նշոյլ շլացին •  
Զսկատիցդ , 'ի զեռալ :

Ահա ձեզ Հայկ երկնաձեմ ,  
Հայր ձերում բանակի •  
Աստարափակ հովանեաւ ,  
Զձեօք 'ի բարձանց փարեցաւ •  
Անթափանց նիզակի :

Խումք տար առեալ զարքայի •  
Զօրավարք Աբամայ •  
Բոլորեցէք համերամ ,  
Պսակ փառաց անթառամ •  
Կեցցէ Տրդատ մեր արքայ :



# Բ Ն Ա Կ Ա Ն Օ Ր Է Ն Ք

ԿԱՄ

ՃՇՄԱՐՏԱՆՄԱՆ ՊՏՈՒՂ, ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆ

Յաւուր միում մէկ քարահատ  
Գնաց գործիքով յանապատ .  
Որոնելով գտաւ մէկ քար ,  
Որ վասն արձանի էր յարմար :

Սկիզբն արար նրան տաշել ,  
Այս կողմից միւս կողմ քաշ քաշել .  
Երբ որ քարըն յոյժ նեղացաւ ,  
Կամաւ Տէրին լեզու ստացաւ :

Ըսաց քարհատին , ն՛վ տգէտ ,  
Ի զուր են քեզ կոչում վարպետ .  
Ընդէր ես չարչարում դու զիս ,  
Ինձանից ի՞նչ շինել կուզիս :

Քարհատն տուաւ սլատատիսան ,  
Թէ նրբան որ արարածք կան .  
Ամենեքեան են սլարտաւոր  
Լինիլ աշխարհին հարկաւոր :

Իսկ դու անկեալ ես աստ անշահ ,  
Իբրև յամառեցեալ ազահ ,  
Աստուած ոչ ստեղծ անշահ բան ,  
Որ յաւերժ անպիտան մնան :

Վասն որոյ՝ երբ որ քեզ աեսայ ,  
Ինքրս ինձ խորհիլ սկսայ ,  
Որ քեզնից մէկ արձան շինեմ ,  
Քաղաքի հրապարակն դնեմ :

Յայնժամ քարի պէս անլեզուն ,  
Իբրև լուսաւ որեալ գիտուն .  
Ասաց . յիմար , գնա՛ բանիդ ,  
Զուր նեղութիւն մի տար ջանիդ :

Առաջ քեզ շինի պիտանի ,  
Դու ես գլուխ անպիտանի .  
Քանզի արարածք ամենայն ,  
Իրանց նախկին դրութեան կան :

Միայն մարդըն իւր չարութեամբ ,  
Իսկն ասեմ , յոյժ տգիտութեակբ  
Յաւէտ խոտորնակ հակելով ,  
Բնական օրէնքըն քակելով :

Ստեղծողըն ստրջացոյց ,  
Իւր երկար կեանքը կարճեցոյց ,  
Նախ կապրէին ամբս հազար ,  
Այժըմ հարիւր ամ էլ գժուար :

Թէ մարդն կեանք ունիլ կարէ ,  
Ասան զի միտքըն աւար է :  
Քարահատն՝ երբ սցս լսեց ,  
Քարին աղաչել սկսեց :

Թէ արի , ինձի ողորմիր ,  
Ասածներիդ միտքը պատմիր ,  
Մի՞թէ մեր կենաց կարճութեան ,  
Պատճառն է օրէնքն բնական :

Լ՛յս՛ , պատասխան ետ քարն ,  
Մարդից խելօք է տալարն ,  
Կամ իւրաքանչիւր անբանն ,  
Թռչունն՝ ձուկն՝ դադանն :

Տարին մէկ ընդ իգականի ,  
Պողոթերու թեան սէր կանի ,  
Իսկ դուք դարձուցիք դայն՝ ՚ի խաղ ,  
Թէ ծեր և թէ տըղայ մատաղ :

Գիշեր՝ ցերեկ միշտ անդադար ,  
Նրանով էք անում մադար .  
Էնքան ճնշվումէք՝ թաղկանում ,  
Մինչ ձեր նիւթըն ջուր է դառնում :

Մին պտուղ որ ջրից լինի , )  
Նորա կեանքըն ինչ կու լինի .  
Տասն , քսան կամ երեսուն ,  
Քառասուն , յիսուն կամ վաթսուն :

Ընտանեաց , որ ազգ մարդկան ,  
Է անբանից դուրս անբան .  
Իսկ դու կամիս զիտ տաշելով ,  
Յայսկոյս յայնկոյս քաշքաշելով .

Կանգնել հրապարակի մեծ արձան ,  
Որ ինքդ ես կոծղ անպիտան .  
Լաւ նայիր սերմանահանին ,  
Տես՝ ո՞րքան զգաստ է բանին :

Որ միշտ ցորենի լաւերն ,  
Կընարէ , ո՞չ թէ որդնակերն .  
Վասն զի սերմըն որդնակեր ,  
Ո՛չ կարէ լինիլ պողպարեր :

Նոյնպէս թուլացեալ նիւթ մարդկան ,  
Պտուղ կուտայ նուազական .  
Զի լրացած հարիւր տարին ,  
Կը մնայ կենաց ճանապարհին :

Թէ կատարէք կարգն բնական ,  
Կապրէք որպէս Մաթուսողան .  
Սէյեանդ ՚ի զուր մի՛ բարբանջել ,  
Մարդից ի՞նչ կամիս պահանջել :  
1857 մայիս 25            Ի Վայոց Ձորն Հայոց :

---

## ՊԱՆԴՈՒԻՄՏՆ ԱՌ ԼՈՒՍԻՆ

Նուաղեալ կենաց իբրև յոյս ,  
Մութ և տխուր ես ս' կոյս .  
Ել ել լուսին , ս' և դուն ,  
Սիրտ մի ունիս զգայուն ,  
Ազդ մի թշուառ Հայրենիք .  
Որ բող առեր ես զամպիկ :

Բնութիւն գեղոյդ երածիշտ ,  
Քեզ աստեղաց հոյլք նածիշտ .  
Ի՛անհուն սիրուն ժըպիտ մի ,

Կարգեց դշխոյ զքեզ երկնի .  
Տողէ նշոյլդ տխրանոյշ ,  
Պանդուխտ հոգւոյս ցաւոց բոյժ :

Ո՛հ փշրեցան սիրտս ու քնար ,  
Ես ալ քեզի սէս զաշխարհ .  
Պանդուխտ քայլով չափեցի ,  
Ճաղկունք ծըլին սոսկ քեզի  
Չեկաւ զեփիւռ մ'անուշիկ ,  
Շոհեւ իմ դէմքս յուսալիք :

Հող մ'ունէի Հայրենի ,  
Իբրախտ շքեղ աշխարհի .  
Աւերակացն արդ սահպան ,  
Քիւրտն և անոր հրացանն .  
Յուցուր ժանտից , ո՛ր լուսին ,  
Չաղիր ոսկերք Ասասկին :

Ըզդ մ'ունէի այն Հայն էր ,  
Որ երկրիս վրայ տարուբեր ,  
Կ'երթար օտար ազդերէն ,  
Մուրալ լեզու և օրէն :  
Լուսին , ցուցուր դու Հայուն ,  
Փառքն իւր նախնեաց շիրմերուն :

Սիրտ մ'ունէի, ան կոյսն էր,  
 Որ իմ հոգիս էր գրաւեր .  
 Ճաղկէ հասակ ծաղկի դէմք  
 Հուր աչքն առին շիրմաց վէմք,  
 Մեր պանդուխտն ալ, լուսին,  
 Դու այցելու ել շիրմին :

Ս. ԼԵՒՍՆԱՆ



## ԱՔԼՈՐՆ ԾՆԱԻ ԶԱՔԼՈՐ

Ի հանդէպ «Ա'խ, Յովհաննէս վարդապետ  
 ի՞նչ անեմ ձեր աքլորին» յԱչքդ Շիրինէ  
 ասացելոյն :

Նստիք, Շիրին, ասեմ քեզ . մէկ օր մեր  
 տան թարքումը,  
 Մէկ այսմաւուրք ճարեցի՝ հին գրքերի կար-  
 գումը .  
 Էս պատմութիւնս կարգացի աքլորների վար-  
 քումը,  
 Ճափ զարկի ծիծաղեցայ զարմանք մնացի աք-  
 լորին :

Բայց ինձ հաւատան Շիրին, բովանդակ մէջ  
աշխարհին (1),

Բայց յԱստուծոյ՝ մարդ չ'իտէ աքլորիս ծնած  
տարին (2) :

Ազամ երբ որ ստեղծաւ, սա տանուհինդ  
տարուան էր,

Նոյն երբ տապան մտաւ, սա փղից մեծ հայ  
վան էր :

Աշտարակի շինութեանն հազար սա նարդիւ  
ւան էր,

Մովսէս գրեց, հաստատեց թիւ ու տարի  
աքլորին :

Յիսուսն տարին մէկ անգամ նստած տեղէն  
կրխազար,

Կուկլուկուկու կանչած ատեն երկինք՝ դե  
տին կը գողար :

Ովկիանոս ծովի մէջ ծընկներէն ցած կ'լողար  
Ահագին էր տեսութիւնն զարհուրելի աք  
լորին :

---

(1) և (2) Ամենայն տանց վերջումն կրկնեա՛ զայստօիկ սողաւ :

Տեպրըն սիրուն , գեղեցիկ , ոսկեթել զումաշի  
պէս ,

Փառք ու պատիւն աւելի Մըսըր նստած Փաշ  
շի պէս ,

Պոչումը կար գերաններ՝ Սօղանլուոյ մէջի պէս ,  
Բոլոր գազանք՝ անասունք էին գերի աբլորին :

Լուր մէկը չափեցի կանգնած տեղէն դար  
ի վար ,

Ոտէն մինչև կտուցը երեք վերստէն աւել էր ,  
Քըճէճ ըրած ատենը սարեր՝ ձորեր կ'աւել  
րէր ,

Խեղք չէր հասնիր հաստափոր՝ խոր ծերունի  
աբլորին :

Լքլորիս գլխի վրայ քիրած ու քար հանեցին ,  
Տասն տարի բանեցան՝ հաղիւ մէկ բերդ : շի  
նեցին .

Կակարթի քեարթերումն մեծկակ թօփեր  
հանեցին ,

Վայ կուգար էն բերդին որ չէր խոնարհիլ  
աբլորին :

Փորումը՝ թէլու էին , մեծ քեարվանն էր  
խանի պէս ,

Կիսէն շատը մնումէր խարաբա վրանի պէս :  
Ոտների հաստու թիւնն էր ձիթ հանքի գերաշ  
նի պէս ,  
Ամեն բանն էր կարգէ դուրս այս անձունի  
աքլորին :

Աշխարհս երբ որ բաժանեց մեծ թագաւորն  
Վաղարշ ,  
Աքլորս ոտով գլխով վանքին ելաւ բաժին՝  
մաս .

Եջիածնայ ամբարից , Աստուծոյ օր , ճաշէ  
ճաշ ,  
Կուտ կուտային ութ սօմար խաշած դարի  
աքլորին :

Երբ որ ինձ նոր վարդապետ , տարան , ձեռն  
նագրեցին ,  
Գիր՝ կտակով միաբանք աքլորս ինձ յանձնե-  
ցին .

Երբ Մկրտիչ վարդապետը Տնտեսապետ կար-  
գեցին ,  
Ըստ ժլատ էր , վայ եկաւ ծեր խղճալի աքլո-  
րին :

Աբլորս այսպէս քչակեր քանի մ'տարի ապրե-  
ցաւ ,  
Ամէն աւել թե կախած՝ կուտ ու ջրէն կըտ-  
րեցաւ ,  
Յանկարծ այս առաւօտուս չողորմեցաւ՝ սաս-  
կեցաւ ,  
Գիչ մնաց՝ որ ասէի , Տէրն ողորմի աբլորին :

Շուտով մեր սպասաւորք հարիւր մշակ բռ-  
նեցին ,  
Ամէնքն առան մէկ մէկ ու թ փրթանոց սուր  
կացին ,  
Մինչև հիմա հազիւ թէ յտակեցին՝ Չարդե-  
ցին ,  
Կշռեցին , հազար փութ եկաւ կաշին աբլորին :

Թիշկիներն ինձ ասացին . աբլորէն նի որ ուտե ,  
Համ ծերութեան , համ ցաւի ամեն կերպով  
օգուտ է .  
Միտք արի յիմարի պէս , թէ չ'անեմ ինձ ա-  
մօթ է ,  
Կանչեցի միաբանից անփորձ ճաշի աբլորին :

Առաւօտէն մէկ մշակ ձեռքը սուր սաթը մը  
առաւ ,

Աքլորէս մէկ հոխա միս ծեծելով հողին եւ  
լաւ .

Պէտք էր՝ որ քոֆթա վնէր , վերջը չոր կաշի  
գաւառ ,

Բարկուծենէս քիչ մնաց՝ որ թքէի աքլորին :

Վահքի աշտուն ասացի . եահնուցը լաւ միս  
հանէ ,

Ասաց . էն լաւ կտորը խիստ թթուած ու  
տտհամ է .

Ես էլ կացին չի կտրէ , ակռայ երբ կարնայ  
ծամէ ,

Ղախտին ուրիշ միս ճարէ , յոյս մի՛ անի աք-  
լորին :

Յոյսս կտրած աքլորից՝ ոչխար ու գառ մոր-  
թեցի ,

Բովանդակ միաբանից ճաշ տուեցի , ճամբե-  
ցի .

Դարձայ՝ տխուր նստեցայ , շատ բարակ մը-  
տածեցի ,

Թէ աշխարհումս կայ արդեօք մարդ արժանի  
աքլորին :

Միաբնակ ընկաւ , որ ես քեզ դառ խոստացեր  
եմ , Շիրին ,  
Արի , դառի փոխարէն հաճոյ եղի՛ր աքլորին ,  
Կաշի տո՛ւր դաբբաղներին , պօլո՛ւծիկն ալժ  
տարին ,  
Միսը ծախէ՛ սապօնչոյ , հախէն արի՛ աքլորին =  
Ա. Վ. Ա. ՀԱՅ. ԿԱԹՕԼԻԿՍ



Նուրու ֆերրի միհրումահըն ,  
Բույի մալի խաքի բահըն ,  
Ե՛յ Շահինշահի քերեմքեար ,  
Սատելէթ տիր պարի կեահըն =

Օլտու կեօնիւլէր քիւշատե ,  
Խաւքի ալէմ հեփ սեֆատե .  
Զէյպ ու ղիյնէթին կեօրիւրլէր ,  
Սայէյի պէհճէտ ֆեղատե =

Բաքս խտեր կեօքտե մէլէքլէր ,  
Միւսթեճապ օլտու տիլէքլէր ,  
Իշպու տեվրի նէվզուհիրի ,  
Կեօրմէմիշ չէշմի ֆէլէքլէր ,

Ե՛յ շէհի սահիպ ալթայա ,

Մազհէրի թէվֆիքի ալեա :  
 Իտէր պիւր բուզըն հէզար սալ :  
 Եւ մնիլէ հազրէթի Մէվլա :

ՆԱԳՍՐԱԹ

Պուլտու տէվրի էմնիւ էման :  
 Սայէյի լութֆոււնլա ճիհան :

ԻՅՈՐԴՈՐԱԿ

Լյ խիւտալէնտի ճիհան ,  
 Վէյ շէհին շահի դէման .  
 Էրմէնիյան Միլլէթի ,  
 Լութֆոււն իլէ շատիւման :

Նազմէյայի խօշ նէվա ,  
 Հէմէիւ պիւլպիւլ տէր հավա :  
 Փիւր թէրէննիւմ իլլէմէք ,  
 Արըզու էթաիք Շահա :

Ղանի ալէմսին , սանա  
 Ճանըմըզ օլթուն ֆէտա ,  
 Էիւանիւ էնզարըն պիղէ .  
 Քիմիայի պի պէհա :

Ողջոյն քեզ ո՛ր դաշտ և սիրուն ափունք ,  
 Ուր այսօր սիրով խմբին Հայկազունք .  
 Հարց Հայաստանեայց սրբազան աճիւնք ,  
 Թո՛ղ ցնձան Հայոց 'ի սուրբ միութիւն :

Հէզ Հայաստանի եմք մեք զաւակներ ,  
 Հայեր զձեզ հո՛ս Հո՛ս կոչողն է սէր .  
 Եւ հայրենիք սուրբ հայրենիք :

Հրեշտակն Հայկազանց ,  
 Հոս կը սաւառնի .  
 Յառա՛ջ , պսակաց  
 Ճակատք արժանի :

Սահմանադրութիւն ,

Սահմանադրութիւն .

Յորչափ մնայ երկիրս և դու ,  
 Կեցցես :

Ըն հայրենեաց սէր ,  
 Արդիք անձնանուէր  
 Ի շինութիւն տանն Հայկազանց ,  
 Կեցցե՛ն :

Ազին միութեան  
 Ար զմեզ միաբան  
 Հոս գումարեց սիրոյ հանդէս ,  
 Կեցցե՛ :

ՆՆԱՆ ԶՈՂՐԱԳԵԱՆ



# Մ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

Ի ԶՈՐՐՈՐԻ ՏԱՐԵՒԱՐԶ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ՝

Ո՛չ զուարթ գարուն , ո՛չ օր մի սիրուն ,  
 Եկաւ ու պարզեց մեզ այդն Հայութեան :  
 Ար գեղածիծաղ ժպտէր խնդագոյն ,  
 Քան սուրբ արշալոյս Սահմանադրութեան :  
 Ար առաւօտեց Հայոց սրտերուն  
 Սէր և միութիւն :

Ո՛չ Արարատայ աւերակներէն ,  
Սիրաւառ արև ծագեց կենսական ,  
Ո՛չ Մասիս հնցած ծերուկ ծոցերէն ,  
Քան զանբիծ արև Սահմանադրութեան ,  
Որ ելաւ ծագեց Հայոց սրտերուն ,  
Սէր և Միութիւն :

Յայն արիւնհաների վայրերն ուր մէկիկ ,  
Մէկիկ անկան փառօք Հայոց Ազգութեան ,  
Ո՛չ շնչեաց հովիկ մի սրտազովիկ ,  
Քան զանոյշ զեփիւռ Սահմանադրութեան ,  
Որ հեշտիկ փչեց Հայոց սրտերուն  
Սէր և Միութիւն :

Ի գլխակորիկ շուշանիկն ու վարդ ,  
Որ 'ի սրգապատ հովիտն Աթինեան ,  
Ո՛չ երգեաց բնաւ թռչնիկ մի զուարթ ,  
Քան սիրուն սոխակ Սահմանադրութեան ,  
Որ իջաւ երգեց Հայոց սրտերուն  
Սէր և Միութիւն :

Ի պաղուկ լերանց ձիւնապատ ծայրէն ,  
Չ'իջան առուակներ արծաթանման ,  
Ո՛չ վճիտ գետեր հեղիկ խոխոջէն ,  
Քան զովուկ նեկաար Սահմանադրութեան :

Որ վազեց յորդեց Հայոց սրտերուն :  
Մեր և Միութիւն :

Գարուն է եկեր Հայութեան ՚ի դաշտ ,  
Տլեր ու ծաղկեր Մերն ու Միութիւն .  
Ում Աստուած վերէն ժպտելով ՚ի հաշտ ,  
Տուաւ պարգևեց Սահմանադրութիւն :  
Որ նա պիտի տայ Հայոց սրտերուն  
Կեանք ու զօրութիւն :

Գ. Վ. ՊԱՐԵՐԳ

---

## ՊԱՐԵՐԳ

Ո՛հ ինչ անուշ ինչ գեղեցիկ ,  
Մեր Հայրենեաց ղեփիւռիկ ,  
Շնչ զուարթ մեր սրտերուն ,  
Տալով աշխոյժ զօրութիւն ,  
Առ ինքն կոչէ զմեզ Հայեր ,  
Գշուել յիւր ծոց ծնելասէր ,  
Պար խմբելով երթանք լեռ ձոր ,  
Համբոյր սիրոյ տալ մեր մօր :

Հոն պարզ վճիտ և գեղեցիկ ,  
Մեր Հայրենեացն ասաղիկ .

Հորիզոնէն արդ բարձրացած ,  
Կուտայ Հայոցըս յոյս փառաց .  
Անոր ուղղենք արդ մեր աչեր ,  
Անոր վարուինք սոյ Հայեր :  
Պար խմբելով երթմանք լեռ ձոր ,  
Համբոյր սիրոյ տալ մեր մօր :

Ս. Գ. Գ. ՓԱՓԱՅԱՆՑ

## Ք Ա Ր Ո Ւ Ն

Ո՛հ ինչ անուշ եւ ինչպէս զով  
Առաւօտուց փչես հովիկ ,  
Ծաղկանց վրայ դուրգուրալով .  
Եւ մազերուն կուտին փափկիկ ,  
Բայց չես հովիկ իմ Հայրենեաց ,  
Գնա՛ անցիր սրահս 'ի բաց :

Ո՛հ , ինչ աղու և սրտադին ,  
Ծառոց մէջէն երգես թռչնիկ ,  
Սիրոյ ժամերն 'ի յանտառին .  
Ըղմայլեցան 'ի բո ձայնիկ ,  
Բայց չես թռչնիկ իմ Հայրենեաց  
Գնա՛ թռիք սրահս 'ի բաց :

Ո՛հ , ի՞նչ մբմուռնջ հանեա վտակ  
Ահանս լիա և հանդարակի ,  
Քու հայերուց մէջ անապակ  
Նային զիրենք վարդն ու ազջիկ .  
Բայց չես վտակ իմ Հայրենեաց ,  
Գնա՛ հոսէ սրտէս 'ի բաց :

Թէպէտ թռչնիկ եւ հովն Հայոց  
Աւերակաց թռչին վերայ  
Թէպէտ սղտոր վտակն Հայոց  
Նսճիներու մէջ կը սողայ .  
Նորա՛ հառանջք են Հայրենեաց ,  
Նորա չերթան սրտէս 'ի բաց :

Մ. ՊԼԵԻՔԻԱՅԵԼԵԱՆ

---

## ԵՐԳ

Ս.Ո. ՀԱՅՍՍԱՆ

Ողջն ընդ բեզ Հայաստան ,  
Մեր գիւցազանց գերեզման .  
Ողջն Հայոց թաղուհի ,  
Պսակեալ վառօք հայրենի :

Երկինք խրկէ քեզ հրեշտակ ,  
Բիւր վարդք ծըլին ոտքին ասկ ,  
Իւր մէկ նայուածքն երկնագեղ ,  
Քու արտասու օցդ ըլլան դեղ :

Ո՛հ ինչ անուշ նըւագներ ,  
Պիտի հնչեն սոխակներդ .  
Երբ քու ճակատըդ պսակէ ,  
Ճաղկէ ոնեան դափնիէ :

Ս'անուկն յորոց կը խայտայ ,  
Եւ ծերունւոյն սիրտ ցնծայ .  
Երբ որ նշոյլք կը ժպտին ,  
Հայ աստեղաց նորածին :

Ո՛հ շիրմացդ քով ալ հանդէի ,  
Անմահու թեան վէհ սգի .  
Մինչ զուարթունք 'ի բարձանց ,  
Պսակս սիրուն Հայկազանց :

Փափուկ մատունքդ թող դրոշմեն ,  
Այն տառերով ոսկեղէն .  
Մեր սրտին մէջ " սէր և լոյս " ,  
Մեր հոգւոյն մէջ " կեանք եւ յոյս " :

Քու վըշտերուդ փոխանակ ,  
Երկինք կանգնեց յաղթանակ .  
Քու վէրքերուդ ալ դարման ,  
Քեզի Օրէնք շնորհեցան :

Ա. Յ. ԱՅՂԱՅԱՆ

---

## Ա.ՁԱՏՈՒԹԻՒՆ

Ո՛վ քաջազունք , ձեզ հրաւեր ,  
Փութալ առնուլ զմերկ սուրեր :  
Եւ հաստատել մեր Հայրենեաց ,  
Գահ սրբազան միշտ անմուռաց :

Ազատութիւն մեր Հայրենեաց ,  
Ազատութիւն մեր խեղճ եզբարց .  
Ազատութիւն Ձեզ , վառ սրտեր ,  
Ազատութիւն դեռ չէք լսեր :

Երկին , Ատուած տան հրաման ,  
Ա՛հ , հրաման ազատութեան .  
Ըուտ սթափինք , զինուոր դրուինք ,  
Եւ անվեհեր պատերազմինք :

Լեռներ, ձորեր, Մասիս անդամ,  
Աղատութեան կուտան պատգամ.  
Հապա երթանք 'ի Հայաստան,  
Քաջ նախահարց հանգստարան :

Բաւ է այսչափ, ցնձ դերութիւն,  
Օ՛ն, սվքալեր, 'ի յաղթութիւն.  
Երկինք, Աստուած մեղ են պաշտպան,  
Ազնտ, ազնտ, մեր Հայաստան :

ԿԱՐԱՊԵՏ Գ. ՏԱԿԷՍԱՆ

---

ՄԱՐՇ ՀԱՅԿԱԿԱՆ

Յառանջ, յառանջ. — Ո՛վ հայկազունք,  
Յառանջ յառանջ. — Ո՛վ քաջազունք :  
Օ՛ն, դիմենք շուտ — 'ի Հայրենիս,  
Եւ դունդագունդ — Ընենք դերիս.  
Հայկեան ոյժն — Առած վահան,  
Եւ կրօնքն — Նաև պաշտպան :

ԿԱՐԱՊԵՏ Գ. ՏԱԿԷՍԱՆ

---

# Մ ՈՒ Ս Ա Յ Ն

Ո՛ր սգատերև յեցեալ նոճոյ՝ ՚ի ստորո՞ս  
Զաղիս Հայոց լարեալ ՚ի քնար տխրանուէր .  
Աջն իմ ՚ի լար , աչկունքս ՚ի վեր մերթ յա-  
րօս ,  
Յերբ հնչեցից ՚ի վանդ ողբոցն իմ՝ զայեր :

Ո՛հ ժպտեսցի՛ն աչկունք բաղդին յիս արդեօք ,  
Թէ որպէս ցարդ՝ նոյն և յապայն անողոք .  
Ե՞րբ ծագեսցէ երջանկութեան քաղցր արեգ ,  
Եւ փոխեսցի տխրանըւադ ողբս յօրհներգ :

Ի՞՞ր ոչ , լուսնեակդ , վառ ՚ի վառ ,  
Կիսով յամպոց գողացեալ .  
Եւ զերթ կանթեղ իւզասպառ ,  
Մերձ ՚ի խաւար դող շիջեալ :

Ո՛հ միայնիկ և մնջիկ ,  
Ողբամ ըզբաղդ խաբուսիկ .  
Եւ թէ լըռէ իմ հագադ ,  
Էսեմ ձայնիս զարձագանդ :

Հեծէ սրախ իմ խռոռչ ,  
Մատուներս 'ի լար հըոյին ոչ ,  
Այլ զի՛ անսիլ անսովոր . . .

(տառանց եղանակի)

Մինչ կամ աստէն մենաւոր .

Ըչկո՞ւնքս արդեօք զիս խաբեն ,  
Այլ ո՞չ , դոքա հրեշտակք են .  
— Ողջոյն երկնից զոյգ տատրակք ,  
— Ողջոյն կրկին աղաւնեակք  
Սէ՛ր ե՛ի ԳՈՒԹ :

— Ողջոյն , հրեշտակդ ողբերգակ ,  
— Ահա՛ դու չես միայնակ .

Մի արդ խռովիր , չեմք խաբուսիկ երևոյթ ,  
Նա քեզ ծանօթ . Սէր իմ անուն , իսկ սա  
Գու՞թ ,  
Կայ դու պահ մի , տըխուր ողբոյ տնւր ա  
ւարտ ,  
Կուր շոր երգեն զաւակք երկրին , ուր կաս  
արդ :



# Ա Ռ

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ

1. Ով մեծասքանչ դու լեզու ,  
 Ով հեշտ բարբառ մայրական ,  
 Փափկահնչխն բառերուդ ,  
 Նման արդեօք այլ տեղ կան =  
 Դու նախ ինձ հնչեցիր ,  
 Նախ սիրոյ , սէ , հեշտ խօսքեր :  
 Այն նախ զքեզ թո՛թովելւ ,  
 Դեռ իմ մտքէն չէ ելեր .

Իմ մայրենի քաղցր լեզու ,  
 Կեաց անասան , կեաց յաւէտ ,  
 Կեաց միշտ լեզուդ հայկարժան ,  
 Կեաց ծաղկալից ծաղկաւէտ :

2. Ի՞նչ դառն վիշտ է սրտիս ,  
 Երբ շաար տեղ ու լեզու  
 Բռնի իրեն զիս քաշէ ,  
 Սրտէս արիւն կը հեզու .  
 Ո՛հ զայն օտարն ես սիրել ,  
 Բնաւ չեմ կարող ՚ի սրտէ ,  
 Չէ այն չէ քաղցր իմ լեզու ,  
 Որ սիրով զիս կ'ողջունէ .

Իմ մայրենի քաղցր լեզու ,  
Կեանց անսասան , կեաց յաւէտ :  
Կեաց միշտ լեզուդ հայկարժան ,  
Կեաց ծաղկալից ծաղկաւէտ :

3. Լեզու համակ սիրաշարժ ,  
Քանի ճոխիպերձ ու սրայծառ ,  
Մինչ կը հնչեա դուն քեզի ,  
Սրտերն ամեն դողացար .  
Հնչէ՛ հնչէ՛ յա իտեան ,  
Ղեհ՛ դիւցազանց պերճ երգ դու ,  
Թոթու է փոշիդ խոր մու թէն  
Ե՛լ երևան պերճ երգ դու :

Իմ մայրենի քաղցր լեզու ,  
Կեանց անսասան , կեաց յաւէտ .  
Կեաց միշտ լեզուդ հայկարժան ,  
Կեաց ծաղկալից ծաղկաւէտ :

4. Յաւերժական Սուրբ Գրոց մէջ ,  
Կեաց միշտ նորէն ու նորէն ,  
Կըսեալ անոյշ քու սուրբ ,  
Թող ամեն սիրտ արծարձեն ,  
Շնորհ ունել Արարչէն .

Կամ պէտք ըլլայ տղթեւել ,  
Շրթունքս սրտէ բո՛րբորած .  
Կազազակէ անարգել :

Իմ մայրենի քաղցր լեզու ,  
Կեաց անսասան , կեաց յաւէտ ,  
Կեաց միշտ լեզուդ հայկարժան ,  
Կեաց ծաղկալից ծաղկաւէտ :

---

## Ի ՎԱՀԱՆ

### Մ Ա Մ Ի Կ Ո Ն Ե Ա Ն

Որդիք Հայկայ , որդիք փառաց ,  
Զարթիք կոչէ ըզձեզ Աստուած ,  
Տեսէք Մասեաց 'ի գլուխ ազատ ,  
Ըզբազդ Հայոց նորահըրատ ,  
Աչք ձեր 'ի գոյն լուսացին բոց ,

Սիրտք վառեցին սիրտք Հայոց ,  
Եւ մխեցին կուռ բազուկք ,  
Քան 'ի հնոց գեղարդունք ,  
Յազատութեան ասպարէզ ,  
Թափեւ շանթիս սատակալրէժ :

Օ՛ն փողեցէք , ելէք ՚ի դղորդ ,  
Աստուած է՝ ձեր առաջնորդ .  
Լուսյք , փառք ձեզ կարգան հրաւերք .  
Տեսէք անդուստ հարց ստուերք ,  
Անվրէժք առ ձեզ կարկառեն ձեռս :

Որդիք , խո՛ւլ հարցդ էք յաշերս ,  
Արիք ընդ ձեզ դաշնաւոր .  
Արդարութիւնն է հրզոր .  
Եւ զլայնալինն առեալ Հայկ ,  
Էջ քաջորդւոցն ՚ի բանակ :

Օ՛ն . . . ոյք ՚ի Հայս մըտին զերդ Բեւ՝  
Ուսան սա վայր է անել ,  
Ըզսուր մահու ած շուրջ պահպան ,  
Տէր յեղեմեանն Հայաստան .  
Ատէ . Ո զսոյն կոխէ սահմանս ,  
Մի ողջ դարձցի յիւրն ՚ի վանս ,  
Որ վասն Հայոց ած երկաթ՝  
Ինք պնդեցի յայն կաշկանդ .  
Եւ զոր կոխել դայր անաս ,  
Համբուրեցէ թողամահ :  
Արիք իմ քաջք , որդիք Հայկայ ,  
Քրիժուց ձեր օր հ ս ռ լ ս լ կայ

Երկինք ղինեալ են՝ դատել հուրք :  
Պրզծողսն ըղձեր երկիր սուրբ ,  
Թէ ղձեր խնդրեն արդ տէգ , աղեղ :

Տուք , թափեցէք կարկտի տեղ .  
Ցասումն արդար է ձեր չայք ,  
Անցեալ գոչէ , Մի՛ դըլայք ,  
Ազատութեան օր սա ձեր ,  
Նոցա՛ անտիւն հաս գիշեր :

Երկք , ծաւալ տուք բարձր յայեր :  
Քրիստոսապսակ ըղղբօշ ձեր .  
Զէնք ուր Փրկչին նշան կայ կուռ՝  
Միեւս անկցի կոր յաթուր .  
Օ՛ն զաջդ ՚ի վեր ձըգէք յերկին՝

Երդումըն տուք ահագին .  
Մի ձեռքդ իջցեն՝ մի սուսեր ,  
Դարձցի հանգչել ՚ի յաղդեր ,  
Ցորչափ դեռ շիթ մի վերջին ,  
Մընայ յերակս ոսոխին :

Անպա իմքաջք , օ՛ն անդր յառաջ ,  
Զեղ հովանի կայ սուրբ խաչ ,

Բըթեոցին յայն աէ գ.բ և փը.բին ,  
Զոր լարեոցէ թըշնամին ,  
Վա՛շ , ոյց հասին փառ.բ 'ի վըսեմ :

Թըռչիլ դահէդ յերկնից սեմ .  
Ահեակ ոտամբ գլուխս ոսոխս ,  
Թոպել գլըրել 'ի դըժոխս ,  
Մուծանել դաջն յերկնից սահման ,  
Աղատ թողեալ ըղչայատան :

ԽՈՐԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

---

## Բ Ա Ր Ե Կ Ե Ն Դ Ա Ն

Չե՛ն օրերս մեղ օր խնդու.թեան ,  
Օ՛ն եկէ.ք մեք միաբան .

Երբ արգէն եմք բազմած սեղան ,  
Երգենք զարնենք նուագարան :

Կազմենք երգոց ժողով սիրուն ,  
Նուագենք գինիս սյս պաշպաջուն .

Տես սիրուն սա փրփուր .  
Ընկեր դուն ալ լեցուր :

Ան , բարձրացուր գինւոյդ բաժակ ,  
Ահա իմն ալ բարեկամ ,

Ջարնենք բաժակ տանք երկար կեանք ,  
Սեղանակցացս հազար ամ :

Օրւարթու թիւն սա կը բերէ ,  
Գինիս արխրած սգիներէ .

Մարդիկ կ'ընէ զուարթ ,  
Աղէ ընկեր խմէ արդ :

Տեսա՞ք ուրեմն , ինտուժերես ,  
Թախձու թե՛նէդ ելար արդ .

Գինիս կ'ելլէ ուր ասպարէզ ,  
Խըրախու թեանց կըլլայ զարդ :

Հանգստ մանուկ լեցուր նորէն ,  
Սեղանակցացս համօրէն .

Արդ վայել է խնդալ ,  
Ընկեր պարսպէ մէջ մ'ալ :



## ՏԱՃԿԵՐԻՆ

Պիտ թաղըմ սատէ եիւրէք մուսսուն փաքի  
սիւպեան ,

Տէր ինամընէ կէլտին տէյէրէք եւ՛ Րահման :  
 Օրտու ապլի իլէ ալէմ հէմէ Միլլէթ սէրպէսթ ,  
 Պու նէ՛ ինսաֆ լէ նէ՛ նիյմէթ լէ նէ՛ լուլթ  
 ու ինայէթ :

Կիւն կիպի առլուուղու ան հիւսնիւ միւր  
 լէթքեանըն ,  
 Վէրտի ֆերմանը իլէ ճիւմլէ սէղիմէ տէրման  
 Էօմրիւնի շէվքէթինի պի աաէտ իլլէ եա  
 Րապպ ,  
 Տիւնէա տուրտուղ ճէ , տուրա Տէվլէթի Ա  
 լի-Օսման :

ՆԱԳԱՐԱԹ

Եէղտանի սիւպհան ,  
 Սէն իլէ իհսան ,  
 Եաչասըն պինլէր ,  
 ԱՊՏԻԻԼ ԱԶԻԶ ԽԱՆ :

ՅՐԻՆԵԱՅ Է. Գ. ԵՐԳԵԱՅ Մ. Յ.

ՀԱՌԱԶԱՆՔ

Սա տխուր վիճակ տարաբաղդ Ազդէա ,  
 Ինչ արիւն արցունք կըհասեցնէ ,

Նոր նոր յոյս տաճող Հայոցս աչերէ :  
Սա մեր անողորմ բազդին հարուածներ ,  
Քանի սրտառուչ հառաչանքներով  
Ճմլեն Հայ սրտերն , դող տան ու երեր .  
Ո՛վ Տէր , բաւ չե՛ն ինչ որ մինչև ցարդ :  
Կրեցինք սուր , ցու , աւար ու աւար ,  
Ո՛չ դու հաշտութեան ծիածան զուարթ  
Մեր սուրբ Հայրենեաց երկինք պարզեցեր  
Եւ դեռ չընտրեա՞ծ զՍրբեն Հայրենի  
Կը դրկես զմեզ Աստուծո՞ւ Հայրենի :  
Մէկ սիրտ , մէկ ոգի . ամենքս մէկ անուն  
Մէկ յոյս , մէկ հաւատք կըրող մէկ արիւն  
Մէկ տարագայի և անկախու ,  
Ինչո՞ւ չմիանանք ՚ի մի յող սիրոյ :  
Մի՛ զմեզ , Տէր , մի՛ պատժեր անաշտ ,  
Կեցուր քու շանթերդ բարկութեան ար  
դար ,

Ջիրար սիրելու , օգնել իրարու ,  
Կուխտեմք աւասիկ ուխտ սուրբ ՚ի սրտե՛  
Եւ խաղաղութեան թող դայ հրեշտակ ,  
Միութիւն և սէր պահել ՚ի սիրտ մեր :

Ս. Պ. Պ. ՓԱՌԱՅԱՆ

# Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

## ՎՍՄՆ ԱԶԳԻՆ


Տէր կեցո դու զհայս ,  
Եւ արա զնոսա սրայծառ ,  
Կեցո զհայս ,  
Զողորմու թիւնդ վերին  
Հաճեաց ձօնել նոցին ,  
Զի նովինք մարդացին  
Ապրիլ յաստիս :

Ով տէր մեր , տէր փու թա ,  
Զազգ մեր համայն փրկեա .  
Ի թշնամեաց :  
Կափա զաչս նոցուն ,  
Հատ զարմատոց զբուն ,  
Եւ զազգ մեր արտասուն ,  
Արա հզօր :

Ըջովդ համատարած  
Զազգ մեր արտահալած ,  
Փոյթ դումարեա ,  
Սնխարհ արարատեան ,  
Ի վայր մեր ճննդեան ,

Որ այժմ է սեփական  
Օտար ազգաց :

Ի քո լըեալ տեղի ,  
Զաթոս հայրապետի  
Մեր հաստատեա .  
Զերկարութիւն կենաց ,  
Հօր մեր աստուածազլեաց  
Շնորհեա պեաին մեր հարց ,  
Որ զմեզ հովուէ :



## Ի Ղ Ձ Ս Ր Տ Ի Ս

Տուք ինձ ճերմակ ճախրասրլաց ,  
Օղապարիկ երիվար .  
Տնւք , զի սլացեալ թուեաց 'ի բաց ,  
'ի Ձքնաղիկն իմ աշխարհ :  
Այն սլացայց յիմ Հայաստան ,  
Յերկիր յաւերժ ծաղկազարդ ,  
Ուր խոխոջան անմահութեան ,  
Գեաք եղեմայ ալեզարդ :

Ուր բարձրանայ խըրոխտ 'ի վեր ,  
Արարաան իմ օրօրան .

Ուր հօտ բուրէ խընկանուէր ,  
Հոտ զուարթարար հայու թեան :

Ուր եւ երբեմն պայծառացեալ ,  
Քաջ բանաստեղծք թորգտեան ,  
Քնարօք իւրեանց սսկեւարեալ  
Քեզդեղէին սրբաբան :

Մհ , ածէք ինձ զիմն սիգաքայլ ,  
Սիրտ իմ մաշեալ նուազի .  
Քանի անք են՝ զի չեմ տեսեալ  
Ըղհայրենիս ցանկալի :

Հայաստան իմ , սնւրբ Հայաստան ,  
Հողւոյս պայծառ յիշատակ .

Ի՛ր թողէր զիս 'ի բացական ,  
Վայրս դառնաշունչ , դժնդակ :

Մաշիմ մաշիմ ես աստանօր ,  
Ընդ աստեղօք հիւսիսի .

Հայիմ . . . աւանդ ես չքաւոր . . . . .

Ո՛հ , Հայրենիք քաղցրելի : . . . . .

# ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅ ՉԻՆՈՒՈՐ

Տարի մ'ալ անցաւ

Գնաց տահեցաւ

Այլ դու Հայ զինուոր

Թափառական մնաս

Յերկիր հեռաւոր :

Սուգ անմխիթար

Ձքեղ շուրջ պատած

Եւ դժբաղդ սիրտդ ալ

Յուսաբեկ եղած ,

Սուրդ ու քո տեղդ

Ժանգոտ վար դրած ,

Եւ զօրեղ արմուկդ

Տիգիդ յեցուցած ,

Դիր դու Հայ զինուոր

Քու յոյսդ առ Աստուած :

Վեր վերցուր դլուխդ

Տես , ով է կանգնած ,

Առ քեզ կ'ակնարկէ :

Ազատիչն Աստուած ,

Յաղթութեան պսակ

Իւր սուրբ ձեռքն բռնած :

Առ ուրեմն նիզակդ

Ոտք ելիր կանգնէ  
Եւ սրտիդ խորէն  
Անոր փառք խրկէ .  
Վհատիր մի՛ բնաւ .  
Քաջ զինուոր դու Հայ .  
Զի այսուհետեւ  
Էն Աստուած դժած  
Ընդ քեզ է յաւէտ .  
Յազգասէր մրցանող  
Կուտայ քեզ պսակ  
Բոլոր ճգանցդ փառք  
Յանկապին ազատութիւն :

Մ. Ս. Յ. ԱՆԳՐԷԱՍԵԱՆՅ

Ի ԲԱՐԵՒԱՍՏԻԿ ՎԵՐԱԴԱՐՁՆ

ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ

ԱՊՏԻԻԼ ԱԶԻԶ

ԱՐՔԱՅԻՆ

ՀԱՅԵՐԷՆ

Տանն Օսմանեան արև պայծառ ,  
Մեր Հահնչահ Աբբայն արդար

Դայ հասանէ զուարթ դիմօք՝  
Յիւրն 'ի յաթոռ բազմիւ փառօք :  
Լ'նդրէն դարձին թագաւորիս ,  
Ջրերկրառիթ նաւակասիս՝  
Այլք ալեաց խրախոյս կարդան ,  
Մեզ աւետեն կարկաչածայն :

### ՅՈՐԴՈՐԱԿ

Գոռան թնթանօթք , փայլակին վառօգք ,  
Բարասենն անիւք , կարկաչէն ալիք ,  
Հնչէ փող սրինդ , որոտան լերինք :

### ՀԵՏԵՒԱԿ

Շէվքէթլու Սուլթան ԱՊՏԻԻԼ ԱԶԻԶ խան ,  
Կեցցէ 'ի գահուն փառօք մշանջեան :

Լ'նասուացան սուինք զօրաց ,  
Բանակ ստուար քաջ զինուորաց .  
Աւագանին վսեմափայլ՝  
Յօսկեճամուկ համազգեստեալ :  
Թափորակապ և խմբովին՝  
Ջճովլեզերք գան գումարին .  
Սիրաք 'ի թնդօջ աչիունք 'ի ծով ,  
Ջոսիւք Վէհիս փարել անձիով :

ՅՈՐԴՈՐԱԿ

Եւէք ընդ առաջ Ինքնակալիս քաջ  
Ղեհք աւագորեար՝ արքունեաց կաճառ ,  
ՂՏէր մեր բարեփառ անէք յիւր տաճար :

ՀԵՏԵԻԱԿ

Շէվքէթիւ . . .

ԵՐԳԵԱՅ Ա. Յ.

ՅՐԻՆԵԱՅ Յ. Մ. Մ.

Բարձացն Տէր 'ի յերկրի զփառս Օսմանեան ,  
Զօգոստափառ մեր իշխան ,  
Պահեա որպէս բիբ աղան :

Պաշտպանեա զմեզ ընդ բազկաւ Արքայիս  
գթած ,  
Ինքնակալ մեր Ղեհափառ ,  
Կեցցէ՛ 'ի դահուն բարեփառ :

ՅՈՐԴՈՐԱԿ

ԱՊՏԻԻԼ ԱԶԻԶ ԽԱՆ արքայ Բարեխնամ ,  
Պսակ Օսմանեան հզօր Պետութեան :  
Հատու արա Տէր՝ զսորին սոսսեր ,  
Բազուկ թշնամուցն եղիցի նկուռն :

ՅՐԻՆԵԱՅ Յ. Մ. Մ.

ԵՐԳԵԱՅ Ա. Յ.

Փարատեցաւ երկնից կապոյտ ,  
Ակն անմահին ակնարկեաց .  
Յարին Հայկայ սերունդք ընդ փոյթ ,  
Հընչել նուագս օրհնութեանց :

Խրախոյս Հայկազունք ,  
Յաւերթ փրկութիւն .  
Օ՛ն երգենք , մանկունք ,  
Սահմանադրութիւն :

Եւամանակին 'ի խոր յատակ ,  
Արցունքն Հայոց սուղեցան .  
Լւեաց ողբոց դառն ազաղակ ,  
Սըգոյ ծիծաղն աստ փոխան :

Խրախոյս . . .

Եւկն էին սրտեր թափուր ,  
Ճակատն՝ յամօթ ազգութեան .  
Քնալ . նուազեալ ժայթքեաց հուր ,  
Անյոյսք յանկարծ Հայք յարեան :

Խրախոյս . . .

Որ 'ի կամարն աստեղազարդ ,  
Հզօր բանիս ինքնիշխան .

Մեզ տուողին շնորհայն առատ ,  
Զաւուրս հայցեմք տուր երկայն :

Խորին մաղթանաց ,  
Ուղերձ միաձայն ,  
Առ պետն Օսմանեանց ,  
Ապտիւլ Աղիզ Խան :

ԵՐԳԵԱԼ Ի ԴԻՄԱՅ

Ա. ՀԱՄԱԶԴԱՅԻՆ ՏՊԱՐԱՆԻ

---

## Ի Մ Ա Հ

### ԳԱՖՐԻԷԼԻ ԵՐԱՆԵԱՆ

Քու ցուրտ շիրմիդ վրայ ուր վանհ . կայ թու  
զուած ,  
Աւոյգ հասակդ և սրտիդ հուր երկնասլաց .  
Չէ թէ միայն սփռենք ծաղիկք լի ձեռքով ,  
Չէ թէ միայն արցունք անհուն ցաւերով :

Այլ և ձօնենք վշտահար ,  
Երգերն անոյշ Քընարին .  
Որոյ փափուկ թելերը ,  
Դու հիւսեցիր սրտագին :

Այն նրա գնեցին որ քու բերնէդ սրլացան ,  
Երթալ յողջոյն աւերակաց ցիր և ցան .  
Լըսեց զանոնք ՚ի դամբանացն Հայրենի ,  
Եւ սփոխեցաւ Հայաստանեայց վեհ Ոգի :

Սէ զանոնք և դու ալ ,  
Մահուան քունէն արթնցիր .  
Այն քնարին թևերով  
Յանմահութիւն ե՛լ թռի՛ր :

Մ. ՊԵՏԻՔՍԱՇԷԱՆ

---

## Ա Ռ

ՍԷՐ ԻՄ ՀՍՅԱՍՏԱՆ :

Օտար երկիր թափառած ,  
Անքուն աչօք կամ ցաւած .  
Իմ սիրելւոյս կարօտցած ,  
Չկայ մէկն որ կարեկից  
Ըլլայ ցաւած իմ սրտիս :

Ով հայրենիք իմ սիրուն ,  
Ահ , տոչորէ զիս անունդ .  
Արդեօք պիտի չքտեսնեմ  
Քու լուսափայլ զուարթ դէմքդ :

Հառաջանք բիւր 'ի սրտէս ,  
Արտօսք հեղում աչերէս .  
Իմ սիրելւոյս կարօտցած ,  
Չեն ինձ երբէք մըխիթար  
Ոսկի պատիւ սէր օտար :

Ըյլ ես անոր սիրուն զոհ ,  
Կ'ընեմ զամենքն սրտով զոհ .  
Միայն թէ յոյս մ' ունենամ ,  
Իմ սէրս տեսնել միանգամ :

Ս. Պ. Պ. ՓԱՒԱՋԵԱՆ

---

## Դ Ա Շ Ն Ա Կ

ԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑՄԱՆ

ՀԱՅԿԵԱՆ ԹԱՏՐՈՆԻՆ

ՈՐ Ի ԽԱՍԳԻԻՂ

(Մ'ն մեր նախնի դարուց կարգամբ հըրաւ էր ,  
'Նախնի դափնեաց՝ սուրբ ձեռաց հիւս պսակօք .  
Մեր հայրենի փառաց մանկուհին անվեհեր ,  
Գան յերևան գեղեցկահիւս գիսակօք :

Գունդ 'ի գունդ ,  
Սիրտք 'ի թունդ :

Եւանակաց՝ անցից՝ վսեմ կրթութարան ,  
Եւ նոր դիպաց՝ նոր զգացմանց կարգադիր :  
Ահա մեզ նոր՝ արդ կը կանգնի տեսարան ,  
Թէ՛ կրթութեան՝ թէ՛ հաճոյից արգադիր :

Հոս ձայն կուտանք մենք ծաղկալից  
Հայաստանի սուրբ դաշտերուն .  
Եւ կը ցրուի սրտիս թախիժ ,  
Երբ հայրենեաց յիշեմք զանուն :

Ո՛վ սուրբ Հայաստան  
Փառաց օթեան ,  
Որբ զաւկրներդ հոս  
Քեզ պիտի ողբան :

Հոս երազ՝ անմահ ,  
Քո նախնի փառաց .  
Մեզ պիտի վառէ  
Ի սէր հայրենեաց :

Մայրիկ Հայաստան ,  
Փառաց գերեզման .

Որք որդիքդ՝ այրիդ  
Հոս սլիտի ողբան :

Մէկ մայր մ'ուենինք մերն Հայաստան և հոգին  
Եղբայրութեան սրտերնուս մէջ կը սոնգայ .  
Օ՛ն չարագէտ մեր բաղդն ու սէր կաթոգին ,  
Հոս միութեան ուժոյն ընենք ենթակայ :

Եւ ձեռք , ջանք ,  
Միմեանց տանք :

Բնդհանրական սէրն և հոգին հայութեան ,  
Մեզ մուսայից օթեանիս նուիրի .  
Հնչեն հայ փառք՝ անուն՝ նոր՝ սուր յաւիտեան ,  
Նորէն Սիսակ , Գեղամ՝ի կեանս հրաւիրի :

Կը վերածնին հոս ոսկի դարք ,  
Հոս տեղ մտքեր կրնան սրուիլ .  
Կը շտկուին հոս անկիրթ բարք ,  
Հոս և ծիծաղ կրնայ դտուիլ :


Ով սուրբ Հայաստան ,  
Քաջաց օթեան .

Հոսիկ որդիքդ հոն ,  
Գիւրիւղդ պիտի գան :

Հոս ոճ Հայ լեզուին ,  
Նոր զարդ՝ ձե կառնու .  
Կեանք անմեղ և՛ երկինք ,  
Կազդեն սրտերու :

Քաղցրին Հայաստան ,  
Մեր հարց օթեան .  
Ծոցդ որդիքդ որ գան ,  
Ե՛ր պիտի ողբան :

Գ. Գ. ՉԱԿՐՆԱՏՆԵՆ






ԳՐԱԳՐԱԿԱՆ

ԿՐԻՍՏՈՐՈՅԷՆ ԿՈՏԱՅԷՆ

# ՅԱԽԵԼՈՒԱԾ



Ի ԲԱՐԵՆՇԱՆ ՕՐ

ԻՆՆԵՐՐՈՂ ՏԱՐԵԴԱՐՁԻ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ն. Ո. Յ.

## ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ



### Ե Ր Գ

Ողջոյն քեզ, սիլ երջանիկ Օր,  
Որ կը ծագիս մեզ ի յերկնից լուսաւոր .  
Քեզ Հայկազունք կրօսդասէին մեծայոյս,  
Ե՛կ տալ նոցա կեանք և լոյս :

Խաւանք օրեր, օրեր արեան,  
Շատ մեր թըշուառ հայրեր ս'չ շատ ունեցան .  
Մեզ երանի՛, երկինք բաժին մեզ տուին  
Ըզքեզ, սիլ Օ՛ր կենսատժին :

Օր՝ որ 'ի թեւ բոցափետուր  
Բերիր Հայոց ազատութիւն երկնատուր ,  
Եւ ժանգահար տըգիտութեան չըղթաներ  
Մեր ոգիէն խըզեցեր :

“ Ամենք՝ եղբայր էք հաւասար ,  
Մեզի պատգամ՝ որոտացիր տիրաբար ,  
Հայ երակաց մէջ վառեցաւ նոր աւիւն ,  
Հալածեցաւ բըռնութիւն :

Մեզ վեհ Սահման բերիր Պարտքը ,  
Եւ իրաւունք մեզ ճանչցուցիր մեր փառքը .  
Արթընցան Հայ ոգիք այս մեծ բառերու  
Ըզգալ իմաստ կենսատու :

Հայն ինքըզինք և իւր պատիւ  
Եթէ ըզգաց՝ և այն է քն՝ շնորհիւ .  
Բարձր ըզգացմունք , որ նոր իրեն տըւաւ յոյս  
Եւ ազդութեանց մէջ խրախոյս :

Իու ըզթեւեր քո լուսահեղ  
Տարածեցիր մեր խաւարին մէջ ահեղ ,  
Ըսիր . “ Մուցէք անցեալ ողորմ՝ ձեր պայման ,  
Դարձուցէք աչքդ ասպագան :

Ապագան ձեզ ծիրանազարդ  
Ողջոյն կուտայ, յայն նայեցէք ոգեզուարթ,  
Լալու սովրած այդ աչուընէր սրբեցէք,  
Յուսոյ ձեր սիրտը բացէք :

Ձեր հեծութիւնք բազմադարեան  
Յաւոց հովտէդ մինչ 'ի բարձրեալն ամբարձան  
Ջուարթնոց երգոյն մէջ ձեր հառաչ խառնե-  
ցաւ,

Եւ Տէր 'ի գո՛ւթ շարժեցաւ :

Լինարկեց Ն'առ Հրեշտակն Հայոց  
Աւետաւոր ձեզ իջանել սիրաբոց,  
Մէկ ձեռք սրսակի, միւսով բերել լուսազգեաց  
Ըզ Դաշնագիր ձեր կենաց :

Հայեր, ելէք զըւարթադէմ  
Ողջունեցէք ըզձեր Հրեշտակ սիրաձեմ,  
Նորա թեւեր Մասեաց սարէն ծածանի  
Հայ ազգութեան հովանի :

Սըրտէդ լըքումը մերժեցէք,  
Հայ ըլլանուդ պատիւնն ո՛հ լա՛ւ հասկացէք,  
Ձեր իրաւունքն է սուրբ, ոգւնով սիրեցէք,  
Ձեր պարտք վըսեմ է, լըցէք :

Վեհ Պարտք, ձեր սուրբ կրօն պաշտել,  
Եւ Հայրենիք քան զամենայն վեր սիրել,  
Իրեն տալ զոհ հանգիստ, պատիւ, մեծու  
թիւն,  
Մինչեւ անգամ զԵսութիւն :

Հայ կրօնից նըշանն է Մէր,  
Հայ Օրինաց գիրք ՄիՈՒԹԻՒՆ տայ պատուէր.  
Օ՛ն դուք Սիրոյ և Միութեան զինուորներ  
Զարկէք նախանձն և բզհեռ :

Խաչակրութիւն մի Հայկական  
Հաստատեցէք դէմ անմիաբանութեան .  
Ով որ ձեր հետ այս սուրբ մարտին չէ կրցորդ՝  
Նա չէ Հայոց ժառանգորդ :

Հայեր, այսօր վրկայ երկինք,  
Ուխտեմք սիրել իրաւունք, Պարտք, Հայրենիք,  
Գոչեմք . Մեռնիմք մեք, բայց կեցցես  
ՀԱՅՍՏԱՆ

Կեցցէ ԱՊՏԻԻԼ ԱԶԻԶ ԽԱՆ :

24 մայիս 1869 .

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ-ՊԷՅ

ԽՂՃՈՒԿ ԶԷՆ

Ընցաւ տարին , Հայոցս էլ փառք ընցաւ հիեա ,  
Դրաստի սարէն դարուն յետին բարիեւ ետ .  
Կարիճքն առան զէնքերն իջան տակ հողին ,  
Վախ մըր գլխուն սեւ՝ մուր էկաւ էն օրին :

Հայու աչքիէր թող միէզ լան .  
Ախ միէզ լան , վախ միէզ լան :

Հայեր՝ դերի էղանք բաղդին անողոք ,  
Աստուած՝ հրիեշտակ՝ մարդ չլսիէց մըր բողոք .  
Մըր լալերու ձէն ծածկուաւ Տարնոյ տակ ,  
Մշու դաշտիէր պահին սրտիցս հառաչանք :

Հայու աչքէք թող միէզ լան ,  
Ախ միէզ լան , վախ միէզ լան :

Մըր աշխարհի քակվուկ շէնքերու ներքեւ ,  
Նստուկ մամ՝ պապ՝ ճժեր մանցին անարեւ .  
Նօթի՛ տկոզ , ախ չկայ տիէր տիրական ,  
Անդ ութ քրտու զլմին եղած էնք խուրպան :

Խարիս աղբերք թող միեզ լան .  
Ա՛խ միեզ լան , վա՛խ միեզ լան :

Մատղաշ աղջիկն՝ ու հարս հալաւ մի չունի ,  
Որ իր մարմին անօրէնին դէմ ծածկի .  
Էնպէս դրած ձեռքերն աչից՝ ամջրկոտ ,  
Գու՛թի՛ Սիրու՛ Ողորմու՛թեան է կարօտ :

Հայ աղջիկներ թող միեզ լան ,  
Հայու հարսներ թող միեզ լան :

Կեցէք՝ Մշու դաշտի քամիք , քիչ մ'կեցէք ,  
Մըր ողբաձէն բարիեւն էլ ձըր հիէտ տարէք .  
Ու իէք ընցնիք ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ կամարից ,  
Հսնկուց ըսէք խարիս մը Հայ աղբերից :

Մըր արտըսուհիք սրբիէն թող մըր աչվրնուց ,  
Քընդի տատէն էլ չըլանիք էլ չըլանիք :

1870 մայիս 24

---

Հայ աղջիկ

# ՉԱՅՆ

## ՀԱՅՐԵՆԵԱՅ

Օտար ամուսնք ցրուած 'ի սփիւռս ,  
Ով սիրասուն իմ զաւակունքս ,  
Ձեր հայրենիք տրտում տըխուր ,  
Ձեզ կը գիտէ արցունք յաչկունս :

Իմ տաճարներս սէր կը կանգնէ ,  
Իմ նախատինքս արիւն սրբէ :

Ոհ այս քանի տարի անցաւ ,  
Ուխտեցիք ինձ սէր , յոյս և կեանք .  
Ամուլ մ'ըցում , հեռ վիշտ և ցաւ ,  
Այս իմ բաժին , այս է ձեր ջանք ,

Իմ տաճարներս սէր կը կանգնէ ,  
Իմ նախատինքս արիւն սրբէ :

Հնոց՝ ով դուք , որ օտարին  
Փառաց պատուոյ էք խնկարկու ,  
Անմահութեան դրոշմ , սէր ազգին ,  
Նախնեաց բրտինք ծախած չըբոյ :

Իմ տաճարներս դուք չէք կանգնեցր ,  
Իմ նախատիներս դուք չէք սրբեր :

Կանցնին այսպէս անթիւ օրեր ,  
Ես յաւերակս նստած յերեր ,  
Իբրեւ այրի հրոյ մատնած ,  
Կոյս ոյր օժիտն է անարդուած ,

Գոչեմ տաճարս ո՞վ կը կանգնէ ,  
Իմ նախատիներս ո՞վ կը սրբէ ,

Ե. ՄՈՒՐԱՏԵԱՆ

---

ԱՐՏԱՍՈՒՅ ՀԱՅ ՄԱՆԿԱՆ

Ի ՄԱՀ

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՎԱՐԴԱՆԱՅ

---

ԴԻԻՅԱԶՆԵՐԳՈՒԹԻԻՆ

Ի այգէք սրտանիք և կուսանք Հայոց ,  
Մճգ առնու Մասիս , և Հայոց լեռներ .  
Զի ահա՛ մահուան անգութ զերանդի ,  
Որբացեալ թողու զաշխարհ հայրենի . . . :

Հայոց աշխարհիս քաջ բազկաւ որդին ,  
Փռուած է Մասեաց շուքերուն ներքեւ :  
Շնչասպառ լանջացն հառաջանք յետին ,  
Գոչէ նա Աստուած , Կրօնք ու Հայրենիք :

Իր սրտահառաչ ձայնից զուգակցին ,  
Ահագնատեսիլ գբոշակակիրներ ,  
Սպիտակազգեաց չորս դին դեզերին ,  
Գերեզմաններէն հազար դիւցազունք . . . :

Եւ արիւնլուայ մարմնոյն առնթեր ,  
Սեւ քօղն երեսին լուռ մունջ շուարած ,  
Չեռն 'ի ծնօտ Ղեւոնդ դաղանի կ'արտասուէ ,  
Կը ճմլի Յովսէփ ցաւօք տրտմազգած :

Ըրեւն ու լուսին ամպի տակ փակուած ,  
Լուսոյ ճակատնին 'ի մութ են ծածկեր ,  
Մասեաց արձագանդք կոծեն տրտմազին ,  
Սիրուն Հայաստան սեւեր է հագած :

Հրեշտակն Հայրենեաց տրտում թախծազին ,  
Իջած է այսօր Հայոց գերեզման ,  
Արիւն արցունքով տասյաններ ցողէ ,  
Քարդանայ բերնէն խօսք մը կ'սպասէ :

Իրուժանքն Ղաասկ վատ քան զՎայեն ,  
 Պատրաստ Հայրենեաց տալ դառըն հարուած  
 Սրբոյն Գրիգորի որդւոյն հարազատ ,  
 Փրշանիւթ պսակ հիւսեց Վարդանայ :

Եղչեցան երկինք ընդ սեւ ոճիրն այն . .  
 Լըռեցին անմահ կաճառք դիւցազանց .  
 Եւ սրտաբեկեալ Հայոց զաւակներ ,  
 Ի՛ զէն կ'դիմեն 'ի վրէժ լուտանաց :

Մասեաց ծիածան 'ի մութ կ'սքողի ,  
 Մութ տիրէ Հայոց սրտեր հաւասար .  
 Յօղէ տրտմութեան առատ անճրեւներ ,  
 Հասցճէպ կ'խուսեն պարերն ու հրճուանք :

Բօթ գուժեց յանկարծ թէ մատնիչք գուն  
գունդ

Գան ասպարափակք և ըսպառաղէն .  
 Ո՛վ իմս Հայրենիք արեանըդ կարօտ ,  
 Կատղած գազաններ 'ի զէն կ'դիմեն :

Եւ գալարելով վիշապանըման ,  
 Կ'վազէ Մատնիչն աշխարհը քանդել .  
 Կործանել տենչայ զԱթոռ եւ Սեղան ,  
 Եւ յաւերս նորա իր դահը կանգնել :

Տղար ճիշ բառնան , կ'դողան մայրեր . . .  
Ամենքն ալ կ'իյնան ի' ծոց սուրբ Փրկչին .  
Յառաջ մատչելով ծերերն ալեպսակ' ,  
Կրկնեն պատանեաց ըզհին յաղթանակս :

Իսկ անդրդուելի պատուարն Հայկազանց ,  
Ընտիր զօրապետն ախոյեան կանդնած .  
Ահա թշնամին գոչէ անկրդով ,  
Հոն կ'սպասէ մեզ Մահ կամ Յաղթութիւն .

Ընուշ զաւերներ՝ սիրուն մանկըտիք ,  
Ալէկ է մեռնիք , արդ ձեր երկրին մէջ .  
Քան թէ այն դաժան վայրի գազանին ,  
Անդու թ ճիրանաց ճարակ փշրուիք :

Փութացէք հասլն , չ'անցնի ժամանակ ,  
Թողունք այս տեղեր վատեր չը հասած .  
Բարէ տխրութեան դառն վայրկենիս ,  
Ըսաւ ու սքօղեց դէմքն տխրամած :

Եւ յիշատակներ յառնելով ՚ի սիրտ ,  
Իջուց այտերէն արտասուաց հեղեղ .  
Օն առէք խրախոյս ն առաքինիք ,  
Ժամ է արդ արեան . . . եւ ահեղ վրիժուց :

Լնօրէն Մուշկան դողաց դարկադէմ,  
Երբոր բանակին ցրուիլը տեսաւ .  
Պահեստի զօրքերն օդնութեան կանչեց ,  
Եւ յօրինուածովք սերտ ճակատեցաւ . . .

Հոն ընկաւ Վարդանն ՚ի խռանս սուսերաց ,  
Մխուեցաւ սողպասն արի վէհ սրտին ,  
Կարծես կը լողար արեան ծովին մէջ ,  
Պարսիկն ահաբեկ կար անսր տեսքէն :

Իսկ նա հեծելով կարեվէր սրտիւ ,  
Ազգատեաց չարին Վասակայ դործեր .  
Գոչեց Հայրենիք . . Հայրենիք սիրուն ,  
Առ զվերջին իմ շունչ . . եւ զվերջին ողջոյն . .

Քաղցրիկ Հայաստան . . Վարդանայ երկիր  
Մի տար ոսկորներս ՚ի ձեռս օտարին . . .  
Ծոցիդ մէջ հանդէիմ՝ Մայր իմ Հայաստան  
Մեռնիմ թողլով սիրտս Հայ զաւկըններուս :

Գողցես արեւէ խամրած մանուշակք՝  
Կիսաբաց աչօք գետինը բռուած . . .  
Դարձուց քաջ Վարդան աչք Հայ զաւակաց  
Զըրկուած տեսաւ իրենց արեւէն :

Ղմկեցան աղիք հսկային Հայոց ,  
Ընդ ասեղ տեսիլ տիրապատ քաջաց . .  
Կարկառէ՛ Երկինք , գոչեց , Ձեռն Հայուն ,  
Կամ կարճեցուր կեանքս , ա՛ռ շունչքս ազատ :

Շ առաջիւնք դինուց , հարուանձք սուսերաց . .  
Մոլեգնեալ զօրաց ասեղազոչ ձայն . .  
Հողմերէ դիզուած փոշոյ կարմիր անսլ . .  
Դիակներէ բլճւր . . . Այս էր դաշտն ասան . . :

Հին , ասան դիւցազն անվեհեր Վարդան ,  
Ընդունեց պսակ երկնային փառաց . .  
Եւ հրեշտակներու 'ի թեւս ապաստան ,  
Երկնասլաց Հոգին այսպէս կ'իսուէր . . . :

“Լ՛ւլ մնաս բարով , Հայոց աշխարհիկ . . .  
Ահա՛ ես կ'երթամ ս'իլ իմ հարցս Երկինք . . .  
Կռուեալ քաջաբար՝ անվեհեր մեռնիմ ,  
Այս լսի է իմ ցաւ՝ որ Քեզմէ զատուիմ . . . :

Լացէք պատանիք , օրիորդք Հայոց ,  
Մոլգ հագնի՛ Մասիս , սո՛ւգ մտէք լեռներ . . .  
Ո՛հ կ'իթողում Քեզ անուշ Հայրենիք . . .  
Ահա՛ կ'պատէ զիս մահուան բստուեր . . .

Ո՛վ կրնայ չ'ողբալ բաղդին այս հարուած ,  
Մթնցաւ արեւս . . պատեց զիս խաւար . . .  
Ուրացող ձեռաց ճարակ պիտի մնայ ,  
Վարդան զուգաբաղդ ընդ Հայաստանի . . . :  
Թո՛ղ լայ տխրաձայն ողբանուադ կարապ ,  
Ողբա՛ քաջազնիս ազիտղորմ մահ . .  
Ա՛ռ երկինք թշուառ Հայուն վերջին շունչ . . .  
Ա՛ռ քաջիս սրտիկն անարժան քեզ նւխա . . . :  
Բաւ ու դոցեց վեհ արտեւանունքն ,  
Յաղթանակին ծոցն ինկաւ լի փառօք . .  
Թաթխած մատու ընե՛րն կրակ արեան մէջ ,  
Խաչանիշ կնքեց իր լանջքն և ճակատ . . . :  
Մեռա՛ն . . . մեռցնելով անթիւ Վասակներ . .  
Անմահ Յիշատակ թողլով դարերու . . .  
Եւ Մասեաց ՚ի ստոր մեծասասան Ստուեր՝  
Դեռ կ'Թափառի Պաշտպան Հայերու . . . :  
Ս. ՍԹՄԱՅԵԱՆ

---

Ս. Ռ.

ՄՍՅԻՆ ՀՍՅԱՍՏԱՆ

Երկիր քաջազանց , քանի՛ սուգ աչեր ,  
Յօղեցին լալեօք քու քաղցրիկ հողեր .

Քանի լուռ հառաչք սրբախց խորերէն ,  
Անձկաւ քեզ թըռան օտարաց երկրէն :

Դառն է , ո՛հ զաւկաց մօր գրրկէ կորզիլ ,  
Եւ դառնագոյն մօր անզաւակ ծիւրիլ .  
Այլ այն ձեռքն որ քեզ տասպալեց դահէդ ,  
Կարող է գըթով կանգնել անկումէդ :

Քամեցիր լըռիկ 'ի սպառ դառն բաժակ ,  
Լըրաւ Երկնից կէտ ցամառն վրիժակ .  
Տես սիրուն որդիքդ ձեռք ձեռքի տըւած ,  
Ինան յառաջաքայլ ուժով օրինաց :

Համբոյր սուրբ 'ի շուրթն , սէր վառ 'ի սրտի ,  
Իմեն սիրտիւ քեզ ո՛չ յուսով սնտոի .  
Թէ սոյն ձեռքն որ քեզ տասպալեց դահէդ ,  
Կարող է գըթով կանգնել անկումէդ :

Բ. ՆԱՍՐԵԱՆ

---

Ի ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

ՍԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1. Ոչ այնպէս հրճուի յորբանի մանկիկ ,  
Ի ծուծ մայրենի ըստեանց ուռուցիկ .  
Եւ ոչ այնպէս զուարթ 'ի տես սիրելչոյն ,  
Բարախէ կարօտ սիրտ կուսին զգայուն :

Արդէս մեք Հայերս որք մօրէ քաղցրիկ ,  
Դարերով անդու թ բաղդին խաղալիկ .  
Մերձ 'ի շունչ յեաին ողւով սրտաթունա ,  
Տընձագին խայտամք 'ի քոյ վերածնունդ :

Ավ յոյս միակ դու Հայուն ,  
Սահմանադրութիւն .  
Ի միութեան և 'ի սէր ,  
Կեցցես աներեր :

2. Քեւ Հայոց լերինք դաշտեր արգասու ,  
Ծիծաղին 'ի լոյս պայծառ արևու .  
Նեկդ դաւ և զրկանք նախանձու ոգի  
Իրաւանց սիրույ քեւ ետուն տեղի :

Եղբայր արդ եղբօր ուխտ դընէ հաստատ ,  
Սիրալիր շըրթամք համբուրէ ճակատ .  
Քեզմով միշտ ապրիլ և քեզմով գործել ,  
Ըզբեզ իր խըղճին առաջնորդ ունել :

Ավ յոյս . . . . .



0015823



2013

« Ազգային գրադարան »



NL0015823

